Данный метод возник еще в начале прошлого столетия в США. Сначала его называли *методом проблем*, тем самым подчеркивая его главную отличительную особенность от всех остальных: постановка конкретной проблемы и направленность на решение этой проблемы. Основной прогрессивной составляющей этого метода являлся тот факт, что в нем предлагалось строить обучение не на пассивной основе слушающего и усваивающего учащегося (как раньше), а на активной основе, то есть через целенаправленную деятельность учащегося, соответствующую его личным интересам именно в этом знании. Отсюда следует, что чрезвычайно важным аспектом метода проектов является личная заинтере-

сованность учащегося, его уверенность в том, что именно приобретаемые в процессе учебы знания могут и должны пригодиться ему в жизни. Для этого, прежде всего, необходимо обращение к значимой и значимой для данного контингента проблеме, взятой из реальной жизни, для решения которой необходимо приложить не только уже имеющиеся знания, но и новые умения и навыки, которые еще предстоит приобрести.

Довольно подробно изучением возможностей использования метода проектов в обучении иностранному языку занимается Е.С. Полат. Главным преимуществом данного подхода к обучению, по ее мнению, является реорганизация всего учебного процесса, а именно: перенос акцента со всякого рода разрозненных упражнений, даже самых интересных, на активную мыслительную деятельность как учащихся, так и преподавателей⁴.

В процессе работы над проектом учащиеся целенаправленно овладевают определенными умениями и навыками коммуникативной деятельности в конкретной ситуации. Они учатся работать с тематически подходящими иноязычными текстами (выделять главную мысль, вести поиск нужной информации и аргументации, анализировать и обобщать информацию и т.д.), своевременно, к месту использовать выделенную информацию. В процессе создания проекта происходит и творческое осмысление конкретных речевых ситуаций, соответствующих их лингвистическим знаниям и языковым потребностям, а также непосредственное общение учеников с учителем и друг с другом на иностранном языке. Учащиеся овладевают умениями слушать и слышать собеседника на изучаемом языке, вести дискуссию, высказывать свою позицию, доходчиво аргументировать ее, отстаивать свою точку зрения и т.д.

Процесс изучения иностранного языка – это обучение способам деятель-

ности на данном языке, осуществление коммуникации во всех видах речевой деятельности. Именно поэтому одной из основных целей обучения иностранному языку является обретение коммуникативной компетенции. Конечно же, коммуникативная компетенция может быть сформирована лишь как одна из обязательных компетенций, но с самого начала изучения иностранного языка важно осознание того факта, что язык – это элемент культуры. Он развивается и функционирует в рамках определенной культуры, отражает ее ценности и ментальные особенности данного народа, следовательно, знакомство со структурно-функциональными особенностями языка – это в том числе и знакомство с особенностями функционирования языка в данной культуре, т.е. речь идет о необходимости формирования страноведческой компетенции. Предметом речевой деятельности является конкретная мысль, выраженная средствами конкретного языка, ибо язык – это средство формирования и оформления мысли.

Таким образом, целью обучения в образовательных учреждениях всех типов и уровней является не система языка, а иноязычная речевая деятельность как средство межкультурного взаимодействия.

При всей общности черт проектной методики для всех областей системы образования проекты, используемые в процессе преподавания иностранных языков, имеют некоторые отличительные черты, и прежде всего потому, что они предполагают:

1) использование языковых знаний в ситуациях, максимально приближенных к реальным;

2) приоритетность групповой работы;

3) увеличение доли самостоятельной работы каждого учащегося в зависимости от его способностей и интересов;

4) отбор языкового материала, видов

заданий и последовательности работы только в соответствии с темой проекта и его целью;

5) повышение роли презентационного этапа, на котором происходит презентация и обсуждение продукта (результата) проектной деятельности учащихся, защита и оценка реального продукта данного проекта и др.

Главной целью работы над проектом, конечно же, является приобретение новых языковых знаний, навыков и умений их правильно использовать в конкретных речевых ситуациях, но, тем не менее, результат проделанной работы должен быть представлен в таком виде, чтобы его могли оценить другие.

Иными словами, итогом проектной деятельности является презентация и защита ее конкретного продукта. Конечный продукт проектной работы может быть представлен в виде письменного или устного отчета, статьи, видеосайта, выставки или в каком-либо другом виде. Этот этап является результирующим, итоговым, поскольку авторы проекта во время своего устного выступления представляют и обосновывают актуальность, значимость, новизну и логику своего проекта, отвечают на вопросы слушателей на иностранном языке, а это предполагает не только владение определенной суммой формальных знаний в области лексики, грамматики и фонетики иностранного языка, но и умение выбирать подходящие в данной ситуации языковые средства, умения выстраивать свою речь логично, последовательно, убедительно. На этом же этапе оценивается целесообразность и актуальность разработки выдвинутых проблем, их соответствие изучаемой тематике; корректность использования конкретных методов исследования и способов обработки полученных результатов; обоснованность представленных результатов и принимаемых решений, умение дока-

зывать правильность своих заключений, выводов; качество оформления результатов проведенного проекта; умение отвечать на вопросы оппонентов, аргументированность ответов.

Положительная роль проектной деятельности в процессе обучения определяется тем, что в ходе работы над проектом ученики реализуют свой интерес к конкретному предмету исследования, расширяют уже имеющиеся знания о нем, совершенствуют свои умения работать и в определенном направлении, и в сотрудничестве с другими членами группы. В процессе работы над проектом учащиеся в конкретной ситуации решают конкретные задачи, формируют различные составляющие общей коммуникативной компетенции. Кроме того, они представляют результаты своей работы на иностранном языке, что позволяет им и показать свой (повышенный, усовершенствованный) уровень владения языком.

Немаловажно отметить также и тот факт, что через проект можно раскрыть творческий потенциал учащегося, повысить уровень интереса к предмету, показать реальные возможности межпредметных связей, создать условия для личностно-ориентированного обучения. Но даже в случае проработки массы разнообразного теоретического материала, на практике обязательно вскрываются «подводные камни» проектного обучения, одним из которых является место и роль оценивания результатов проектной деятельности участника проекта, что, впрочем, является проблемой любой формы учебной деятельности.

Все перечисленные выше теоретические характеристики метода проектов особенно важны на этапе вузовского обучения, где очевидны и конкретная специализация, и более осознанный подход к изучению иностранного языка, и возможность определения конкретной цели и путей ее достижения. Применение ме-

тода проектов особенно важно для формирования личности будущего педагога, который сможет применить все полученные знания в своей практической деятельности⁵

Таким образом, использование наряду с другими передовыми технологиями обучения корпусных методов и метода проектов позволит учащимся не только более эффективно и углубленно изучить английский язык, но и осознать свою причастность к современным педагогическим, методическим и лингвистическим инновациям, понять, что использование тех или иных новых методов преподавания и компьютерных технологий в настоящее время представляется интересным, эффективным и уже обязательным процессом, который максимально приблизит его учеников (как и его самого) к реальным жизненным ситуациям и проблемам.

“Корпусные методики” хорошо сочетаются с традиционными методами преподавания и, по свидетельству специалистов, являются самым перспективным, особенно в плане становления навыков самостоятельной работы и самоконтроля, чему придается особое значение в современных методических концепциях. К тому же для Армении, где еще сравнительно мало учебных разработок, переведенных на армянский язык, очень важно обращение к первоисточникам через Интернет, к оригинальным контекстуальным образцам современной английской речи без учебных переводов, которые чаще всего представляют не контекстуальные, а стандартные варианты, и без преподавателей, которые обычно за неимением времени и возможностей работают по учебнику в расчете на среднего студента и не учитывают индивидуальных способностей и потребностей всех учащихся группы. Справедливости ради следует отметить, что даже в странах, имеющих давние методические и переводческие традиции (Англия,

Россия, Швеция, Франция и т.д.), обращение к данным различных лингвистических корпусов в настоящее время считается просто необходимостью.

Термин *корпусная лингвистика* как наименование раздела языкознания, который занимается разработкой, фиксацией и использованием совокупности текстов (лингвистических корпусов), был создан и введён в употребление в середине XX века. Первым большим компьютерным корпусом считается Брауновский корпус (*Brown Corpus*, BC), созданный в 1960-е годы в Университете Брауна и содержащий 500 текстов (по 2 тыс. слов) на английском языке. Он постепенно расширялся и вскоре включал уже около 1 млн. Текстов, что послужило эталоном для создания корпусов на других языках.

Наличие в интернет-пространстве большого количества текстов в электронной форме существенно облегчило задачу создания больших корпусов размером в сотни миллионов слов, но не ликвидировало множества уже определенных создателями проблем: отбора текстов, снятия возникающих при этом проблем с авторскими правами, приведения всех текстов в единообразную форму, распределения корпусных данных по темам, стилям, грамматическим составляющим и т.д.

Общие, обширные, большие по объему лингвистические корпусы существуют (или разрабатываются) для многих языков (греческого, немецкого, чешского, финского, армянского, китайского, японского, болгарского и др.). Например, Национальный корпус русского языка на сегодняшний день является одним из самых больших и содержит более 300 млн. образцов текстовых словоупотреблений.

Некоторые специалисты *корпусом* («корпус первого порядка») называют просто любое собрание текстов, объединённых каким-то общим признаком (языком, автором, периодом создания

текстов). Так, например, Aston G и др. определяют корпус как коллекцию устных и/или письменных текстов, собранных в соответствии с определенными принципами и целями и снабженными определенной поисковой системой⁶. Такие материалы помогают точно определить, как может употребляться то или иное слово в современном обществе, насколько частотными являются выбор того или другого синонимичного слова, той или другой грамматической формы и т.д. Устные тексты могут быть представлены в виде видеофайлов, содержащих бытовые беседы, телефонные переговоры, телефильмы и телепрограммы.

В настоящее время создаются более конкретные по цели использования, а потому ограниченные по объему корпусы, то есть современный лингвистический корпус – это совокупность текстов, собранных в соответствии с определёнными принципами (уровень владения языком и тип пользователя, стилистическая принадлежность, определенные лексико-грамматические характеристики слов и т.д.) и обеспеченных соответствующей поисковой системой. Таковы существующие в наше время лингвистические корпусы разного типа: двуязычные, тематические, стилистически ограниченные, жанровые, авторские, учебные и т.д.

Целесообразность создания таких дифференцированных текстовых корпусов объясняется исследователями многими причинами, среди которых наиболее важными являются следующие: достаточная для каждого пользователя обширность и убедительность фрагмента любого типа; необходимость представления вариантов реальных контекстов реализации конкретных лингвистических фактов; возможность быстро проанализировать представленные таким образом языковые факты (сравнить, количественно сопоставить, и т.д.); возможность

многократного использования однажды созданного корпуса для решения различных лингвистических задач.

Очевидно, что созданные специалистами корпусы лингвистических данных не могли не привлечь к себе внимания методистов, то есть не рассматриваться с точки зрения полезности в процессе преподавания соответствующих иностранных языков. Методики преподавания языка с использованием корпуса отличаются обращением к реальным современным источникам и текстам, то есть к таким материалам, с которыми учащиеся сталкиваются (или будут сталкиваться) в повседневной жизни, в профессиональной сфере. Возможность быстрого получения с помощью корпусных данных сведений о правильности, вариативности или частотности того или иного употребления позволяет значительно сэкономить время, максимально приблизить учебный процесс к реальной действительности.

Методисты, занимающиеся изучением проблемы повышения эффективности изучения языка с применением корпусных технологий, отмечают, что в этом случае происходит сдвиг акцента с дедуктивного подхода в преподавании к индуктивному, а это значит, что непосредственная опора на эмпирические данные кардинально меняет функции всех составляющих, в том числе и участников, учебного процесса:

- преподавателя, который становится координатором, куратором;
- студента, который учится анализировать встретившиеся употребления;
- учебной грамматики, которая теряет излишнюю абстрактность, схематизм, оторванность от современности⁷.

Все эти положения полностью соответствуют современным дидактическим концепциям, теоретическим методическим разработкам, направленным на обоснование необходимости применения новых методов и приемов для повышения

эффективности преподавания всех дисциплин, в частности иностранных языков.

Таким образом, в центре обучения языку с использованием данных определенного корпуса оказывается учащийся, который сам находит и выбирает примеры, сам их анализирует, сам делает на основании своего анализа выводы и т.д. Новая дидактическая парадигма затрагивает роль преподавателя в меньшей степени, чем учащегося. Преподаватель должен не столько руководить, сколько помогать учащемуся в изучении иностранного языка, направлять его, указывать на новые ресурсы, и корпус оказывается для этого идеальным и перспективным инструментом.

Наиболее популярным достижением корпусной лингвистики является создание в 2001 году сайта Wikipedia (основатель – Джимми Уэйлс) – свободной энциклопедии, которая представляет из себя собрание текстов, характеризующих практически все предметы, явления, факты, события прошлого и настоящего, известных стран и малочисленных народов и т.д.). Согласно основному принципу пополнения материалов сайта, любой желающий может не только добавить свою статью, но и обоснованно (со ссылками на авторитетные работы в данной области) исправить чужую.

Исследователи отмечают много достоинств этой свободной энциклопедии, однако главными из них являются три:

- она действительно общедоступна, поскольку из неё может черпать информацию любой желающий, имеющий выход в Интернет;
- она универсальна, поскольку здесь есть практически всё и обо всём (более 17 млн. статей);
- она многоязычна: перевод созданных на английском языке статей википедии осуществляется на более, чем на 250 языков, среди которых есть и армянский.

Материалы Википедии постоянно обновляются, поэтому она считается одним из самых быстрых СМИ. По скорости обновления новостей Википедия обошла такие мировые сайты, как YouTube и MySpace.

Значение материалов этого сайта в познавательной деятельности человека трудно переоценить, но он не менее (если не более) важен и для правильной и продуктивной организации учебного времени. Ведь, по данным интернета, “свободная энциклопедия” была создана как дополнительный, доступный, бесплатный образовательный проект, предназначенный огромному количеству читателей: школьников и студентов, родителей и преподавателей, представителей разных народов, последователей разных религий и т.д.⁸ в целях повышения эффективности процесса обучения. В этой связи хочется отметить значения лексических единиц, составляющих слово Wikipedia: Wiki – в переводе с гавайского языка оз-

начает «быстрый» и pedia – в переводе с древнегреческого означает «обучение». И если значение слова *энциклопедия* – «обучение в (полном) круге (наук)»⁹, то значение слова *википедия* можно определить как «быстрое обучение».

В методике использование корпусных технологий приобретает особую актуальность при обучении продуктивным видам речевой деятельности, а именно – говорению и письму. Корпусные данные позволяют не только лучше организовать самостоятельную творческую работу учащихся, что особенно важно для студентов, обучающихся на заочных отделениях, но и привить им навыки работы с современными информационными ресурсами, научить использовать их в практической деятельности, без чего, на наш взгляд, сегодня невозможно представить современного человека и педагога, не говоря о завтрашнем дне, когда студенты соответствующего факультета станут дипломированными специалистами.

ЛИТЕРАТУРА

1. Вербичкий А.А. Новая образовательная парадигма и контекстное обучение. М.: ЦПИ, 1999. – 75 с.
2. 2. Общеввропейские компетенции владения иностранным языком: Изучение, обучение, оценка. Совет Европы, Департамент по языковой политике. Страсбург. М., 2001. – 247 с.
3. 3. Лазарев В.С. Новое понимание методов проектов в образовании // Педагогика. 2011, № 10. – С. 3-12.
4. 4. Полат Е.С. Метод проектов на уроках иностранного языка // Иностранные языки в школе. 2000, № 2 (с. 3-10), № 3 (с. 3-9).
5. 5. Полат Е.С. и др. Новые педагогические и информационные технологии в системе образования. Учебное пособие для студентов педагогических вузов и системы повышения квалификации педагогических кадров. М.: Академия, 2005. – 272 с.
6. 6. Aston G. Corpora in Pedagogy. Matching Theory and Practice//Studies in Honour of H.G.Widdowson. Oxford, Oxford University Press, 1995. – P. 257-270.
7. 7. Leech G., Rayson P., Wilson A. Word Frequencies in Written and Spoken English: based on the British National Corpus. London, Longman, 2001.- 320 p.
8. 8. www.vsozial.ru
9. 9. www.ru.wictionary.org

APPLICATION OF CORPUS LINGUISTICS AND PROJECT METHOD IN ENGLISH LANGUAGE TEACHING

SUSANNA ANGURYAN

Lecturer of the Chair of English
Language Teaching, ASPU, PhD in Pedagogy

Successful learners are active, goal-directed, self-regulating who assume personal responsibility for contributing to their own learning. This is a brief introduction to the recently changed model of teaching and learning which has been applied in a language classroom for the last two decades.

The article focuses on the project method and some other methods based on Corpus Linguistics the application of which aims at allowing students to solve ‘purposeful’ problems, to explore and experience their environment with as little teacher direction as possible. Many educators are trying out relatively long-term, interdisciplinary problems in their classrooms to teach thinking and problem-solving skills. One of the most efficient tools to do that is Wikipedia, the achievement of Corpus Linguistics, which helps learners learn more effectively and so become learners for life. The aim of learning to learn is to develop lifelong learners who are capable and motivated to learn throughout their lives, thereby raising achievement and increasing enjoyment of learning.

ԿՈՐՊՈՒՍԱՅԻՆ ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՆԳՈՒՐՅԱՆ

*Խ. Արույանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու*

Հաջողության հասած սովորողները նրանք են, ովքեր ակտիվ են, նպատակալաց, ինքնակառավարվող և ցուցաբերում են անձնական մեծ պատասխանատվություն իրենց իսկ սեփական ուսուցման հանդեպ: Հոդվածը նախագծային մեթոդի, Կորպուսային Լեզվաբանության վրա հիմնված մի քանի այլ մեթոդների մասին է, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս ուսանողներին լուծել նպատակային խնդիրներ և հետազոտություններ կատարել ուսուցչի՝ հնարավորինս քիչ միջամտությամբ: Շատ ուսուցիչներ երկար ժամանակ են տրամադրում փորձելով լսարանում ուսուցանել մտածելու և խնդիր լուծելու հմտություններ: Արդյունավետ հնարներից է Վիքիպեդիան՝ կորպուսային լեզվաբանության նվաճումներից մեկը, որն օգնում է ուսանողներին արդյունավետ կերպով սովորել՝ դառնալով սովորողներ ամբողջ կյանքի ընթացքում: «Սովորում ենք սովորել»-ու նպատակը հավերժ սովորող ստեղծելն է, ովքեր ընդունակ են և ուզում են ամբողջ կյանքում սովորել՝ նվաճելով նորանոր բարձունքներ և վայելելով սովորելու հաճույքը:

ՀԱՄԼԵՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ Մայթենադիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր

**ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Աշխատանքում գեղագիտական հարաբերությունը դիտարկվում է որպես երկկողմ և եռակողմ հարաբերության մասնավոր տեսակ: Բացահայտվում են եռակողմ գեղագիտական հարաբերությունների որոշ առանձնահատկություններ: Քննարկվում է մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրական, ամողջ գեղագիտական հարաբերությունների հաստատման հիմնահարցը, բացահայտվում է ուսուցիչ-աշակերտ գեղագիտական փոխհարաբերություններում աշակերտի դերի սուբյեկտիվությունը և ուսուցչի դերի բացառիկությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ սուբյեկտ, օբյեկտ, սուբյեկտիվ երկկողմ հարաբերություն, գեղագիտական հարաբերություն, մաթեմատիկայի ուսուցման գործընթաց:

1. Սուբյեկտիվ հարաբերություն:

Գեղագիտական գործունեության հիմքում ընկած է սուբյեկտիվ հարաբերության հասկացությունը: «Ի տարբերություն օբյեկտիվ հարաբերության, ինչը դրսևորվում է երկու օբյեկտների փոխգործունեությամբ, սուբյեկտիվ հարաբերությունը արտահայտում է մարդու վերաբերմունքը ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի հանդեպ, նրա կողմից մեկի նախապատվություն տալը մյուսի նկատմամբ, երևույթների, գործընթացների, մարդկանց կողմնակալ գնահատումը» (տես [9], էջ 299): Այսպիսով, սուբյեկտիվ հարաբերությունը ունի առնվազն երկու կողմ: Երբ կողմերը երկուսն են՝ առաջին կողմը սուբյեկտը, իսկ երկրորդը՝ կամայական օբյեկտ, կամ էլ որևէ սուբյեկտ,

նման հարաբերությունը կանվանենք երկկողմ սուբյեկտիվ հարաբերություն:

Երկկողմ սուբյեկտիվ հարաբերությունները լայն կիրառություն ունեն հոգեբանության մեջ և ուսումնասիրված են հանգամանորեն: Սուբյեկտ-օբյեկտ ձևաչափով ընթացող հարաբերությունների միջոցով է, օրինակ, բացատրվում զգացմունքների տարանջատումը հույզերից (տես [9]): Որպես սուբյեկտիվ հարաբերություններ են դիտարկվում նաև գեղագիտական հարաբերությունները: Ուսումնական գործընթացում դրսևորվում են ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ-ուսումնական առարկա և այլ երկկողմ սուբյեկտիվ հարաբերություններ:

Հոգեբանները առանձնացնում են սուբյեկտիվ երկկողմ հարաբերության գնահատող, հուզական և դրդիչ կողմերը: Հարաբերության գնահատող կողմը դրսևորվում է նրա օբյեկտը այլ նմուշների, էտալոնների, նվաճման մակարդակների հետ համեմատելիս: Այստեղ սուբյեկտի կողմից օբյեկտին տրվում են լավ կամ վատ, հաճելի կամ տհաճ, ազնիվ կամ անազնիվ, գեղեցիկ կամ տգեղ, ճիշտ կամ սխալ և նմանատիպ այլ գնահատականներ, որոնք հիմք են ծառայում նրա նկատմամբ որոշակի վերաբերմունք ցույց տալու համար: Հարաբերության հուզական կամ արտահայտչական կողմը կապված է հարաբերության օբյեկտին տված հուզական գնահատականի պատճառով առաջացած ապրումների հետ: Հարաբերության դրդիչ կողմը դրսևորվում է դուր եկած օբյեկտին տիրանալու կամ նրանից բաժանվելու,

նրա հետ առնչվելու կամ նրանից խուսափելու, նրանով զբաղվելու կամ չզբաղվելու ցանկության դրսևորմամբ (տես [9], էջ 300):

Նկատենք, որ ինչպես փոխադասական, այնպես էլ հոգեբանական գրականության մեջ սուբյեկտիվ հարաբերությունը հիմնականում դիտվում է որպես երկկողմ սուբյեկտ-օբյեկտ կամ սուբյեկտ-սուբյեկտ ձևաչափերով ընթացող գործընթաց: Օգտակար է, սակայն, նշված և այլ ոլորտներում դիտարկել նաև բազմակողմ, մասնավորապես՝ եռակողմ հարաբերությունները (մաթեմատիկայում, օրինակ, նման հարաբերություններն ունեն լայն կիրառություն): Իսկապես, երկու մարդու միջև հարաբերությունները, սովորաբար, ընթանում են ինչ-որ հանգամանքներում՝ առիթով, միջավայրում, իրադրության մեջ, գործընթացում և այլն: Եվ նման հարաբերությունների արդյունքը շատ կողմերով կախված է հենց այդ հանգամանքներից: Օրինակ, երգչի տված համերգը իրականացվում է ինչ-որ դահլիճում, որոշակի հանդիսատեսի համար, և հաջողությունը պայմանավորված է նաև ինչպես դահլիճի տեխնիկական հարմարություններով, այնպես էլ հանդիսատեսի պատրաստվածությամբ, տրամադրվածությամբ և այլ հանգամանքներով: Իսկ համերգի ընթացքում մենք առնչվում ենք երգիչ-երգ-հանդիսատես, երգիչ-երգ-դահլիճ (նկատի ունենք դահլիճի ֆիզիկական կողմը), երգիչ-երգ-դահլիճ (նկատի ունենք հանդիսատեսների բազմությունը), հանդիսատես-երգ-երգիչ, հանդիսատես-երգ-հանդիսատես և այլ բնական եռակողմ հարաբերություններին:

Եռակողմ հարաբերությունները լայնորեն կարող են օգտագործվել հոգեբանության մեջ: Միայն եռակողմ հարաբերության միջոցով կարելի է, օրինակ, բացատրել խանդի, նախանձի, չարախնդության, բամբասանքի, թշնամանքի զգացմունքները:

Եռակողմ հարաբերությունները մեծ դեր ունեն նաև ուսումնական գործընթացում: Թեև մանկավարժական գրականության մեջ լայնորեն են դիտարկվում ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները, սակայն ուսուցչի և կոնկրետ աշակերտի միջև երկկողմ հարաբերությունները ոչ միշտ են ակտիվորեն դրսևորվում: Կան ուսուցիչներ, որոնք դասի ողջ ընթացքում ոչ միայն չեն հարաբերվում առանձին աշակերտների հետ, այլև նրանց չեն էլ նկատում կամ էլ նկատում են միայն այն դեպքում, երբ հարկ են համարում դիտողություն անել: Հետևաբար, ուսուցման ու դաստիարակության վերաբերող շատ հարցեր դժվար է հասկանալ կամ բացատրել առանց ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում դասարանի կամ ուսումնական առարկայի միջնորդավորված դերը դիտարկելու, այսինքն՝ առանց դիտարկելու «ուսուցիչ - ուսումնական առարկա - աշակերտ», «ուսուցիչ - դասարան - աշակերտ» և նմանատիպ եռակողմ այլ հարաբերություններ: Ասվածը վերաբերում է նաև ուսուցման մեթոդների: Օրինակ, վերջին ժամանակներում շատ է խոսվում ուսուցման ինտերակտիվ մեթոդների մասին, որոնք, ըստ էության, հանգում են «ուսուցիչ - աշակերտ - աշակերտ» եռակողմ հարաբերության, որում դրսևորվում է կողմերից յուրաքանչյուրի ակտիվությունը մնացած երկու կողմերի նկատմամբ:

Եթե երկկողմ սուբյեկտիվ հարաբերությունները կարող են ընթանալ սուբյեկտ-օբյեկտ կամ սուբյեկտ-սուբյեկտ ձևաչափերից յուրաքանչյուրով, ապա եռաչափ սուբյեկտիվ հարաբերությունները կընթանան.

ա. սուբյեկտ-օբյեկտ-սուբյեկտ կամ էլ,

բ. սուբյեկտ-սուբյեկտ-սուբյեկտ ձևաչափերով: Ելնելով մեր առջև դրված խնդիրներից, մենք մեծ մասամբ կդիտարկենք առաջին տիպի եռակողմ հարաբերությունները: Եթե նման հա-

րաբերությունը գրառենք A-X-B տեսքով, ապա A-ն և B-ն կանվանենք տված հարաբերության սուբյեկտներ, իսկ X-ը՝ նրա միջուկ: Նման եռակողմ հարաբերությունից ածանցվում են A-X և B-X սուբյեկտ-օբյեկտ և A-B սուբյեկտ-սուբյեկտ երկկողմ հարաբերությունները:

Եռակողմ հարաբերությունները նույնպես ունեն գնահատող, հուզական և դրդիչ կողմեր: Եռակողմ հարաբերության գնահատող կողմը, ի տարբերություն երկկողմ հարաբերության, կարող է լինել ներդաշնակ, երբ հարաբերության սուբյեկտները միակարծիք են կամ համանման գնահատական են տալիս օբյեկտին՝ լավ կամ վատ, հաճելի կամ տհաճ և այլն: Սակայն երբ գնահատականները իրարամերժ են, այդ դեպքում հարաբերությունը կարող է լինել ոչ ներդաշնակ (անառողջ, պայթունավտանգ կամ հակասական): Այսպիսով, եռակողմ հարաբերությունը ունի պայթունավտանգ լինելու հնարավորություններ, և առողջ հարաբերություն ստեղծելու պայմաններից մեկը կողմերի միջև անհամատեղելիություններից խուսափելն է: Հասկանալի է նաև, որ սուբյեկտ-օբյեկտ բնույթի երկկողմ հարաբերությունը հակասական չի կարող լինել, իսկ սուբյեկտ-սուբյեկտ տիպի երկկողմ հարաբերության հակասականությունն էլ կունենա ինչ-որ պատճառ, այսինքն՝ կլինի հակասության այդ պատճառը հանդիսացող մի երրորդ կողմ, իսկ դա նշանակում է, որ տրված հակասական երկկողմ հարաբերությունը ածանցվում է ինչ-որ եռակողմ հարաբերությունից:

Եռակողմ հարաբերության հուզական գործառույթը ևս կարող է դրսևորվել ինչպես ներդաշնակ, այնպես էլ աններդաշնակ կամ հակասական արտահայտվածություններով: Առաջին դեպքում հարաբերության միջուկը միատեսակ՝ դրական կամ բացասական հուզական արտահայտություն է ստանում նրա ծայրանդամների՝ սուբյեկտների համար: Օրինակ, երգը երկու լսողներին

միաժամանակ դուր է գալիս: Երկրորդ դեպքում սուբյեկտներից մեկը ունենում է դրական, իսկ մյուսը՝ բացասական հուզական ապրում: Երգը մեկին հուզում է, մյուսին՝ գրգռում: Առաջին դեպքում մենք հարաբերությունը կարող ենք գնահատել որպես առողջ, երկրորդում՝ անառողջ:

Հարաբերության դրդիչ գործառույթը նույնպես կարևոր դեր ունի նրա բնույթի հակասականության տեսանկյունից: Այստեղ առանձնապես վտանգավոր է, երբ հարաբերության երկու ծայրանդամներին էլ դուր է գալիս նրա միջուկը և երկուսն էլ ուզում են տիրանալ դրան: Այդ դեպքում մենք կունենանք որոշակի հակասություն նրա ծայրանդամների միջև, ինչը կարող է հանգեցնել խանդի, թշնամանքի, կռվի, պատերազմի և նմանատիպ այլ գործողությունների: Հարկ է նկատել, որ նման դեպքերում սուբյեկտների գործունեությունը կախված է հարաբերության բնույթից. նյութական, թե հոգևոր է հարաբերությունը, իսկ վերջին դեպքում էլ՝ բարոյական, ինտելեկտուալ, թե գեղագիտական է այն:

Այսպիսով, եռակողմ հարաբերությունը՝ իր միջուկի նկատմամբ սուբյեկտներին տված գնահատականի, ապրումների և մղումների տեսանկյունով կարող է լինել հակասական, ներդաշնակ կամ չեզոք: Այն կարող է լինել.

ա. հակասական, երբ օբյեկտին տված սուբյեկտների գնահատականները բարձր են և ունեն տարբեր նշաններ, կամ երբ նրա նկատմամբ սուբյեկտների ապրումները խորն են և նույնպես ունեն տարբեր նշաններ, կամ երբ սուբյեկտները հարաբերության նյութական միջուկի նկատմամբ ունեն միատեսակ դրական (տիրանալու) մղումներ:

բ. ներդաշնակ, երբ օբյեկտին տված սուբյեկտների գնահատականները և նրա նկատմամբ սուբյեկտների ապրումները նույնպես ունեն միևնույն նշանները և սուբյեկտները հարաբերության միջուկի նկատմամբ ունեն միատեսակ, բայց

հոգևոր դրդիչ մղումներ:

գ. չեզոք, երբ սուբյեկտների գնահատականները բարձր չեն, ապրումները խորը չեն կամ սուբյեկտները միջուկի հանդեպ ունեն տարբեր մղումներ:

Օրինակ, մարզական միջոցառման ընթացքում մենք ունենք (մարզասեր – մարզական միջոցառում – մարզասեր) եռակողմ հարաբերությունը: Եվ կախված նրանից, թե սուբյեկտ-մարզասերները միջոցառման որ կողմի համար են «ցավում» (կամ էլ ոչ մեկի համար չեն ցավում) հարաբերությունը կարող են լինել ներդաշնակ, հակասական կամ չեզոք: Այսինքն, երկու մարզասերներ իրար հետ կարող է գտնվել հակասական (ցավում են տարբեր թիմերի կամ մարզիկների համար), ներդաշնակ (ցավում են միևնույն թիմի կամ մարզիկի համար) կամ չեզոք (նրանցից մեկը առանձնապես չի ցավում որևէ թիմի կամ մարզիկի համար) հարաբերության մեջ:

Բնական է, որ մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտում նախընտրելի են ներդաշնակ հարաբերությունները: Սակայն հարաբերությունները, դրանց ստեղծումը պայմանավորված են ամենատարբեր գործոններով ու դրդապատճառներով, և ներդաշնակ հարաբերությունների ստեղծումը միշտ չէ, որ հնարավոր է դառնում:

2. Երկկողմ և եռակողմ գեղագիտական հարաբերություններ: Գեղագիտական հարաբերությունը գեղարվեստական մանկավարժության (գեղագիտական դաստիարակության) հիմնական կատեգորիաներից մեկն է և նրա մնացած կատեգորիաների համար խաղում է միավորող դեր: Ավելին, վերջիններս հանդես են գալիս հենց գեղագիտական հարաբերության շրջանակներում:

Թվում է, թե գեղագիտական հարաբերության հասկացությունը ունի միանշանակ ընկալում, սակայն տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնորոշում այն: Այսպես, օրինակ, [14]–ում գեղագի-

տական հարաբերություն է անվանվում օբյեկտի հետ սուբյեկտի այնպիսի հոգևոր կապը, որը հիմնված է վերջինիս նկատմամբ անշահախնդիր հետաքրքրության վրա, և նրա հետ շփումը ուղեկցվում է հոգևոր խորը վայելքով: Կամ «գեղագիտական հարաբերությունը իրականության երևույթները որպես գեղեցիկ կամ տգեղ, վեհ կամ ստոր, ողբերգական կամ կատակերգական գնահատելու մարդու ունակությունն է» (տես [7], էջ 370): Ահա մի այլ բնորոշում. Գեղագիտական հարաբերությունը իրականության հետ մարդու առանձնահատուկ հարաբերություն է, որի ընթացքում մարդը բացահայտում է և երևան է հանում օբյեկտիվ աշխարհի առարկաների, երևույթների և իրադրությունների ամբողջականության չափը, ցուցաբերում և ապրում է ակտիվ ստեղծագործելու իր ունակությունների և հնարավորությունների զարգացումը, գնահատում է իրականության երևույթների կատարելության և աշխարհում մարդու ներդաշնակության աստիճանը» (տես [11]): Իսկ որոշ հեղինակներ էլ գեղագիտական հարաբերությունը ընդունում են որպես նախնական հասկացություն և նրա միջոցով սահմանում գեղագիտական դաստիարակությունը և նրա բոլոր կատեգորիաները:

Ակնհայտ է, որ գեղագիտական հարաբերությունը սուբյեկտիվ հարաբերություն է, որն ընթանում է սուբյեկտ-օբյեկտ կամ սուբյեկտ-սուբյեկտ ձևաչափերով: Քանի որ մեզ հիմնականում հետաքրքրելու են առաջին ձևաչափով ընթացող հարաբերությունները, ապա գեղագիտական հարաբերությունն էլ կբնորոշենք որպես սուբյեկտի-օբյեկտ ձևաչափով ընթացող երկտեղ հարաբերություն, որում սուբյեկտի համար կարևորվում են օբյեկտի գեղագիտական հատկանիշները: Օրինակ, երբ մենք գնում ենք մեր հագուստը կամ տան կահույքը, ապա կարևորում ենք ոչ միայն դրանց պրակտիկ նշանակությունը,

այլև գեղեցկությունը: Ընդ որում, մեր ընտրությունը պայմանավորված է ինչպես հագուստի կամ կահույքի գեղագիտական արժանիքներով, այնպես էլ մեր ճաշակով ու նախասիրություններով: Ասվածից հետևում է, որ գեղագիտական հարաբերությունը պայմանավորված է ինչպես օբյեկտի գեղագիտական բնույթով, այնպես էլ սուբյեկտի գեղագիտական էությունը: Այդ է վկայում նաև գեղագետ Օ. Ա. Կրիվցունի հետևյալ դիտարկումը. «Արվեստի ստեղծագործության ազդեցությունը կախված է ոչ միայն արդեն կատարված ստեղծագործությունից, այլև նրա ընկալման բնույթից: Արվեստի ստեղծագործության մեկնաբանությունների բազմազանությունը մշտապես սրել է այն հարցը, թե ինչ դեր են խաղում գեղագիտական ընկալման մեջ օբյեկտի և սուբյեկտի գործոնները, ինչ չափով է գեղարվեստական կմախքը/հյուսվածքը ծառայում որպես մտահղացման աղբյուր և ինչ աստիճանով է լրացուցիչ միտք բերում ընթերցողը, հանդիսականը, լսողը» (տես [12]):

Նշենք, որ յուրաքանչյուր սուբյեկտիվ հարաբերություն, անկախ իր տեսակից, իր մեջ ներառում է որոշակի գեղագիտական տարր, ինչը մեծ մասամբ հանդես է գալիս որպես գեղագիտական գնահատական: Իսկապես, դասի ընթացքում աշակերտի տված պատասխանը կարող է որակվել որպես գեղեցիկ, ավտորուսում հասակով մարդուն իր տեղը գիջելը կամ չգիջելը՝ գեղեցիկ կամ տգեղ, հայրենիքի պաշտպանության համար կյանքը վտագող գինվորի արարքը՝ վեհ, իսկ մատնությունը՝ ստոր: Գեղագիտական այս տարրը առաջանում է, երբ հարաբերության բովանդակությունը համապատասխանում կամ չի համապատասխանում հասարակության մեջ ընդունված արժեքներին կամ նորմերին: Եվ գեղագիտական այս տարրն է, որ ամբողջացնում է հարաբերությունը, այն դարձնում ներդաշնակ: Այն նաև «երանգավորում», «գունագարդում», իմաս-

տավորում է հարաբերությունը: Իսկ առանց այդ տարրի և համապատասխան գեղագիտական գնահատականի, հարաբերությունը դառնում է դժգույն, հաճախ անգամ զրկվում է իրականացման կարևորագույն մի խթանից:

Որպես գեղագիտական հարաբերության օբյեկտ կարող են լինել մարդը՝ իր ներաշխարհով ու վարքով, բնության ու հասարակության մեջ կատարվող երևույթները, գեղարվեստական ստեղծագործությունները: Իսկ ի՞նչ դեր է խաղում սուբյեկտը գեղագիտական հարաբերության մեջ:

Գեղագիտական հարաբերության մեջ սուբյեկտի դերը պայմանավորված է գեղեցիկի, վեհի և մնացած հիմնական գեղագիտական արժեքների ընկալումներից, դրանց հանդեպ նրա ունեցած պահանջմունքներից, գեղագիտական ունակություններից, զարգացվածության աստիճանից ու մակարդակից, ճաշակից և այլն: Սուբյեկտի նմանատիպ հատկանիշները դիտարկվում են որպես գեղագիտական հարաբերության բաղադրիչներ: Դրանք դասակարգվում են այսպես. հուզագագացմունքային, ճանաչողական, արժեքանական և գործունեության (տես [10]):

Հուզագագացմունքային բաղադրիչ – գեղագիտական հույզերը, զգացմունքները, ապրումները, որոնք արտահայտում են օբյեկտի հետ հարաբերության ընթացքում սուբյեկտի գործունեության հուզագագացմունքային իրացումը:

Ճանաչողական բաղադրիչ – գեղագիտական ընկալումը, գիտակցությունը, դատողությունը, պատկերումը/պատկերացումը, որոնք ապահովում են իրականության գեղագիտական ճանաչումը:

Արժեքանական բաղադրիչ – գեղագիտական գնահատականները, ճաշակները, նորմերը, իդեալները, որոնք կազմում են գեղագիտական արժեքների, դրանց հետ կապված գեղագիտական մոտիվների, պահանջմունքների, դրանց բավարարման եղանակների բազմազա-

նությունը:

Գործունեության բաղադրիչ – գեղագիտական ակտեր, որոնք հանդես են գալիս որպես շրջական աշխարհի գեղագիտական իրացման արդյունք, որպես նոր, ավելի բարձր մակարդակով իմացության, գնահատման, զգալու նախադրյալ:

Ընդհանրապես, սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերության հարցը հիմնականներից մեկն է գեղագիտական հարաբերության մեջ: Ինչպես նշում է հանրահայտ հոգեբան Վիլհելմ Վորինգը դեռ անցած դարի սկզբներին. «Ժամանակակից գեղագիտությունը վճռական քայլ է կատարել օբյեկտիվիզմի գեղագիտականից դեպի սուբյեկտիվիզմի գեղագիտականը, ... որն իր հետագործություններում արդեն ելնում է ոչ թե գեղագիտական օբյեկտի ձևից, այլ դիտող սուբյեկտի վարքից» (տես [8]):

Նույն ժամանակներում գերմանացի մեկ այլ փիլիսոփա, հոգեբան և գեղագետ Թեոդոր Լիպպսը այդ հարաբերության միջոցով է բացատրում գեղեցիկը իր հոգևորացման սկզբունքը. «Գեղագիտական հաճույքը օբյեկտացված ինքնահաճույքն է», այսինքն՝ «Գեղագիտական հաճույք ստանալ նշանակում է հաճույք ստանալ ինքն իրենից զգայական առարկայի մեջ, որը տարբեր է իրենից, նրանում զգալ իրեն» (տես [13]): Այլ կերպ ասած՝ այս երևույթը դիտվում է որպես գեղագիտական հարաբերության մեջ օբյեկտի և սուբյեկտի դիմամիկ նույնության հաստատում: Այսպես օրինակ, գրական երկի ընթերցողը, գեղարվեստական ֆիլմի կամ թատերական ներկայացման հանդիսատեսը, դեպքերի զարգացմանը զուգընթաց, իրեն սկսում է պատկերացնել գլխավոր հերոսի դերում, սիրած երաժշտությունը լսողը կարծես անխնայում-ծուլվում է այդ երաժշտության մեջ, բնության հրաշալի տեսարանը մարդուն մոռացնել է տալիս իր էությունը կամ էլ, հավանաբար, այդ էությունը ձուլվում-միահյուսում է տվյալ

տեսարանի հետ: Նման նույնության իմաստը պատկերավոր ձևով բացատրում է 13-րդ դարի ճապոնացի պոետ և իմաստասեր Մյոնեն. «...նայելով լուսնին ես դառնում եմ լուսին: Լուսինը, որին ես նայում եմ, դառնում է ես: Ես սուզվում եմ բնության մեջ, միանում եմ նրա հետ» (տես [11]): Այս դիմամիկ նույնությունը փայլուն ձևով է արտահայտում նաև Վ. Տերյանը.

Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,
Մենք մենակ ենք, ես ու դու,
Ես էլ դու եմ՝ ես չկամ...:

Գեղագիտական հարաբերության այս առանձնահատկությունը Լիպպսը անվանում է սուբյեկտի օբյեկտացում կամ օբյեկտի հոգևորացում, հումանացում (տես [13]): Այդ երևույթը լավագույնս արտահայտվում է նաև պարի մեջ, երբ պարող սուբյեկտը օբյեկտացվում՝ ձուլվում, իրեն զգում է երաժշտության մեջ, իսկ երաժշտություն-օբյեկտն էլ հումանացվում-մարդկայնացվում է պարող սուբյեկտի մեջ:

Կարևոր նշանակություն ունեն եռակողմ գեղագիտական հարաբերությունները: Երաժշտությունը, երգը, թատրոնը, պարարվեստը և արվեստի որոշ այլ տեսակներ ընկալվում են միայն եռակողմ հարաբերությունների միջոցով: Իսկապես, տվյալ երգի գեղարվեստական դրսևորումը իրականացվում է «երգիչ – երգ – ունկընդիր» եռակողմ հարաբերության մեջ, թատերական ներկայացումը՝ «թատերախումբ – ներկայացում – հանդիսատես» եռակողմ հարաբերության մեջ և այլն:

Սուբյեկտ-օբյեկտ-սուբյեկտ ձևաչափով ընթացող A-X-B եռատեղ գեղագիտական հարաբերության ընթացքում կարող են տեղի ունենալ A=X և B=X դիմամիկ նույնացումները: Եվ քանի որ նույնության կամ հավասարության հարաբերությունը փոխանցելի (եթե A=B և B=C, ապա A=C) և համաչափելի (եթե A=B, ապա B = A) է, ապա այդտեղից կստա-

նանք նաև $A=B$ նույնացումը: Այսինքն՝ յուրաքանչյուր գեղագիտական օբյեկտ առաջացնում է սուբյեկտների նույնացում և մարդկանց բազմության տրոհում ըստ այդ նույնացման: Միևնույն դասի մեջ են մտնում այն մարդիկ, որոնք միևնույն կերպ են գնահատում տվյալ գեղագիտական օբյեկտը: Սա մարդկանց սոցիալմշակութային վարքը կարգավորող, հասարակության մեջ համերաշխություն և ներդաշնակություն հաստատող կարևորագույն հանգամանք է, որ թույլ է տալիս և միաժամանակ պարտադրում է մարդկանց շփվել, հարաբերվել իրենց հետ միևնույն գեղագիտական մոտեցումներն ու միևնույն գեղագիտական ձաշակն ունեցող մարդկանց հետ:

Եռակողմ գեղագիտական հարաբերությունը կարող է լինել ինչպես ներդաշնակ, այնպես էլ չեզոք կամ հակասական: Այստեղ նման հարաբերությունները հիմնականում դրսևորվում են «ընկալող – արվեստի գործ – ընկալող» եռակողմ հարաբերության միջոցով: Միևնույն X երգը ունկրնդող A և B երկու մարդիկ, օրինակ, իրար հետ մտնում են հարաբերության մեջ $A-X-B$ եռակողմ հարաբերության միջոցով, և եթե երգը մեկին դուր է եկել, իսկ մյուսին՝ գրգռում, ապա այստեղ առկա է հակասականությունը: Իսկ նշված արդյունքները պայմանավորված են մարդկանց նախասիրություններով, ձաշակով և այլ հանգամանքներով: Հարկ է նկատել, որ հասարակական կյանքը այնպես է կազմակերպվում, որ մարդիկ մեծ մասամբ կարողանում են խուսափել գեղագիտական հարաբերության հակասականության դրսևորումից: Օրինակ, տվյալ երգչի համերգին գնում են հենց նրա երգը նախընտրող մարդիկ, ջազը կամ սիմֆոնիկ երաժշտությունը լսում են միայն դրանք սիրող մարդիկ և այլն:

3. Գեղագիտական հարաբերությունները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ի հայտ են

գալիս մաթեմատիկական գեղեցիկի ինչպես օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, այնպես էլ արտաքին և ներքին դրսևորումները (տես [3-5]): Ուսուցման գործընթացն, իր հերթին, ընձեռում է գեղագիտականի դրսևորման լրացուցիչ հնարավորություններ: Միևնույն ժամանակ, գեղագիտական տարրի առկայությունը մաթեմատիկայի ուսուցման գործընթացը դարձնում է ավելի գրավիչ, նպաստում է սովորողների կամային որակների և հոգեկան այլ երևույթների ձևավորմանը և զարգացմանը (տես [2]), ինչը ուսուցման գործընթացում մաթեմատիկայի գեղագիտական հատկանիշների դրսևորման լրացուցիչ խթան է հանդիսանում: Սակայն այդ գեղագիտականը տեսնելու և ընկալելու համար աշակերտը չունի համապատասխան փորձ և ունակություններ: Եվ այստեղ առաջին պլան է մղվում ուսուցչի դերը, ով կարող է և պարտավոր է յուրաքանչյուր հասկացության, թեորեմի, նրա ապացուցման և կիրառման, երկրաչափական ձևի և հանրահաշվական գրառման մեջ բացահայտել և ցույց տալ գեղեցիկը: Իսկ ուսուցչի այդ դերը դրսևորվում է գանազան երկկողմ և եռակողմ գեղագիտական հարաբերություններում:

Մաթեմատիկայի և, ընդհանրապես, կամայական ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում դրսևորվող կարևորագույն գեղագիտական հարաբերություններն են ուսուցիչ-աշակերտ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-դասապրոցես, աշակերտ-դասապրոցես, ուսուցիչ-ուսումնական առարկա և աշակերտ-ուսումնական առարկա երկկողմ հարաբերությունները: Սակայն յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուսուցման գործընթացում դրանք դրսևորվում են յուրովի:

Նախ խոսենք դրանցից առաջինի՝ ուսուցիչ-աշակերտ երկկողմ հարաբերության մասին: Ուսուցիչների մեծամասնության համար մաթեմատիկայի ուսուցման

գործընթացը հանգում է զուտ մաթեմատիկայի ուսուցման: Նման մոտեցումը աշակերտների մեծ մասին օտարում է ուսուցման գործընթացից: Այդ աշակերտները մի ամբողջ ժամ ստիպված են լինում իրենց համար գտնել մաթեմատիկայից տարբեր ու իրենց կողմից նախասիրված զբաղմունք: Իսկ ուսուցիչը նրանց հետ հարաբերվում է այնքանով, որ նրանց արգելում է զբաղվել նրանց այդ նախասիրած զբաղմունքով, այսինքն՝ զրկում է ազատությունից: Եվ կարծեք թե ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը այդ դեպքում նմանվում կամ վերածվում է բանտարկյալվերակացու փոխհարաբերության: Եվ քանի որ բանտարկյալի և վերակացուի իրար հանդեպ ունեցած զգացմունքները միայն ատելությամբ են բնութագրվում, ապա այստեղ նույնպես երևան է գալիս մարդկային այդ անցանկալի զգացմունքը: Հասկանալի է, որ նման հարաբերության գեղագիտական տարրի կամ գրավչության մասին խոսելն անիմաստ է: Անիմաստ է այստեղ խոսել նաև ընդհանրապես կրթության մասին (տես [1]):

Ուսուցիչ-աշակերտ հարաբերության գեղագիտական կողմը կարող է լիարժեք դրսևորվել եռակողմ հարաբերության շրջանակներում: Նման կարևորագույն հարաբերությունը «ուսուցիչ – ուսումնական առարկա – աշակերտ» հարաբերությունն է, որում ծայրանդամները հանդես են գալիս որպես սուբյեկտներ և հաշվի են առնում օբյեկտի՝ ուսումնական առարկայի կամ նրանում ընդգրկված ուսումնական նյութի գեղագիտության օբյեկտիվ հատկանիշները: Գեղագիտականի համատեղ հայտնաբերումը, դրա հետ համատեղ շփումը, հուզական ապրումները՝ հաճույքը, ուրախությունը, բերկրանքը, զուգորդված ճանաչողության գործընթացի բերած բավարարվածության և հուզական այլ ապրումների հետ, մարդկային հոգիների մեջ ձևավորում են բարոյական արժեքի այն երկու անանցանելի արժեքները, որ դարեր ի

վեր մարդկությունը հպարտորեն բնութագրում է ՌԻՍՈՒՑԻՉ և ԱՇԱԿԵՐՏ նվիրական բառերով:

Դժբախտաբար, մաթեմատիկայի ուսուցչի հետ նման հարաբերությունները ձևավորվում են միայն աշակերտների շատ փոքր խմբերի համար, իսկ աշակերտության ճնշող մեծամասնությունը չի ներառվում հարաբերությունների այս շրջանակի մեջ:

Այսպիսով, ուսումնական գործընթացում գեղագիտական հարաբերության դրսևորման հիմքը ուսուցիչ – ուսումնական առարկա և աշակերտ – ուսումնական առարկա երկկողմ հարաբերություններն են: Դրանց գեղագիտական բնույթը պայմանավորված է դիտարկվող սուբյեկտների կողմից ուսումնական առարկայի կամ դասավանդվող կոնկրետ ուսումնական նյութի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, ավելի կոնկրետ՝ դրանց գեղագիտության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների ընկալումով:

Անշուշտ, գեղագիտականի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների իմացության համար կարևոր է ուսումնական նյութի իմացությունը: Սակայն դա դեռ բավարար չէ: Մանավանդ, երբ խոսքը վերաբերում է սուբյեկտիվ հատկանիշներին. երևույթի անկանխատեսելիությունը, անսպասելիությունը, այն գտնելու, հայտնաբերելու համար կատարվող որոնումը պայմանավորված են ուսուցման գործընթացի կազմակերպումից՝ դասագրքում նյութի շարադրանքից, ուսուցչի կողմից դրա մատուցումից և այլն: Միևնույն փաստը կարելի է ներկայացնել այնպես, որ այն դառնա կանխատեսելի կամ էլ այնպես, որ աշակերտի համար լինի անսպասելի ու անկանխատեսելի: Լավ դասագրքի հեղինակը, հմուտ ուսուցիչը հաշվի են առնում ասվածը: Նույնը վերաբերում է նաև մաթեմատիկական առարկան, երևույթը կիրառելուն և օգտագործելուն, դրանց էությունը հասկանալու համար անհրա-

ժեշտ ջանքերին, նպատակաուղղված, դժվարին ու բարդ խոչընդոտի հաղթահարմանը: Անփորձ ուսուցիչը կարող է, օրինակ, չհամբերել և աշակերտին հուշել, ցույց տալ խնդրի լուծման ճանապարհը, ինչը արդեն անհետաքրքիր է դարձնում լուծումը, որովհետև կորչում է հայտնաբերման՝ գեղեցիկի խթան հանդիսացող հատկանիշը: Նման դեպքերում աշակերտը սովորաբար ընդմանում է ուսուցչին, խնդրում է չօգնել, չասել լուծման ճանապարհը:

Այսպիսով, մաթեմատիկայի ուսուցման գործընթացում գեղագիտականի դրսևորման կարևորագույն գործոնը ուսուցիչն է. ինչպես է նա վերաբերում գեղեցիկին, մաթեմատիկայի և նրա ուսուցման գործընթացի մեջ տեսնո՞ւմ և կարևորո՞ւմ է գեղեցիկը, գիտական գեղեցիկի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, դրանց դերը ուսումնական առարկայի նկատմամբ աշակերտի վերաբերմունքի և, ընդհանրապես, նրա հոգևոր աշխարհի ձևավորման տեսանկյունից: Այս հարցերի դրական պատասխանի դեպքում միայն կարելի է խոսել գեղագիտական հարաբերության և, ընդհանրապես, մաթեմատիկայի ուսուցման գործընթացի միջոցով գեղագիտական դաստիարակության իրականացման մասին:

Ասվածը ընդգծում է նաև «ուսուցիչ – ուսումնական առարկա – աշակերտ» եռակողմ գեղագիտական հարաբերության առանձնահատուկ դերը ուսումնական գործընթացում: Այստեղ հարկ է նշել, որ ի տարբերություն իրականության ճանաչողական և բարոյական դրսևորումների, որոնք հնարավոր է իրականացնել ուսուցչի և աշակերտի միջև սուբյեկտ-օբյեկտ բնույթի փոխհարաբերությունների միջոցով, գեղագիտական ունակությունների ձևավորումը անհնար է իրականացնել սուբյեկտի կողմից օբյեկտ-աշակերտին տրվող հրահանգավորումներով կամ խորհուրդներով: Գեղեցիկը զգալու, ճանաչելու համար

աշակերտը ինքը պետք է լինի գործունեության սուբյեկտ. առանց դրա, միայն ուսուցչի դեղատոմսերին հետևելով, անհնար է նման զգացողության և ճանաչողության իրականացումը:

Ուսուցման գործընթացում կամ «ուսուցիչ – ուսումնական առարկա – աշակերտ» գեղագիտական հարաբերության մեջ ուսուցչի ունեցած դերը նման է թատրոնում դերասանի կամ թատերական ներկայացման ռեժիսորի խաղացած դերին: Պատահական չէ, որ հաճախ մանկավարժի մասնագիտությունը համեմատում են դերասանի մասնագիտության հետ: Եթե ուսուցիչը ուսուցման գործընթացում չընդգծի, կանգ չառնի ուսումնական նյութի մեջ առկա գեղագիտական որակների վրա, ապա աշակերտը չի կարող սեփական ուժերով հատնաբերել դրանք: Այնպես, ինչպես կան վատ ռեժիսորներ և դերասաններ, որոնք չեն կարողանում բացահայտել և հանդիսատեսին հասցնել ներկայացման գրական հենքի՝ պիեսի ասելիքը, թափանցել նրա գեղագիտական խորքերը, նույն կերպ և վատ ուսուցիչը կանգ չի առնում դասավանդվող նյութի գեղագիտական կողմերի, նրա գեղագիտական խորքերի վրա: Բայց ուսուցչի կողմից նյութի գեղագիտական հատկանիշների բացահայտումը աշակերտի համար դեռևս բավարար չէ դրա գեղագիտական ընկալման համար: Անհրաժեշտ է, որ աշակերտն ինքը զգա այդ գեղեցիկը, ինչի համար նա, ի տարբերություն թատրոնի հանդիսատեսի, որն հարաբերության օբյեկտ է, պետք է դիտվի, դառնա հարաբերության սուբյեկտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը, Էդիթ պրինտ, 2011:
2. Հ. Ս. Միքայելյան, Կամային որակների ձևավորումը և մաթեմատիկական կրթությունը, Մարդ և հասարակություն, №2, 2013:
3. Հ. Ս. Միքայելյան, Մաթեմատիկական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշները, «Մաթեմատիկական դպրոցում», №1, 2014:
4. Հ. Ս. Միքայելյան, Մաթեմատիկական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշները, «Մաթեմատիկական դպրոցում», №2, 2014:
5. Հ. Ս. Միքայելյան, Մաթեմատիկական օբյեկտների ներքին և արտաքին գեղագիտությունը, «Մաթեմատիկական դպրոցում», №3, 2014:
6. Հ. Ս. Միքայելյան, Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթությունը, մաս 1, Էդիթ Պրինտ, Երևան, 2014:
7. Блауберг И. В. Краткий словарь по философии. Изд. 2-е. М., 1970.
8. Ворингер В. Абстракция и одухотворение. В сборнике: Мигунов С. А., Хренов Н. А. Эстетика и теория искусств 20-го века. Хрестоматив. М., Прогресс-Традиция, 2008.
7. Реан А. А. Коломинский Я. Л. ,, Социальная педагогическая психология. СПб; Питер Ком, 1999. – 416 с.
8. Регүш Л. А ; Самоотношение подростков и переживание проблем школьной жизни; Научный журнал; Известия РГПУ им. А.И. Герцена 2009; № 100 с. 57 – 65
9. Цукерман Г. А. ,,Переход из начальной школы в среднюю, как психическая проблема,, Вопросы психологии. – 2001 – 5. 19 – 34 с.
10. Deci E.L., Ryan R.M. Intrinsic motivation and self – determination in human behavior. New York: Plenum, 1985.

РАЗВИТИЕ СОЦИАЛЬНО – ПСИХОЛОГИЧЕСКОЙ КОМПЕТЕНЦИИ УЧИТЕЛЯ В СРЕДНЕЙ ШКОЛЕ КАК ФАКТОР, ОБУСЛОВЛИВАЮЩИЙ ДИНАМИКУ МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ УЧАЩИХСЯ

ГЕВОРКЯН СРБУИ

Доктор психологических наук, профессор, проректор Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

ВАРДАНЯН ЛИЛИТ

Преподаватель кафедры Развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

В статье рассматриваются проблемы непрерывного развития социально – психологических компетенций учителей и перспективы психологических работ, проводимых в этом направлении. Авторы представляют результаты эмпирического исследования проведенного посредством экспертных оценок, наблюдений и изучения кейсов. Важность разработки стратегии для развития соответствующих умений педагогов также была отмечена. Эмпатия и рефлексивность учителей были выделены как основные характеристики эффективного преподавания и развития мотивации учеников.

THE DEVELOPMENT OF TEACHERS' SOCIAL – PSYCHOLOGICAL COMPETENCES IN MIDDLE SCHOOL AS A FACTOR CONDITIONING THE DYNAMICS OF STUDENT'S INTERPERSONAL RELATIONS

GEVORGYAN SRBUHI

Doctor of Psychological sciences, professor, Vice rector at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

VARDANYAN LILIT

Lecturer at the chair of Developmental and applied psychology Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

This article deals the psycho – social competencies of teachers working in middle schools in the continuous development and ongoing psychological perspectives. Authors present the results of empirical study which has been done through expert evaluations, observations and case studies. The importance of strategy development for teachers' capacity building is emphasized. Teachers' empathy and reflexivity are outlined and examined as main characteristics of effective teaching and students' motivation growth.

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության րեսուրսային և պարամոնության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության րեսուրսային և պարամոնության ամբիոնի ասպիրանտ

ՎԵՏՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՍԹՐԵՍԻ ՀՈԳԵՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆԶԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՀՊԱՆՄԱՆ ՀԱԿԱԶԴՈՒՄՆԵՐ

Հողվածում քննարկվում են սթրեսի, հետվնասվածքային սթրեսի հիմնախնդրի դրվածքը, հոգեֆիզիոլոգիական դրսևորումների բնութագրերը, անձի օրգանիզմի վրա դրանց ազդեցության առանձնահատկություններն ու ընթացքի բնորոշ փուլերը: Վերլուծությունների միջոցով վեր են հանվում տարբեր հեղինակների տեսություններում արտացոլված հիմնարար գաղափարներն ու տրվում դրանց համեմատական վերլուծությունը, առանձնացվում սթրեսի և հետվնասվածքային սթրեսի բնորոշ բնութագրիչները:

Հանգուցային բառեր: Հետվնասվածքային սթրես, հարմարման համախտանիշ, պահեստային հնարավորություններ, հուզական վարվածություն, գործառնության վիճակ, գործառնության հնարավորություններ:

Քաղաքակրթության զարգացման բացասական հետևանքները՝ տեխնոգեն աղետներ, ահաբեկչական և ռազմական գործողություններ, մեծ ու փոքր պատերազմներ, վթարներ, բնական աղետներ, դրանց հետ կապված սոցիալ-տնտեսական լարված իրավիճակը բացասական ազդեցություն են ունենում մարդկանց հոգեկանի վրա, առաջացնելով տարբեր բնույթի վնասվածքներ, որոնց հոգեբանական հետևանքները արտահայտվում են հետվնասվածքային սթրեսի տեսքով (И.Г. Малкина-Пых):

Հետվնասվածքային սթրեսը առաջանում է այնպիսի իրադարձության ժամանակ, որը կապված է կյանքի լուրջ սպառնալիքի հետ և միաժամանակ այն ուղեկցվում է ինտենսիվ վախի, սարսափի, հուսահատության և բազմաթիվ այլ զգացումներով, բացասական հույզերով: Այս պարագայում առաջացած վնասվածքը հոգեբանական է, կամ ֆիզիոլոգիական և սթրեսի հետ ոչ մի առնչություն չունի (Александровский Ю. А., Лобастов О. С., Спивак Л. И., Шужкин В): Հետվնասվածքային սթրեսը վնասվածքային սթրեսին մարդու երկարատև կամ ուշացած ռեակցիան է (հակազդում է): Պատմականորեն հետվնասվածքային սթրեսի ուսումնասիրման աշխատանքները իրականացվել են սթրեսի ուսումնասիրություններից անկախ: Չնայած «սթրեսի» և «հետվնասվածքային սթրեսի» միջև տեսական կամուրջ կապելու որոշ փորձերին, այնուհանդերձ այս երկու ոլորտները մինչև այժմ էլ շատ քիչ ընդհանուր բան ունեն (Хобфолл 1988, Кристэллом 1978): Սթրեսի կենսաբանական կոնցեպցիայի (համակարգի) ստեղծման հիմքը դրեց Հանս Սելյեն 1936թ.: Օրգանիզմի գլխավոր գործառնություններից մեկը, ըստ նրա, արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններում գործունեության հավասարակշռումն էր, հարմարվածության վերականգնումը: Այսպես, Սելյենի սթրեսի կոնցեպցիայում կենտրոնական

դարձավ օրգանիզմի ինքնապահպանման և սթրեսորի հակազդման համար ռեսուրսների մոբիլիզացիայի հոմեոստատիկ մոդելը: Այս իմաստով սթրեսը նաև օրգանիզմի բնական վիճակներից մեկն է: Սթրեսը (անգլ. stress՝ լարում, ճնշում) օրգանիզմի ցանկացած շատ կամ քիչ արտահայտված լարվածությունն է՝ պայմանավորված կենսագործունեության բնույթի հետ:

Ըստ մարդու վրա սթրեսի ազդեցության՝ նա առանձնացրել է սթրեսի սպեցիֆիկ (առանձնահատուկ) և ոչ սպեցիֆիկ կարծրատիպային էֆեկտներ, որոնք արտահայտվում են ընդհանուր աղապատացիոն համախտանիշի միջոցով: Իր զարգացման ընթացքում այդ համախտանիշն անցնում է երեք փուլ՝ տագնապի փուլ, դիմադրության փուլ և հյուսման փուլ: Նա առաջ քաշեց աղապատացիոն էներգիա հասկացությունը, որը մոբիլիզացվում է օրգանիզմի հոմեոստատիկ մեխանիզմների վերակառուցման ճանապարհով: Ըստ Սելյենի՝ այդ էներգիան սահմանափակ է, որի սպառումը անդառնալի է և տանում է դեպի օրգանիզմի ծերացմանը:

Ընդհանուր աղապատացիոն համախտանիշի հոգեբանական դրսևորումները տարբեր հեղինակների կողմից անվանվել են «էնոցիոնալ սթրես», հուզական լարվածություն, աֆեկտիվ ապրումներ, որոնք ուղեկցվում են մարդու օրգանիզմում անբարենպաստ փոփոխությունների ձևով (Пушкарев А.Л. и др., 2000, Тарабрина Н. В.): Դրանք արտահայտվում են օրգանիզմի կենսաբանական մակարդակում, հոգեկան, նյարդային մակարդակներում, սոցիալական վարքագծում և այլն: Ըստ Անոխինի և Սուդակովի՝ արտակարգ և վնասող գործոնների ազդեցության դեպքում հենց հուզական համակարգն է առաջինը միանում սթրեսային հակազդմանը, որը կապված է ցանկացած նպատակաուղղված վարքային դրսևորումների կառուցվածքում հույզերի ներգրավման հետ (Анохин П. К., 1973, Судаков К. С, 1981): Դրա հետևանքով ակտիվանում են վարքային հակազդումները կարգավորող վեգետատիվ ֆունկցիոնալ համակարգերը և դրանց սպեցիֆիկ էնոցիոնալ համակարգում արդյունավետ գործառնությունների ապահովումը: Սթրեսային իրավիճակը հաղթահարելու համար կենսական կարևոր արդյունքներ չնվաճելու դեպքում առաջանում է լարվածություն, որը օրգանիզմի ներքին միջավայրում առաջնային հորմոնալ փոփոխությունների հետ միասին առաջացնում է նրա հոմեոստազի խախտում: Որոշ հանգամանքներում դժվարությունների հաղթահարման համար օրգանիզմի մոբիլիզացման փոխարեն սթրեսը կարող է լուրջ խանգարումների պատճառ դառնալ (Исаев Д. Н., 1996): Ըստ Իսահի՝ աֆեկտիվ հակազդումների կրկնվելու կամ երկարատև լինելու դեպքում կենսական դժվարությունների ձգձգման հետ կապված հուզական գրգռվածությունը կարող է կայուն լճացած ձև ընդունել: Նման դեպքերում, նույնիսկ իրավիճակի կարգավորման դեպքում լճացած էնոցիոնալ գրգռվածությունը չի թուլանում: Ավելին, այն անընդհատ ակտիվացնում է վեգետատիվ նյարդային համակարգի կենտրոնական գոյացությունները, իսկ դրանց միջոցով ներքին օրգանների և համակարգերի գործունեությունն է խափանում (Анохин П. К.): Այնուհետև հեղինակը նշում է, որ եթե օրգանիզմում թույլ օղակներ են հայտնվում, ապա դրանք դառնում են հիմնական հիվանդության ձևավորման օջախ: Ուղեղի նեյրոֆիզիոլոգիական կարգավորման տարբեր կառույցներում էնոցիոնալ սթրեսի դեպքում առաջացող նախնական խանգարումները հանգեցնում են սիրտ-անոթային համակարգի, ստամոքսաաղիքային տրակտի, արյան մակարդակիության համակարգի փոփոխմանը, իմունային համակարգի խանգարմանը (Анохин П. К.): Բազմաթիվ հեղինակներ նշում են այն հանգամանքը, որ էնոցիոնալ սթրեսները

իրենց ծագումով որպես կանոն սոցիալական են, և դրանց նկատմամբ կայունությունը տարբեր մարդկանց մոտ տարբեր է (Hobfoll S.E., Horowitz M.J.): Սթրեսային հակազդումները հոգեբանական դժվարությունների ոչ միայն վերջիններիս հետևանք են, որքան ինտեգրատիվ պատասխան իրենց կոգնիտիվ գնահատականին և հուզական գրգռվածությանը (Everly G. S., Rosenfeld R., 1985):

Ժամանակակից տեսակետների համաձայն՝ սթրեսը դառնում է վնասվածքային, երբ սթրեսորի ազդեցության արդյունք է հանդիսանում հոգեկան ոլորտում խանգարումը ֆիզիկական խանգարումներին համարժեք (Тарабрина Н.В.): Այս դեպքում, համաձայն գոյություն ունեցող հայեցակարգերի, խախտվում է «ինքնակարգավորման» կառուցվածքը, աշխարհի կոգնիտիվ մոդելը, աֆեկտիվ ոլորտը, նեվրոլոգիական մեխանիզմները, սովորելու գործընթացի կառավարումը, հիշողության համակարգը, սովորելու էմոցիոնալ ուղիները: Որպես սթրեսոր նման դեպքերում հանդիսանում են *վնասվածքային իրադարձությունները*, արտակարգ ճգնաժամային իրավիճակները, որոնք խիստ բացասական հետևանքներ են ունենում, իր կամ մտերիմի կյանքի սպառնալիքի իրավիճակներում: Նման իրավիճակները արմատապես փոխում են անհատի հոգեբանական անվտանգության զգացումը՝ առաջացնելով վնասվածքային սթրեսի բազմազան հետևանքներ: Վնասվածքային սթրես ապրելու փաստը որոշ մարդկանց մոտ հետագայում հետվնասվածքային սթրեսի դրսևորման համարհանդիսանում է հենքային գործոն:

Հոգեբանության ինչպես տեսական, այնպես էլ կիրառական բնագավառների համար վիճելի հարց է նորմայի և վնասվածքային խանգարման սահմանը: Սթրեսը դառնում է վնասվածքային, երբ սթրեսորի ազդեցության արդյունքը առաջացնում է հոգեբանական խանգարում:

Անցյալ դարի ութսունական թվականների սկզբին ի հայտ է գալիս ինքնուրույն հետազոտական ուղղություն, որը զբաղվում էր արտակարգ գերբեռնվածություններով, դրանց հաղթահարմամբ և հետևանքներով, որի արդյունքում ձևավորվում են այնպիսի հասկացուցություններ, ինչպիսիք են «վնասվածքային գերբեռնվածությունը», «վնասվածքային սթրեսը» և «հոգեբանական վնասվածքը»: Մական վնասվածք հասկացությունը, չնայած իր հաճախակի կիրառությանը, հիմնականում սահմանվում է ընդհանուր բառերով. բարձր ինտենսիվությամբ իրադարձության համարժեքի հարմարվողական ներուժի գերազանցման միաժամանակյա բացակայությամբ, որի հետևանք կարող են հանդիսանալ սթրեսի հետ կապված հարմարման և խանգարումների խախտումները (Freedy J. R., Hobfoll S. E., 1995): Համաձայն DSM-IV (Diagnostic and Statistical Manual of Mental Disorder_հոգեբուժական դասակարգման չափորոշիչ, որը մշակվել է ամերիկական հոգեբուժական ասոցիացիայի կողմից) վնասվածքային իրադարձությունը այն ժամանակ կարող է դրսևորվել, երբ այն կապված է մահվան դեպքի, մահվան սպառնալիքի, ծանր վնասվածքի կամ ֆիզիկական ամբողջականության խաթարման կամ այլ սպառնալիքների հետ: Իմիջիայլոց այդ իրադարձությունը մարդու վրա կարող է ազդել ուղղակիորեն կամ անուղղակի կերպով՝ կարևոր մարդկանց միջոցով: Բայց երբեմն վնասվածքը կարող է առաջանալ այն պատճառով, որ մարդը ականատես է դառնում որևէ մեկին սպառնացող վտանգին, վնասվածքին կամ իրեն բոլորովին անծանոթ մարդու մահվան: Նման դեպքերը անձի կողմից նույնականացման պատճառով արմատապես խախտում են անհատի անվտանգության զգացումը, առաջացնելով *վնասվածքային սթրեսի* ապրումներ, որի հոգեբանական հետևանքները բազմազան են:

Վնասվածքային սթրեսը ենթադրում է հատուկ տեսակի ապրումներ, որոնք մարդու և շրջակա աշխարհի հատուկ փոխազդեցության արդյունքն են: Դա բարդ, վնասվածքային իրավիճակներում առաջացող նորմալ ռեակցիա է այն մարդկանց մոտ, ովքեր ապրել են իրավիճակ, որը սովորական մարդկային փորձի սահմաններից դուրս է (Черепанова Е. М., 1997):

Վ.Գ. Ռոմեկը, Վ.Ա. Կոնտորովիչը առանձնացնում են վնասվածքի չորս բնութագրիչներ, որոնք կարող են առանձնացնել վնասվածքային սթրես.

1. Կատարված դեպքը գիտակցվում է, այսինքն մարդը գիտի, թե իր հետ ինչ է պատահել և ինչի պատճառով էլ վատացել է իր հոգեբանական վիճակը:
2. Իրավիճակը պայմանավորված է արտաքին պատճառներով:
3. Ապրած դեպքը քայքայում է մարդու սովորական ապրելակերպը:
4. Կատարված դեպքը առաջացնում է սարսափ և անօգնականության զգացում, որևէ նախաձեռնության անզորություն:

Ըստ Պուշկարյովի՝ վնասվածքի նկատմամբ հոգեբանական ռեակցիան ներառում է երեք հարաբերականորեն ինքնուրույն փուլեր, որոնք թույլ են տալիս բնութագրել այն որպես ժամանակի մեջ ձգված գործընթաց (Пушкарев А. Л. и др., 2000):

Առաջին փուլը հոգեբանական շոկի փուլն է, որը ունի երկու բաղադրիչ՝

1. Ակտիվության ճնշում, շրջակա միջավայրում կողմնորոշման խանգարում, գործունեության անկազմակերպվածություն:
2. Կատարվածի հերքում (հոգեկանի ինքնատիպ պաշտպանական ռեակցիա): Նորմայում այս փուլը բավականին կարճատև է:

Երկրորդ փուլը՝ վնասվածքի ազդեցությունը բնութագրվում է դեպքին և դրա հետևանքներին ուղղված հուզական ռե-

ակցիաներով: Դա կարող է լինել ուժեղ վախ, սարսափ, տագնապ, գայլույթ, լաց, մեղադրանք՝ զգացումներ, որոնք տարբերվում են արտահայտման անմիջականությամբ և ծայրահեղ ինտենսիվությամբ: Այն անցնում է «ինչ կլինի եթե...» ձևով և ուղեկցվում պատահարի անդամալիության ցավոտ գիտակցմամբ, սեփական անզորության գիտակցմամբ և ինքնախաբազանությամբ: Տվյալ փուլը կրիտիկական է այն իմաստով, որ դրանից հետո կամ սկսվում է «առողջացման պրոցեսը», կամ տեղի է ունենում վնասվածքի ամրակայում և հետսթրեսային իրավիճակի հետագա անցում քրոնիկական ձևին: Բարեհաջող հուզական արձագանքից հետո առաջանում է **երրորդ փուլը**, նորմալ արձագանքման փուլը:

Ապրած հոգեբանական վնասվածքից հետո զարգացող խանգարումները խոցում են մարդկային գործունեության բոլոր ոլորտները (ֆիզիոլոգիական, անձնային, միջանձնային և սոցիալական փոխազդեցության մակարդակ), հանգեցնում են կայուն անձնային փոփոխությունների ոչ միայն այն մարդկանց կողմից, ովքեր անմիջականորեն սթրես են ապրել, այլև իրենց ընտանիքի անդամների մոտ: Վնասվածքային սթրես ապրելու փաստը որոշ մարդկանց մոտ պատճառ է հանդիսանում հետվնասվածքային սթրեսի առաջացման համար (Е.В.Пятницкая):

Հետվնասվածքային սթրեսի բնորոշ առանձնահատկությունը հանդիսանում է հոգեվնասվածքային իրավիճակի կայուն երկարատև ապրումների առկայությունը (վերջինս հետվնասվածքային սթրեսի տարբերությունն է այլ տագնապային, դեպրեսիվ և ներքոտիկ խանգարումներից): Այստեղ խոսքը բառացիորեն վերաբերում է մարդկանց կողմից վերապրվող իրավիճակների հոգեբանական հետևանքների ուսումնասիրմանը, որոնց մարդկությունը բախվում է իր գոյության ողջ ընթացքում:

Հետվնասվածքային սթրեսը սովոր-

րաբար ի հայտ է գալիս հոգեբանական վնասվածքից հետո առաջին հնգամսյակում: Սակայն ախտանշանները կարող են ի հայտ գալ ինչպես անմիջապես վնասվածքից հետո, այնպես էլ մի քանի տարի անց: Մարդիկ անընդհատ մտքերով վերադառնում են կատարվածին և փորձում են գտնել բացատրություն: Ոմանք հավատում են, որ դա ձակատագրի նշան էր, ոմանց մոտ անարդարության զգացումից առաջանում է զայրույթ, հաճախ ֆրոստրաստիվ վիճակներ: Ապրումները միջնորդավորված դրսևորվում են անվերջ խոսակցությունների ձևով, ցանկացած առիթով և առանց առիթի: Շրջապատող մարդկանց անտարբերությունը նրանց խնդրին նպաստում է նաև մեկուսացման և լրացուցիչ վնասվածք հասցնում տառապողին (Ахмедова Х. Б):

Հետվնասվածքային սթրեսը վնասվածքային սթրեսի հանդեպ ոչփսիխոտիկ ուշացած ռեակցիա է, որը հոգեբանական խանգարումներ կարող է առաջացնել գրեթե բոլոր մարդկանց մոտ (И.Г. Малкина-Пых): Հետվնասվածքային սթրեսային խանգարումներ առաջացնող երևույթների շրջանը բավականին լայն է և ընդգրկում է մի շարք իրավիճակներ, երբ սեփական կյանքին կամ մտերիմ մարդու կյանքին, ֆիզիկական առողջությանը կամ «ես»-ի կերպարին վտանգ է սպառնում: Հետվնասվածքային սթրեսային խանգարումը (PTSD — Posttraumatic Stress Disorder) սահմանվում է որպես վնասվածքային սթրես ապրած մարդկանց մոտ դիտվող ախտանշանների համալիր: Ենթադրվում է, որ ախտանշանները կարող են ի հայտ գալ անմիջապես վնասվածքային իրավիճակում գտնվելիս և կարող են առաջանալ մի քանի տարի անց (Е.В.Пятницкая):

Իրենց արտահայտման և ընթացքի առանձնահատկություններին համապատասխան տարբերակում են հետվնասվածքային սթրեսի երեք ենթատեսակ (Ромек В. Г., Конторович В. А., 2004).

- *Սուր*, մինչև եռամսյա ժամկետներում առաջացող (սուր սթրեսային խանգարման մասին չէ խոսքը, որը զարգանում է ճգնաժամային պատահարից հետո մեկ ամսում),
- *Քրոնիկական*, երեք ամսից ավել տևող,
- *Հեղաձուլված (ուշացած)*, երբ խանգարումն առաջանում է վնասվածքից վեց կամ ավելի ամիս անց:

Ներկայումս մի շարք արտասահմանյան հեղինակներ (Catherine C. Classen, Clare Pain, Nigel P.Field, Patricia Woods) առաջարկում են համալրել հետվնասվածքային խանգարումները ևս մի կատեգորիայով՝ *հետվնասվածքային անձնային խանգարումներ* (կամ PTSD — posttraumatic personality disorder), որը բավականին տրամաբանական քայլ է հանդիսանում, քանի որ հետվնասվածքային սթրեսի քրոնիկական ախտանշանների առկայությունը հաճախ նկատելի է վնասվածք ապրած մարդու հետագա կյանքի ողջ ընթացքում: Անխոս, նման վնասվածքը կարող է անջնջելի հետք թողնել մարդու հոգեկանում և հանգեցնել նրա անձի /պարոլոգիական/ հիվանդագին կերպարանափոխման: Ապրած վնասվածքի քայքայիչ ազդեցությունը շարունակվում է մարդու ողջ կյանքի ընթացքում՝ խախտելով անվտանգության և ինքնավերահսկման զգացումների զարգացումը: Այն առաջացնում է ուժեղ, երբեմն անտանելի լարվածություն: Եվ եթե այդ լարվածությունը չի հանվում, ապա հոգեկանի ամբողջականությանը լուրջ վտանգ է ապառնում: Ընդհանուր առմամբ դա հենց այն ճանապարհն է, որով ընթանում է հետվնասվածքային սթրեսային իրավիճակի զարգացումը (Е.В.Пятницкая):

Այսպիսով, հետվնասվածքային սթրեսը վնասվածքային իրադարձության ազդեցությամբ առաջացող տագնապային խանգարում է, իսկ վնասվածքային իրադարձությունների է ենթարկվում մեր մոլորակի բնակչության

նշանակալի զանգվածը:

Գրականության վերլուծություններն ու կյանքի փոփոխությունները հիմնավորում են հետվնասվածքային սթրեսի հիմնախնդրի կարևորությունը: Ընդհանուր առմամբ, այն բևեռայնորեն տարբերվում է սթրես հոգեվիճակից: Այսինքն դրանց առաջացման հոգեֆիզիոլոգիական բնութագրերն ու մեխանիզմները իրենց գործառնական առումով խիստ

տարբեր են:

Հետվնասվածքային սթրեսը ծայրահեղ ծանր և ճնշող վիճակ է, ինչպես տվյալ մարդու, այնպես էլ նրան շրջապատող մարդկանց համար: Այս իրադարձությունները մարդկային փորձի սահմաններից վեր են: Երբեմն, հոգեկանի պահեստային հնարավորությունները բավարար չեն, որպեսզի հաղթահարեն սթրեսի վերապրումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Александровский Ю. А., Лобастов О. С., Спивак Л. И., Шукин В. П. Психогении в экстремальных условиях — М.: Медицина, 1991. — 96 с.
2. Анохин П. К. Принципиальные вопросы общей теории функциональной системы // Принципы системной организации функций. — М., 1973.
3. Тарабрина Н. В. Практикум по психологии посттравматического стресса. — СПб: Питер, 2001. — 272 с: ил. — (Серия «Практикум по психологии»).
4. Малкина-Пых И. Г. Экстремальные ситуации. — М.: Изд-во Эксмо, 2005. — 960 с. — (Справочник практического психолога).
5. Ахмедова Х. Б. Посттравматические личностные изменения у гражданских лиц, переживших угрозу жизни/Х.Б. Ахмедова //Вопросы психологии.-2004.-№3/май-июнь/.-С.93-102.
6. Пятницкая, Е. В. Психология травматического стресса : учеб.пособие. — Балашов : Николаев, 2007. — 140 с.
7. Ромек, В. Г. Психологическая помощь в кризисных ситуациях / В. Г. Ромек, В. А. Конторович, Е. И. Крукович. — СПб. : Речь, 2004. — 256 с
8. Селье, Г. Очерки об адаптационном синдроме / Г. Селье.-М.: МЕДГИЗ, 1991. 54 с.
9. Hobfoll S. E. The ecology of stress. — N. Y.: Hemisphere, 1988.
10. Horowitz M.J. Stress-response syndromes (2nd ed.). — Northvale, NJ:Aronson.
11. Krystal H. Trauma and affect // Psychoanalytic study of the child. —1978.-V. 33 . — P . 81-116.
12. Lazarus R. 5. Psychological stress and the coping process. — N. Y.:McGraw-Hill, 1966.

ПСИХОФИЗИОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ПОСТТРАВМАТИЧЕСКОГО СТРЕССА КАК РЕАКЦИИ ОБЕСПЕЧЕНИЯ ЦЕЛОСТНОСТИ ЛИЧНОСТИ

МЕЛЬС МКРТУМЯН

Доктор психологических наук, профессор, заведующий кафедрой теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатур Абовяна

ЛИЛИТ САРГСЯН

Аспирант кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье авторы рассматривают постановку проблемы посттравматического стресса, проявления психофизиологических характеристик и фазы, а также особенности воздействия на организм личности. Путем психологического анализа выясняются основные характеристики с целью профилактики, предлагаются пути и средства психологического сопровождения посттравматического стресса.

PSYCHO-PHYSIOLOGICAL MANIFESTATIONS OF POSTTRAUMATIC STRESS AS REACTIONS TO ENSURE THE WHOLENESS OF PERSONALITY

MELS MKRTUMYAN

Head of the Chair of Theory and History of Psychology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of psychological sciences, professor.

LILIT SARGSYAN

Chair of Theory and History of Psychology, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Postgraduate Student

The article discusses the setting of the stress, posttraumatic stress disorder issue, the characteristics of psycho-physiological manifestations, personality characteristics and the typical stages of their impact on the body. It reveals the psychological analysis of the main characteristics for the prevention and it is suggested the ways and resources of psychological support of posttraumatic stress.

ՀԱՍՄԻԿ ՇԱՓԱՂԱԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ ամբիոնի դոցենտ, քաղաքական գիտությունների թեկնածու

ԼԻԴԵՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հոդվածում ներկայացված է լիդեր քաղաքական գործչի և ընդհանրապես լիդերության հոգեբանական առանձնահատկությունները արդի համաշխարհային զարգացումների լույսի ներքո: Թեև լիդերության տարբեր հայեցակարգային մոտեցումները արժեքավոր են ժամանակակից սոցիալական գիտակարգերի (քաղաքագիտություն, մենեջմենթ, սոցիոլոգիա և սոցիալական, քաղաքական, անձի հոգեբանություն) համատեքստում և հիմք են ծառայել նոր հետազոտությունների համար, այնուհանդերձ դրանցում առկա են բազմաթիվ տարակարծություններ, վիճելի հարցեր և հակասություններ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ լիդերություն, քաղաքական վարք, փոխակերպվող հասարակություն, վարքաձևի փոփոխություն, քաղաքացիական խաղաղություն, միջազգային կայունություն, վարքի սուբյեկտներ, քաղաքական մշակույթ, քաղաքական կարծրատիպեր:

Համաշխարհային հանրության զարգացման արդի փուլում, երբ տեղի են ունենում սրընթաց զարգացող անսխաղեպ իրադարձություններ և խոշորամասշտաբ մոդիֆիկացիաներ, գլոբալիզացիայի և անջատողականության իրարամերժ հակասություններ, ահաբեկչական գործողություններ, տարեթնիկ և տարակրոն քաղաքակրթությունների պայքար, քաղաքացիական խաղաղությանը և միջազգային կայունությանը սպառնացող բախումներ ու ձգնաժամեր, առանցքային դեր ու նշանակություն է ձեռք բերում արդյունավետ

լիդերության հիմնախնդիրը՝ միտված վերոհիշյալ երևույթների բացասական պոտենցիալի մարմանը: Փոխակերպվող հասարակություններում տեսանելի են շղթայական հերթափոխություններ՝ միտված մի կողմից՝ անկայունությունների ու անորոշության, զանգվածային տրամադրությունների վերելքների ու վայրէջքների, արժեհամակարգերի, համոզմունքների, գնահատականների, հոգեվիճակների ու վարքաձևերի փոփոխություններին, մյուս կողմից՝ այդ ֆոնի վրա ընդգծված ձևով դրսևորվում են նաև լիդերության տարաբնույթ փոխակերպումները: Այս համատեքստում լիդերության տիպերի բազմակողմանի ուսումնասիրությունը, դրական և բացասական փոխակերպումների բացահայտումն ու վերհանումը այսօր առավել, քան երբևէ, հրատապ է: Դա մեծապես պայմանավորված է նրանով, որ արդյունավետ լիդերությունը առանցքային դեր է կատարում քաղաքականության մեջ՝ նորամուծությունների և բարեփոխումների իրականացման, այդ գործընթացին ուղեկցող հնի ու նորի միջև հակասությունների լուծման, հասարակության նպատակամետ ուղղորդման, կենսունակության բարձրացման և դժվարությունների հաղթահարման համատեղ գործում:

Բոլոր ժամանակներում և ամենուրեք կառավարման և լիդերության հիմնահարցերը մեծ մտածողների ուշադրության կենտրոնում են եղել: Մասնավորապես սոցիալ-հոգեբանական գիտական ուսմունքների տեսական կառուցվածքի համար հիմնական սկզբնաղբյուր են ծառայել անտիկ աշխարհի փիլիսոփա-

ների ու Ն.Մաքիավելիի գաղափարները, մյուս կողմից՝ Մ. Վեբերի լեգիտիմ լիդերության տեսությունը: Լիդերության տիպերը և ղեկավարման ոճերը բնորոշող հիմնական եզրույթները փոխառվել են հենց այդ մտածողների աշխատություններից: Առհասարակ, կառավարման բնագավառում լիդերության մասին գիտագործական և տեսական նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական ուղղվածությամբ աշխատանքներն ի հայտ եկան 20-րդ դարի սկզբներին տնտեսագիտության, քաղաքագիտության և հոգեբանության գիտակարգերի սահմանագծերում:

Եթե լիդերությունն ուսումնասիրող դպրոցները դասակարգենք սկզբնավորման ժամանակագրական կարգով, ապա կստացվի հետևյալ պատկերը:

1. անձնային գծերի /traits school/ լիդերության դպրոց (Ֆ. Գալտոն [16], Վ. Վուդս [24], Ռ. Սթոքդիլ [23], Բ. Բաս [11], Դ. Օլշանսկի [6], Ե. Հանթեր և Բ. Ջորդան [19], Զ. Բարբեր [10]),

2. վարքագծային /behavioral/ լիդերության դպրոց (Կ. Լևին և Ռ. Լիպիտ [20], Ռ. Մուտոն և Զ. Բլեյք [3] և ուրիշներ),

3. իրադրային հավանականության լիդերության դպրոց (Կ. Մարքս [1], Վ. Բենիս [13, էջ 4-5], Ֆ. Ֆիդլեր [15], Ռ. Հաուս [17], Վ. Վոուդ [5], Զ. Ադաիր [2]),

4. հարաբերությունների լիդերության դպրոց (Ռ. Լայկերտ [21]),

5. նոր /փոխակերպվող/ լիդերության դպրոց (Մ. Վեբեր [4], Բ. Բաս և Բ. Ավոլիո [11], Զ. Հովել [17]):

Ներկայումս լիդերության վերաբերյալ բազմաթիվ սոցիալ-հոգեբանական տեսությունները պայմանականորեն կարելի է խմբավորել հինգ գլխավոր հոգեբանական դպրոցներում՝ անձնային հատկանիշների լիդերության (Թ. Քարլայդ, Է. Ջենիքս, Օ. Թեդ, Ս. Կեմֆ, Ռ. Բադեր և ուրիշներ), իրադրական և հավանական լիդերության (Ֆ. Ֆիդլեր, Մ. Էվանս, Վ. Վոուդ, Ֆ. Ցետոն, Պ. Հեռսի, Կ. Բլանշար, Ռ. Օսբորն, Զ. Հունտեր,

Ռ. Ջաուչ և ուրիշներ), վարքագծային լիդերության (Ռ. Լիպիտ, Կ. Լևին, Ռ. Մուտոն, Զ. Բլեյք և ուրիշներ), հարաբերությունների լիդերության (Դ. Մակ Գրեգոր, Դ. Լայկերտ, Կ. Արջիրիս և ուրիշներ) և նոր լիդերության (Դ. Բարնս, Բ. Բաս, Ռ. Հաուս, Զ. Հովել, Զ. Կոնգեր, Ռ. Կանունգո): Յուրաքանչյուր ուղղության արդյունավետությունն ու ազդեցությունը վիճահարույց է եղել տարբեր ժամանակաշրջաններում:

Լիդերության տեսությունները մի կողմից՝ թերի են իրենց միակողմանիությամբ կամ մեկ կամ մի քանի բաղադրիչների դերը գերազանցատելու միտումով, մյուս կողմից՝ էկլեկտիկ ընդհանրություններով փորձում են հաղթահարել հիմնախնդիրների մասնատվածությունն ու առանձին ուսումնասիրությունների սուբյեկտիվ լիզմը:

Հոգեբաններն առանձնացնում են մարդկային ակտիվության երեք ձևեր: Մարդկային գործունեության այս հոգեբանական դասակարգումն անհրաժեշտ է նաև քաղաքականության, քաղաքական գործընթացների ռեալ նկարագրման համար: Նրանք իրենց դասակարգումներում հիմնվում են հետևյալ հիմնարար վարքային սկզբների վրա՝ բնագոյներ, հմտություններ և ողջամտություն [7, էջ 98]:

Բնագոյները վարքի բնածին մոդելներն են, որոնք սահմանված են կենսաբանորեն: Բնագոյները ներառում են ինչպես մարդու վարքի տարբեր գործողությունները (շնչառությունից սկսված մինչև քայլելը), այնպես էլ ավելի բարդ բնածին պահանջունքները (ինքնապահպանում, սերնդի շարունակություն և այլն): Քաղաքականության մեջ նկատելի են մարդկային բնագոյների բոլոր դրսևորումները՝ ագրեսիա, ժլատություն, ինքնապահպանություն, համերաշխություն և այլն: Քաղաքականության մեջ բնագոյային վարքի հիմքը բացատրվում է նախ և առաջ էներգիայի ուղղորդմամբ այս կամ այն արարք-

ների, որոնք հաճախ գիտակցված չեն մարդու կողմից:

Այսպես, ինքնապահպանման բնագոյը դրդում է քաղաքական գործիչներին պայքարել հանուն իշխանության: Քաղաքագետների համար մինչև հիմա վիճահարույց է Ստալինի, իբրև քաղաքական գործչի կերպարի խստության հանգամանքը: Քաղաքական հոգեբանները [8] գալիս են այն եզրահանգման, որ Ստալինը, փրկելու համար իր վիրավորված ինքնագնահատականը ի տարբերություն իր էտալոնի՝ Լենինի, դրդված էր կիրառել այնպիսի բնագոյային վարքի ձևեր, ինչպիսիք են՝ կոպտությունը, ագրեսիան և բռնությունը: Որոշ հեղինակներ կարծում են, որ այդ վարքի ձևերը բնածին են, մյուսներն այն բացատրում են որպես կործանման արձագանք: Այնուամենայնիվ, ագրեսիայից բացի կործանումն առաջացնում է անտարբերության զգացում, հետընթաց, ենթարկում և խուսափում [14]: Քաղաքականության մեջ այս բոլոր վարքագծային դրսևորումները բացատրվում են որպես արձագանք իրադրություններին և հանգամանքներին, որտեղ գործում են վարքի սուբյեկտները:

Վարքի երկրորդ ձևը՝ **հմտություններն են**: Ի տարբերություն բնածին բնագոյների, մարդկային վարքերի մեծամասնությունը կյանքի ընթացքում հմտությունների ձեռքբերման արդյունք են: Հմտություններ պահանջվում են քաղաքական գործչից, սովորական ընտրողից, կուսակցության անդամից: Խոսելով քաղաքական հմտությունների մասին՝ նկատի ունեմ որոշակի կարողություններ, որոնք պահանջվում են յուրաքանչյուր քաղաքական գործընթացի մասնակցի կողմից իր դերը և գործառնությունները ձիշտ կատարելու համար, սովորություններ, որոնք առաջանում են քաղաքացիների մոտ որոշակի քաղաքական մշակույթում, կարծրատիպեր, որոնք հանդես են գալիս կրկնվող քաղաքական գործողությունների արդյուն-

քում և դյուրին են դարձնում որոշումների ընդունման գործընթացը:

Բանական կամ ողջամիտ գործողությունները հանդիսանում են վարքի երրորդ ձևը: Քաղաքականության մեջ՝ ինչպես և այլ ոլորտներում, բանական և ողջամիտ գործողությունները կարելի է գնահատել տարբեր ձևերով: Բանականության մեկ հանգամանք կարելի է համարել արդյունավետությունը (նպատակի համեմատությունը արդյունքի հետ), մյուսը՝ քաղաքական գործողությունների գիտակցվածությունը: Այս ձևը տարբերվում է մնացած երկուսից նպատակադրվածությամբ: Որպեսզի քաղաքականությունն ունենան պատակադրված բնույթ, որը կմիավորի նրա տարբեր մասնակիցներին, կիրառում են տարբեր միջոցներ: Առաջին հերթին այս հարցը լուծում է տարբեր ծրագրեր՝ գաղափարախոսական սխեմաները, որոշակի քաղաքական ակցիաների հայեցակարգերը, քարոզարշավները: Առանձին անհատի քաղաքական վարքի համար շատ կարևոր դեր է խաղում գաղափարախոսությունը, որը նպատակների և արժեքների կենտրոնացված և համակարգված արտահայտումն է քաղաքականության մեջ: Իհարկե, պարզ է, որ շատ դեպքերում վարքը չի համընկնում ուսմունքներում գրված նպատակների և արժեքների հետ, վերջիններս ուղղակի հանդես են գալիս որպես ուղեցույց:

Անձի քաղաքական գիտակցությունն առաջանում է իր համար արտաքին նպատակների և քաղաքական համակարգի արժեքների, ընտանիքի և շրջակա միջավայրի ներքնայնացման ընթացքում: Դառնալով վերջինիս մասնակր՝ այդ գաղափարները, նպատակները և համոզմունքները կարող են որոշել վարքը: Անձի մոտ խոր համոզմունքներ զարգացնելու համար, որոնք որպես «օրենք» կորոշեն նրա վարքը քաղաքականության մեջ, անհրաժեշտ է ներգրավել անձի բոլոր «հարկերը», նրա գիտակցության և գործունեության բոլոր

մակարդակները: Ժամանակակից հոգեբանական գրականության մեջ առանձնացնում են անձի կառուցվածքի երեք առաջատար մակարդակներ. կենսաբանական, հոգեբանական և սոցիալական: Սկսելով կենսաբանական մակարդակից՝ մենք սնտենում ենք հոգեբանականին, իսկ հետո արդեն սոցիալականին՝ նկատի ունենալով, որ ամենաբարձր մակարդակն իր մեջ համակարգում է ստորին մակարդակների հատկանիշները և ղեկավարում նրանց:

Գիտնականներին վաղուց հետաքրքրում է այն հարցը, թե արդյոք անձի կենսաբանությունն ազդեցություն ունի նրա քաղաքական վարքի վրա: Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ գոյություն ունի կենսաքաղաքականության բաժին: Այն ուսումնասիրում է Homo sapiens-ի բնության, ագրեսիայի, պաշտպանողական ռեակցիաների և այլ հիմնարար հատկանիշների առաջացումը քաղաքականության մեջ: Ոչ պակաս կարևոր է հասկանալ, թե քաղաքականության մեջ ինչպիսի տեղ են զբաղեցնում այնպիսի կենսաբանական բաղադրիչներ, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, ժառանգականությունը, խառնվածքը և այլն: Այս բաղադրիչները մեզ հետաքրքրում են որպես քաղաքական վարքի որոշիչներ: Առաջին հերթին այս տվյալների հիման վրա է կատարվում այն ընտրությունը, թե ով կզբաղեցնի առաջատար դիրք քաղաքականության մեջ: Այսպիսով, քաղաքական գործչի առաջադրման համար շատ կարևոր է նրա տարիքը:

Հայտնի է, որ անցումային շրջաններում և ճգնաժամային իրավիճակներում, ղեկավար պաշտոնների համար հաճախ առաջադրվում է երիտասարդ սերունդը: Դա կապված է հին քաղաքական վերնախավի փոխարինման հետ և նոր սերնդի ներկայացուցչի առաջադրման հետ, ով որևէ առնչություն չի ունեցել նախորդ ղեկավարի հետ՝ տարիքից ելնելով: Այսօր Ռուսաստանի Դաշնությունում կան

շատ նախարարներ, որոնց տարիքը չի գերազանցում քառասունը:

Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ քաղաքական գործընթացի կայուն զարգացման ընթացքում քաղաքական համակարգի բարձր մակարդակներում առաջ են գալիս քաղաքական գործիչներ, որոնք երկար ժամանակ են զբաղեցնում պաշտոն: Պատկառելի տարիքը հատուկ դեր է խաղում ավանդական քաղաքական մշակույթներում, որտեղ այն խորհրդանշում է իմաստություն: Օրինակ՝ իրանական կրոնական առաջնորդը՝ Խոմեյնի, Չինաստանի ծեր առաջնորդները՝ Մաո Ցզեդուն, Դեն Սիայո Պինը և այլք:

Տարիքը գուտ կենսաբանական բնութագիր է, որը չունի բացարձակ քաղաքական նշանակություն: Սակայն տարիքային տվյալները ձեռք են բերում քաղաքական նշանակություն տարբեր ավանդույթների, քաղաքական կարիքների և տվյալ պահի իրադարձությունների ազդեցության ներքո:

Ոչ պակաս կարևորություն ունի *սեռը*՝ քաղաքական գործառույթներն իրականացնելիս: Կանայք միշտ էլ որոշակի նշանակություն են ունեցել քաղաքականության մեջ, բայց հաճախ ոչ պաշտոնական դիրքերում, այլ «ետնաբեմում»:

Խառնվածքը՝ նյարդային համակարգի հատկանիշ է, որն անհատական ինքնատիպություն է հաղորդում ոչ միայն առանձին անձանց քաղաքական վարքին, այլ նաև ամբողջի: Այսպես, փոթորկոտ խառնվածքը կարող է քաղաքականության մեջ սխալ հաշվարկման և անզսպության պատճառ հանդիսանալ: Քաղաքական գործիչների մոտ խառնվածքի շնորհիվ ձևավորվում են արարքները և վերջիններիս օգնությամբ հետևորդների մոտ առաջացնում են հետաքրքրություն դեպի քաղաքական իրադարձությունները: Բուռն և փոթորկոտ խառնվածք ունեցող քաղաքական գործչի օրինակ կարող է հանդիսանալ Նիկիտա Խրյուշովը, ով ՄԱԿ-ում կոշի-

կով հարվածում էր ճառաբեմին՝ լսարանի ուշադրությունը գրավելու համար:

Թույլ ընդգծված խառնվածքը նույնպես կարող է վատ ազդեցություն ունենալ քաղաքականության մեջ, քանի որ կողմնակիցները նման խառնվածք ունեցող գործչին մեղադրում են աննախաձեռնողականության և իրադարձություններին անմիջապես չարձագանքելու մեջ:

Ընդհանուր հոգեբանությունից հայտնի է, որ խառնվածքը հանդիսանում է ժառանգական բնութագիր: Այնուամենայնիվ, դրա վարքագծային արտահայտումները կարող են փոփոխվել սոցիալական միջավայրի ազդեցության տակ՝ ընդունելով այն ձևերը, որը տվյալ մշակույթը համարում է ընդունելի:

Կենսաբանական բնութագրերից բացի քաղաքականության մեջ հաշվի են առնվում նաև ֆիզիկական տվյալները, օրինակ՝ կամքը, ուժը, արդյունավետությունը, սթրեսային վիճակները հաղթահարելու ունակությունը և այլն: Չնայած որ այս կենսաբանական ցուցանիշները դրված են ժառանգական հիմքում, այնուամենայնիվ հանդիսանում են մարդու անձնական ջանքերի, կամքի արդյունք՝ հաղթահարելու ֆիզիկական թերությունները: Ամերիկայի նախագահ Ռուզվելտը գամված էր անվասայլակին, Քենեդին կրում էր կոշտ սեղմիրան ողնաշարի խնդիրներ ունենալու պատճառով: Սակայն այդ երկու քաղաքական գործիչներն ամերիկացիների հիշողության մեջ չմնացին իրենց ֆիզիկական թերություններով, այլ ընդհակառակը, երկուսն էլ արժանացան իրենց համաքաղաքացիների երախտագիտությանը, որպես կամային և հեռանկարային քաղաքական գործիչներ:

Այստեղ պետք է նշենք, որ այն ինչ կարողացան անել Քենեդին և Ռուզվելտը, պարտադիր չէ, որ կարողանան անել մնացածները, քանի որ արտաքին տեսքը մեծ դեր ունի հասարակության կողմից քաղաքական գործչի ընկալման և ընդունման հարցում: Հաստ ակնոց-

ների առկայությունը, թոշնած մարմինը կամ էլ բարձր կրունկները, որոնք թաքցնում են կարճահասակ լինելու փաստը, կարող են խաչ քաշել նրա կարիերայի վրա, անկախ նրա որոշակի արժանիքներից, որոնք ընդունվում են իրենցընտրողների կողմից:

Անձի հոգեբանական մակարդակը ներառում է հետևյալ տարրերը՝ զգացմունքները, կամքը, հիշողությունը, մտածողության ունակությունը, բնավորությունը: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ազդել քաղաքական վարքի վրա: Քաղաքականության մեջ կարևոր դեր են խաղում զգացմունքները՝ վախը և ուրախությունը, զարմանքը և ստելությունը, նախանձը և շահը: Սրանք ոչ միայն ուղեկցում են քաղաքականությանը, այլ շարժիչ ուժ են դառնում, երբ համատարած բնույթ են ստանում:

Կամքը, անձի ամենագիտակցված հոգեբանական տարրն է: Յուրաքանչյուր ոլորտում առանցկամքի անհնարին է հասնել հաջողության: Քաղաքականության մեջ կամքը ոչ միայն առաջադրված նպատակների իրականացումն է, այլ ազգային շահը նեղ անձնական և խմբային շահերից վեր դասելու կարողություն: Ոչ պակաս դեր է խաղում հիշողությունը քաղաքականության մեջ Առաջին հերթին լավ հիշողությունը լիդերի կարևորագույն հատկանիշներից մեկն է, ով ստիպված է մեծ քանակի տեղեկատվություն տեղավորել իր ուղեղում: Այստեղ խոսքը գնում է ոչ միայն հիշելու մասին, այլև այդ տեղեկատվության կարևոր բաղադրիչներն ընտրելու և պահելու մասին: Հայտնի է, որ քաղաքական գործչի համար կարևոր նշանակություն ունի մարդկանց դեմքերը և նրանց կողմից արտահայտած հիշելու ունակությունը, որոնք բնագույնի մակարդակի վրա թույլ են տալիս ձևավորել աշխատակիցների և հակառակորդների նկատմամբ իրենց վերաբերմունքը: Քաղաքական վստահությունը, որը քաղաքացիները զգում են քաղաքա-

կան գործչի նկատմամբ, ձևավորվում է տարբեր ձևերով: Եթե տոտալիտար գիտակցության կրողի համար այն մոտ է կրոնական հավատքին և չի պահանջում ոչ մի ռացիոնալ բացատրություն, ապա դեմոկրատականի համար այն ավելի շատ մոտ է գիտական իմացությանը: Եթե առաջին դեպքում բավական է միայն առաջնորդի մեծարումը, ապա երկրորդ դեպքում մեծանում է ուշադրությունը դեկավարի անձնային գծերի նկատմամբ: Կարևոր է դառնում նաև այն, թե ինչ պաշտոններ է նա զբաղեցրել անցյալում և ինչպես է կատարել իր պարտականությունները, իր կերպարը և նրա տեսակետները տարբեր հարցերի վերաբերյալ:

Մանրակրկիտ վերլուծելով լիդերի անձնային հատկանիշներն ու որակները՝ կարևորվում է այն հարցը, թե լիդերի անձնային հատկանիշներն ինչ ներգործություն են ունենում քաղաքական գործընթացների վրա, այլապես դրանք դառնում են ինքնանպատակ և անիմաստ:

Բոլշևիկները, ելակետ ընդունելով դասակարգային պատկանելությունը և նվիրվածությունը բոլշևիկյան գաղափարախոսությանը, չէին արժևորում քաղաքականության մեջ անձնային հատկանիշները: Սակայն հատկանիշները բոլորովին էլ երկրորդական չեն:

Իբրև ընդգծված լիդեր բոլոր դրսևորումներով՝ դրական և բացասական, ուշագրավ է քննարկել Ստալինի հակասական բնավորությունը, օրինակ, բոլորին հայտնի կոպտությունը, իբրև որոշակի սոցիալական երևույթների արտացոլում: Նրա անձի գլխավոր հատկանիշներից մեկը նրա վրեժխնդրության պահանջմունքն էր, բոլորի նկատմամբ գերազանցության հասնելը: Ստալինն ուներ պաթոլոգիային հասնող նախանձի զգացում, որն էլ պայմանավորում էր նրա ռիսակալությունը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր գերազանցում էին նրան այն հատկանիշներով, որոնցում,

ըստ նրա, նա չուներ իրեն հավասարը: Նա ուներ երկու հատկանիշ՝ ծուլություն և նախանձ, նախանձ նրանց նկատմամբ, ովքեր գիտեին կամ կարողանում էին ավելին, քան նա: Նրա դժբախտությունը կայանում էր նրանում, որ ինքը չէր կարողանում հավատացնել բոլորին, որ նա մեծ է բոլորից: Եվ ինչ-որ հրեշավոր բան կար այն երևույթի մեջ, որ իր այդ դժբախտության համար նա չէր կարող վրեժխնդիր չլինել մարդկանցից, բոլոր մարդկանցից և հատկապես նրանցից, ովքեր ինչ-որ բանով ավելի բարձր էին ու ավելի լավ էին իրենից: Եթե որևէ մեկն ավելի լավ էր խոսում, նա դատապարտված էր, ինքն այլևս նրան կենդանի չէր թողնի, քանի որ այդ մարդը նրա համար հավերժական հիշեցում էր այն բանի մասին, որ ինքն առաջինն էր, բայց ոչ լավագույնը:

Ստալինի անձի հոգեբանությունը առավել ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա ներաշխարհի, նրա ներանձնային հոգեբանական առանձնահատկությունները:

Ընդհանրապես նրա համար մարդիկ բաժանվում էին երկու խմբի՝ համախոհներ և թշնամիներ, ում դեմ նա պետք է պայքարեր, երկրորդ խումբ նա առհասարակ չէր տարբերակում, անձանդոթները կարող էին պատկանել և՛ առաջին, և՛ երկրորդ խմբին: Պետք է նշել Ստալինին հատուկ մի էական հատկանիշ ևս, նա չէր տարբերակում անձնական հարաբերությունները քաղաքական հարաբերությունները: Այստեղից էլ այն համոզմունքը, որ իր անձնական թշնամիները և գաղափարական թշնամիները նույնական են: Կարծում ենք, սրա հիմքում ընկած էր Ստալինի խորին համոզմունքը սեփական անսխալականության և անգերազանցելիության նկատմամբ, որը հիմք է տալիս տրամաբանելու, որ նրա դեմ դուրս եկողները դուրս են գալիս գաղափարի դեմ որի մարմնացումը ինքն էր՝ «ժողովուրդների հայրը և մեծ առաջ-

նորդը»: Գործընկերների և ականատեսների վկայությամբ Ստալինը ծայրահեղ կասկածամիտ էր, իսկ կյանքի վերջին տարիներին նրա կասկածամտությունը արդեն չէր ենթարկվում բանական որևէ բացատրության: Ստալինի պարանոյան առավել ցայտուն դրսևորվեց նրա անտիսեմիտիզմում: Կյանքի վերջին տարիներին նրան ամբողջովին կլանել էր «սիոնիստական դավադրությունների» գաղափարը, ինչը նրան դրդեց կազմակերպելու «անձնուղ կոսմոպոլիտների դեմ» ոչնչացման միջոցառումներ և նույնիսկ ողջունեց Հիտլերի այն ծրագիրը, որը «վերջնականապես կլուծեր հրեական խնդիրը»՝ այն համարելով «հանճարեղ»: Կարելի է ասել, որ այս պատժիչ գործողությունները թեև պաշտոնապես շղարշված էին «հակաբոլշևիկյան գործողություններով», այնուամենայնիվ, դրանց խորքային պատճառները Ստալինի անձնային հատկանիշների մեջ են:

Ստալինը ծայրահեղ անհանդուրժող էր իր անձի քննադատության և առհասարակ այլախոսության նկատմամբ: Ինչպես նշում է Է.Ֆրոմմը. «Նարգիզականության հիվանդագին էլեմենտներից մեկն էլ նարգիզականության որևէ օբյեկտի քննադատության վերաբերյալ հուզական հակազդումն է... նարգիզական մարդը իր հասցեին ուղղված ցանկացած քննադատությանն արձագանքում է ծայրահեղ չարությամբ: Նա հակված է քննադատությունն ընկալել որպես թշնամական հարձակում, քանի որ, հենվելով իր նարգիզականության վրա, նա չի կարողանում պատկերացնել, որ քննադատությունը կարող է լինել արդարացի: Նրա չարացածության պատճառը պարզ է դառնում, եթե հիշեք, որ նարգիզական մարդը աշխարհի հետ կապից դուրս է, որ նա միայնակ է և վախի մեջ է: Միայնության և վախի այդ զգացումը նա փոխհատուցում է իր նարգիզական մեծարմամբ»: Եվ եթե նարգիզական տիպի ընկալմամբ նա ինքը աշխարհին է, ապա գոյություն չունի

արտաքին աշխարհը, որը կարող է նրան վախ ներշնչել, եթե նա ամեն ինչ է, ուրեմն նա արդեն միայնակ չէ: Դրա համար էլ նա սկսում է զգալ, որ իր ամբողջ գոյությունը վտանգված է, եթե դիպչում են նրա նարգիզականությանը: Եթե վախից նրա միակ պաշտպանությունը՝ ինքնամեծարումը, վտանգի տակ է, նորից ծագում է վախը և նրան դրդում պաշտպանական գործողությունների: Կարծում են, այս պարագայում արժե դիտարկել ավերիչ գործողությունների նարգիզականության հիմքը: Ավերումը այստեղ նաև տագնապի հաղթահարման ռազմավարություն է:

«Մարդկանց դեմ» շարժվելով՝ Ստալինը ցուցաբերում է այս տիպի հատուկ վարքագծի նորմեր: Նրա անձի վերաբերյալ հասարակական կարծիքի իդեալականացումը դառնում է իր գործունեության կարևոր գրավականը: Այս տիպի արժեքային համակարգը զարգացնում է «ուժը ծնում է իրավունք» կարգախոսը:

Այս դեպքում նման արժեքային համակարգի ձևավորմանը նպաստել է նաև Ստալինի սոցիալականացումը, անձնական փորձառությունը, որի ընթացքում նա յուրացրել է գործունեության համապատասխան միջոցներ:

«Կամք առ իշխանությունը» Ստալինին դրդեց ժխտել իր արմատները Ռուսաստանի հետ նույնականացման միջոցով, որի արդյունքում նա ոչ միայն կորցրեց իր արմատները, այլև ձեռք չբերեց նոր արմատներ: Նա մնաց կտրված աշխարհից, մեկուսացած և անօգնական՝ առանց աշխարհի հետ ստեղծագործական փոխգործակցության, որով պիտի ապահովվեր նրա անվտանգությունը և ձևավորեր արմատներ ունենալու զգացումը:

Ինքնահաստատման և ինքնաիրացման համար ընտրելով զանգվածային ահաբեկչության միջոցը՝ նա այդպես էլ չկարողացավ ապացուցել ինքն իրեն, որ նա լավագույնն է:

Այսպիսով, ձգտելով լինել առաջինը

քաղաքական և հասարակական բոլոր ոլորտներում՝ Ստալինը չիրացրեց իր կարողությունը՝ լինել բացառիկ և նշանակալի գոնե մեկ բնագավառում:

Հասարակությունը տարբեր պահանջներ է ներկայացնում տարբեր սեռերի քաղաքական գործիչներին: Կանանց համար այդ պահանջներն ավելի բարձր են: Դրական իմիջ ստեղծելու համար կին լիդերներին անհրաժեշտ է դրսևորել ավելի բարձր ինտելեկտ, բարոյական հատկանիշներ և անհատականության ուժ, իսկ արտաքին տեսքին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Ինչպես տղամարդ, այնպես էլ կին քաղաքական գործիչների իմիջում էական դեր է խաղում արտաքին տեսքը: Եթե տղամարդկանց արտաքին տվյալները գտնվում են կարևոր հատկանիշների առաջին տասնյակում, ապա կանանց մոտ այն առաջին տեղում է: Կին լիդերները չպետք է ամբողջությամբ նմանակեն տղամարդ լիդերներին: Խորհուրդ չի տրվում ձևավորել նույնպիսի իմիջ, ինչպիսին տղամարդկանցն է, անգամ եթե այդ մոդելը տղամարդ լիդերին մեծ հաջողություններ է բերել: Ժամանակակից կին լիդերների իմիջային մոդելներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Թեև լիդերության տիպաբանություններն ավանդաբար ունեն արական կողմնորոշում, քանի որ բոլոր ժամանակներում և բոլոր ոլորտներում լիդերների դերում գերիշխել են տղամարդիկ, սակայն գոյություն ունի նաև կանանց լիդերության տիպաբանություն:

Ներկայումս փորձագետներն առանձնացնում են կանանց հինգ իմիջային ռազմավարություններ, որոնց հետևում են ժամանակակից կին քաղաքական գործիչները:

Երկար լեդի: Այս տիպը երբեմն անվանում են «տղամարդկային մոդել»: «Երկար լեդի» հուզականորեն կայուն է, ենթակաների նկատմամբ հանդես է բերում դաժանություն, խստություն

և ընդգծված ինքնիշխանություն, ցուցադրաբար ինքնավստահ է, մերժում է երկխոսությունը և կարծիքների փոխանակումը, որպես արդյունավետ միջոց: Միաժամանակ աչքի է ընկնում մասնագիտական բարձր որակներով: Նա խիստ է ենթակաների նկատմամբ, պահանջկոտ, մոտիվացիայի համակարգում հենվում է պատժի վրա, ենթականերից սպասում է կարգ ու զիջողականություն, նրանց նախ և առաջ գնահատում է մասնագիտական որակներով:

Կարծում ենք, «երկար լեդի» հիմնականում ցանկանում է ինքնահատուկել լիդերի դերում, նա հաճախ ուժեղ ավտորիտար է՝ ցանկանալով ձեռքազատվել «թույլ սեռ» կարծրատիպից:

Այսպես, կառավարման ոճը բնորոշող թեստի արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում կին ղեկավարները կիրառում են առավելագույն կառավարման կոշտ, ինքնիշխան ոճը, նրանց 62.5% ավտորիտար է: Ուստի հաճախ նման կին ղեկավարների չափազանցված արականացումը (մասկուլիություն) և ավտորիտարիզմը լիդերի դերում ինքնահաստատվելու պաշտպանական ռազմավարություն է: Անգերագանցելի է Մարգարետ Թետչերի՝ «երկար լեդի»-ի կերպարը, ով հետևողականորեն խուսափում էր օգտվել գեղեցիկ սեռի ներկայացուցիչ լինելու հանգամանքից: Գործընկերները վկայում էին, որ Մարգարետ Թետչերը պաշտոնական շրջապատում ցուցադրաբար իրեն ավելի խիստ, ագրեսիվ և իշխողական էր պահում, քան անձնական հաղորդակցման ժամանակ, քանզի նրան խորթ չէին կանացի հատկությունները, այդ թվում նաև լաց լինելու ցանկությունը, իսկ նրա հոգատարությունը և անհանգստությունը աշխատակիցների նկատմամբ խոսում էին նրա բնավորության մայրական էություն մասին [2, էջ 278]:

Ավագ քույր կամ էգայի պար: Այս տիպը հենվում է որոշումների ընդունման կողմնակից ձևերի վրա, խրախուսում է

քննարկումները: Լինելով ինքնավստահ՝ նախընտրում է, որ իր կողքին աշխատեն ուժեղ գործընկերներ: «Ավագ քույր» համար կարևոր են մեկ միասնական թիմի զգացումը և կառուցողական քննադատությունները: Շահադրդման համակարգում հենվում է պարզևատրուների վրա, խրախուսում է նորարարությունները և աշխատանքի նկատմամբ ստեղծագործական մոտեցումը: Կարծում ենք, որ «ավագ քույր» դերով է հիմնականում հանդես գալիս ԱՄՆ-ի պետքարտուղար Ք.Ռայսը, ում իմիջը կառուցվում է «Ես ուզում եմ ձեզ հասկանալ» սկզբունքի վրա: Ռայսի մասին նույնիսկ երգ է գրվել «Եղբայր, Քոնդոլիզան մեզ կուղեկցի նոր հիասքանչ աշխարհ» բառերով, որտեղ եղբայրը կարելի է փոխարինել «քույր»-ով:

Աշխատանոլ: Աշխատանոլ կամ «գորշ մկնիկ»: Այս տիպը մշտապես խրված է աշխատանքի մեջ, խանդավառ է և նրա նշանաբանն է՝ «ամեն ինչ հանուն հաղթանակի»: Նա, կարևորը խառնելով երկրորդականի հետ, վախենում է պարտականությունները պատվիրակել կոլեգաներին և ամեն ինչ իր վրա է վերցնում: Նա կաշվից դուրս է գալիս, որպեսզի ինքնահաստատվի որպես մասնագետ՝ պրոֆեսիոնալ: Հաճախ այնպիսի յուրօրինակ հագուստ է ընտրում, որը չի համապատասխանում զբաղեցրած դիրքին:

Մայր: Առաջին հերթին հոգատար է շրջապատի նկատմամբ և միևնույն ժամանակ սպասում է անվերապահ նվիրվածություն մարդկանցից: Մոր պես սրտացավ է և չափից ավելի զգացմունքային նույնիսկ այն իրավիճակներում, երբ դրա անհրաժեշտությունը չկա:

Կանացի: Այս տիպի կին գործչի աշխատանքային գլխավոր «գործիքներից» են կոկետությունն ու հրապուրանքը, կանացի խորամանկությունն ու ինտրիգները: Ամեն ինչ կառուցում է հույզերի և զգացմունքների վրա, «կանացի» ղեկավարները կիրառում են գերազատական

կառավարման ոճը, ինչի արդյունքում տիրում է խառնաշփոթ և ամենաթողություն: Նրանք մի կողմից կանացի հմայքն օգտագործում են քաղաքական գործչի դերում ինքնահաստատվելու նպատակով, մյուս կողմից, ընդհակառակը, հասած դիրքի շնորհիվ ցանկանում են ընդգծել անձնական հմայքը և բավարարել ուշադրության կենտրոնում լինելու պահանջները:

Նախկինում կանացի տիպը, մեղմ ասած, չէր խրախուսվում հասարակության կողմից, և որոշ չափով հանդուրժելի էին դառնում այդպես կոչված «միջին սեռի» կին լիդերները: Այդ առումով, լիդերության հավակնություն ունեցող կանայք ճնշում էին իրենց կանացիությունը և քողարկում այն արական ոճի հագուստով և վարվելաձևով: Եթե տղամարդու աշխատասեղանի վրա ընտանիքի նկարների առկայությունը ոչ միայն բնական էր համարվում, այլ նաև նպաստում էր նրա իմիջի բարձացմանը, ապա կնոջ դեպքում, ընդհակառակը, թաքցվում էին երեխաների նկարները, քանի որ նրանց դեպքում այդ երևույթը սոսկ կանացի թուլություն էր համարվում: Ըստ Ն.Ադլերի [9]՝ լուրջ ղեկավար դառնալու համար նախկինում կինը պետք է թաքցներ իր անձնական երկու դերերը՝ կնոջ և մոր, իսկ ներկայումս այդ երևույթն արդեն առասպել է համարվում: Մ. Թետչերի կառավարման օրոք այն աստիճան չէին լուսաբանվում նրա ընտանեկան կյանքի վերաբերյալ նյութերը, որ շատերը կարծում էին, թե վարչապետն ամուսնացած չէ, այնինչ ուներ հրաշալի ամուսին և երկու որդիների հոգատար մայր էր:

Այսօր նույնիսկ ամենաբարձր պաշտոնի հավակնություն ունեցողների մեջ կարելի է հանդիպել իրենց կանացիությունը ընդգծող կին լիդերներին: Նրանցից են Հիլարի Քլինթոնը՝ ԱՄՆ-ում, Իրինա Խակամադան՝ Ռուսաստանում, Յուլիա Տիմոշենկոն՝ Ուկրաինայում և Սեզոլեն Ռոյալը՝ Ֆրանսիայում: Այսպես, Հ. Քլինթոնի նախընտրական ար-

1. Ծնողների հետ հարաբերությունները այս խմբի մասնակիցներից 19-ը գնահատել են որպես վստահելի: 1 մասնակից նշել է, որ լարված հարաբերություններ ունի հոր և վստահելի հարաբերություններ՝ մոր հետ:

2. Ընտանիքում ընդունված սննդային վարքի մոդելը ենթադրում է ժա-

մային և սննդատեսակային առումով ստույգ սննդակարգ, սեղանի շուրջ հաճախակի բարեկամական և ընկերական հավաքներ: Մանկի ընդունման ժամերը ստույգ որոշված են և ընտանիքում դրանից հրաժարվելու հավանականությունը բացառվում է:

3. Կանացի արտաքին տեսքին, մասնավորապես մոդակի տենդենցներին ընտանիքում տրվում է մեծ նշանակություն:

4. Ներխմբային հարաբերություններում այս խմբի մասնակիցները որևէ դժվարություն չունեն: Ակնհայտ կոնֆլիկտների, կամ մեկուսացման հակված չեն: Ներխմբային շփման մակարդակը բարձր են գնահատել:

5. Միջանձնային հարաբերությունները բոլոր 20 մասնակիցները դրական են գնահատել: Միջսեռային հարաբերությունների վերաբերյալ համարում են, որ կանացի արտաքին տեսքը նշանակալի գործոն է հակառակ սեռի մոտ հաջողություն ունենալու համար:

6. Մանկի և դրա ընդունման նկատմամբ վերաբերմունքը միանշանակ է: Ընտանիքում առկա սննդային ռեժիմը չեն խախտում: Նշում են, որ շատակերության դրվագներ են ունենում բարեկամական և ընկերական հավաքությունների ժամանակ:

7. Կանացի արտաքին տեսքին թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի թվում նշանակություն է տրվում ոչ այնքան մարմնակազմին, որքան մոդակի տենդենցներին:

8. Սեփական արտաքինի, մարմնակազմի նկատմամբ վերաբերմունքը բավարար է: Սակայն, չնայած ակնհայտ թերությունների բացակայությանը, վերջինները նշում են, որ կցանկանային նիհարել:

Այսպիսով, գրույցի փուլում ստացված տվյալները ցույց տվեցին, որ.

ա) Մանկային վարքի սահմանափակումային շեղում ունեցող դեռահաս աղջիկների սննդային վարքի մոդելի

ձևավորման գործում դեր են ունեցել ծնողական սննդային վարքի առանձնահատկությունները, ընտանիքում կանացի արտաքինի և մարմնակազմին տրվող բարձր նշանակությունը, միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինի վերագրվող նշանակությունը, կանացի արտաքինի թելադրվող սոցիալ-մշակութային կարծրատիպերի և ամսագրերի ազդեցությունը:

բ) Մանկային վարքի զգայագեն շեղում ունեցող դեռահասների սննդային վարքի մոդելի ձևավորման գործընթացին նպաստել են ծնողների հետ հարաբերությունների անկայունությունը, հետևաբար ապահովության զգացումի բացակայությունը, ընտանիքում ստույգ սննդակարգի և սննդային վարքի մոդելի բացակայությունը, ներխմբային հարաբերություններից անբավարարությունը, մեկուսացման միտումը, ինչը հավանաբար ներքին ապահովության զգացման բացակայության արդյունք է, միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինի վերագրվող նշանակությունը, սեփական մարմնակազմի նկատմամբ բացասական վերաբերմունքը:

գ) Մանկային վարքի էքստերնալ շեղում ունեցող 20 դեռահաս աղջիկների մոտ տվյալ շեղման առաջացման գործընթացին նպաստել են ընտանիքում ընդունված սննդային խրախուսմանների վարքային մոդելը, ընտանիքում կանացի արտաքին տեսքին տրվող մեծ նշանակությունը, միջսեռային հարաբերություններում կնոջ արտաքինի վերագրվող նշանակությունը, միջանձնային հարաբերություններում հարմարվողականության միտումը, մոդակի տենդենցների նշանակության գերագնահատումը, սեփական մարմնակազմի նկատմամբ դժգոհությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. А. Г. Шмелев и коллектив. Основы психодиагностики- Учебное пособие для студентов педвузов. — Москва, Ростов-на-Дону: «Феникс», 1996. — 544 с., стр. 114
2. Учебное пособие. М.: УМК «Психология», 2003. 198 с., стр. 27-38

ИСПОЛЬЗОВАНИЕ МЕТОДОВ ПСИХОДИАГНОСТИЧЕСКОГО НАБЛЮДЕНИЯ И БЕСЕДЫ В ПРОЦЕССЕ ИССЛЕДОВАНИЯ РОЛИ СОЦИАЛЬНЫХ УСТАНОВОК НА ВОЗНИКНОВЕНИЯ НАРУШЕНИЙ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ

АСМИК ШАГИНЯН

НАН РА Институт философии, социологии и права

Статья направлена на обсуждение значимости использования психодиагностических методов наблюдения и беседы в процессе исследования роли социальных установок в проявлении нарушений пищевого поведения у девочек-подростков. В статье также проведен анализ данных, полученных в процессе исследования.

THE USAGE OF METHODS OF PSYCHODIAGNOSTIC OBSERVATION AND INTERVIEW IN THE RESEARCH OF SOCIAL INSTALLATIONS ROLE WITHIN THE PROCESS OF EATING BEHAVIOR DEFORMATIONS

HASMIK SHAHINYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia, Researcher of the Institute of Philosophy, Sociology and Right

The article refers to the discussion of the usage of methods of psychodiagnostic observation and interview within the process of research of social installations causing eating behavior deformations in the adolescent girls. The article also refers to the analysis of data and regulations maintained in the process of research.

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի պրոֆեսոր,
բանասիրական գիտությունների դոկտոր

ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՏԻՊԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Պատկերավոր կայուն կապակցությունների կառուցատիպերը միջին հայերենում բնութագրվում են որոշակի կաղապարներով, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ա) անվանողական. *մարտիրոսյան հայելի, քաղցր զերդ զաքար, բ* հաղորդակցական. *շողշողել(իմ) որպէս զլոյս, երևալ զինչ զհրեշտակ:*

Այսպիսի կառուցատիպերի արտահայտության պլանում կարևորվում են կապակցության գլխավոր անդամի դրսևորման եղանակները, կախյալ բաղադրիչների քերականական հատկանիշները, կառույցի անդամների շարադասությունը, ինչպես նաև նախադրությունների տապակցելիական հնարավորությունները:

Հանգուցային բառեր – կայուն կապակցություն, բառակապակցություն, համեմատություն, կառուցատիպ, անվանողական, հաղորդակցական, գերադաս բաղադրիչ, կախյալ անդամ, նախադրություն:

Պատկերավոր կայուն կապակցությունները (ՊԿԿ) լեզաոճական որոշակի արտահայտություններ են, որոնց հիմքում ընկած է պատկերավոր համեմատությունը, որը, իբրև փոխաբերության մի տեսակ, արտահայտում է համեմատելի հատկանիշ՝ երկու տարասեռ ամարկանների և նրանց հատուկ ընդհանուր

հատկանիշի հարաբերության միջոցով: Մասնագիտական գրականության մեջ այս կարգի կապակցությունները կոչվում են նաև համեմատություն դարձվածային միավորներ կամ համեմատություն դարձվածային արտահայտություններ¹:

ՊԿԿ-ները գործառական լայն հնարավորություններ են դրսևորում մեր լեզվի բոլոր շրջաններում. գրաբարում հանդես են գալիս Աստվածաշունչ մատյանում, դասական և հետդասական հայերենի գրաբարալեզու երկերում, միջին հայերենի գրական հուշարձաններում, արդի գրական հայերենում՝ բնութագրվելով ոճական որոշակի դերով:

Այդօրինակ կապակցությունները միջին հայերենում բնութագրվում են յուրահատուկ իմաստներով, որոշակի տարբերակներով ու կառուցատիպերով, որոնք ընդհանրություն ունենալով հայերենի տարբեր շրջանների համանման կառույցների հետ, միաժամանակ բնութագրվում են որոշակի տարբերակիչ գծերով:

Այդ կառույցների բաղադրիչները միջին հայերենում միավորվում են հետևյալ

1 Հմմտ. Խ.Բաղդիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջք 1216-127, 140, 260-263: Ա. Գ. Назарян, Фразеология современного французского языка, М., 1987, էջք 111-125, 194-199: Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990, էջ 50-51:

նախադրություններով՝ *զերդ // զերթ, զանչ, զէր // զէր, զինչ, իբրև // իբր, չափ, ի չափ, որպէս, պէս, քան, նման, քանց* և այլն:

Ընդ որում, այդ նախադրությունները կապակցում են ինչպես անվանողական, այնպես էլ հաղորդակցական ՊԿԿ-ներ: Հմմտ.

ա) անվանողական ՊԿԿ-ներ.

մարտիրոսյան հայելի, խաղաղ իբրև զդրախար, կեղծաւոր զանչ զաստանայ, քաղցր // անուշ զերդ զաքար, անյաջող զերդ զգերի, պայծառ քան զքաֆուր վարդ և այլն: *բ) Հաղորդակցական ՊԿԿ-ներ.*

շողշողել(իմ) որպէս զլոյս, ձեմել(իմ) որպէս իշխան, նարել(իմ) որպէս արքայ, գունարովել զէր զգաֆրան, երևալ զինչ զհրեշտակ, զերդ կույր եռալ և այլն:

Այս կարգի բաժանումով միաժամանակ կարելի է բնութագրել ՊԿԿ-ների կառուցատիպերը:

Միջին հայերենի ՊԿԿ-ները կարելի է ենթարկել նաև կառուցվածքային քննության: Ըստ այդմ, ի հայտ են գալիս նախադրությամբ ու որևէ հոլովով ձևավորված միագագաթ կառույցներ (զինչ առիծ, զերթ գագան), ինչպես նաև նախադրությամբ կառույցով և ածական կամ բայ գերադաս բաղադրիչով ձևավորված (երկգագաթ) ստորադասական կապակցություններ (սեաւ իբրև զհնդիկ, զինչ մոմ հալել (իմ)): Նրանցում տարբերակվում են ինչպես չծավալված, այնպես էլ ծավալումով միավորներ:

ՊԿԿ-ները բնութագրվում են նաև բառին ու բառակապակցությանը հատուկ քերականական հատկանիշներով, ուստի կարելի է խոսել ինչպես նրանց բառիմաստային հատկանիշների և ձևաբանական արժեքների, այնպես էլ տարբերակների ու կառուցատիպերի մասին:

Ըստ էության, բառակապակցությունների այս կարգի դասակարգումները լեզվի գոյակիճակների հետ կապ չունեն. այլ հարց է նրանց կառուցատիպերի քննությունը, որ կարող է պայմանավորված լինել տվյալ գոյակիճակի լեզվական յու-

րահատկություններով:

Ելնելով միջին հայերենի լեզվական միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկություններից՝ ներկայացնենք ՊԿԿ-ների կառուցատիպերը:

1. Անվանողական ՊԿԿ-ներ

Միջին հայերենում զգալի տեսակարար կշիռ են կազմում հատկապես բառակապակցական կամ անվանողական ՊԿԿ-ները, որոնք կառուցվածքային առումով կարելի է բաժանել միագագաթ (միաբևեռ) և երկգագաթ (երկբևեռ) տեսակների:

Նման կառույցների արտահայտության պլանում, ինչպես նշեցինք, հանդես են գալիս որոշակի սպասարկու բառեր՝ նախադրություններ և հետադրություններ, թեև նրանց բնութագրման հարցում կարևոր նշանակություն ունեն գերադաս բաղադրիչի բառաբերականական հատկանիշները:

Քննարկենք գերադաս բաղադրիչ + նախադրություն (հետադրություն) կառույցով ՊԿԿ-ները՝ ըստ գերադաս բաղադրիչի խոսքիմասային պատկանելության:

Ա) Ածական + գոյական + նախադրություն (հետադրություն) կաղապար.

Այս կառուցատիպերում ի հայտ են գալիս կառուցվածքային տարբերակներ, դրանք են՝ *ածական+նախադրություն կառույց, նախադրությամբ կառույց+ածական*: ա) *Ածական + նախադրությամբ կառույց*: Այսօրինակ կապակցություններում ածականական բաղադրիչին ստորադասվում է համեմատության իմաստ արտահայտող նախադրություն + որևէ հոլովով արտահայտված խնդիր:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ ՊԿԿ-ներ:

Ածական + որպէս + հայցականով խնդիր. հմմտ. տարբերակային պարզ // մարտիրոսյան հայելի:

Ածական + իբրև + հայցականով խնդիր. հմմտ. սեաւ իբրև զհնդիկ, խաղաղ իբրև զդրախար:

Ածական + զանչ + հայցականով խն-

դիր. հմնտ. կեղծատր զանչ զսատանայ: Ածական + գերդ + հայցականով խնդիր. հմնտ. քաղցր // անուշ գերդ զշաքար, անյաջող գերդ զգերի:

Ածական + քան + հայցականով խնդիր. հմնտ. ահեղակերպ քան զփայլակն¹:

Հմնտ. Ասագան՝ ջրով լցեալ՝ պարզ և մաքուր որպէս հայելի (ՆԸ, ԸԳԲ, 180): Ծնաւ որդի՝ սեաւ իբրև զհնդիկ (ՎՔ, ԲԿԶԸ, 111): Ունանք ցուցնեն զիրենք քաղցր ու անուշ գերդ զշաքար (ՎՔ, ՄԸԲ, 68):

Վերոբերյալ բոլոր օրինակ-նմուշները երկանդամ ստորադասական կապակցություններ են, որոնց գերադաս և կախյալ բաղադրիչները հանդես են եկել առանց ծավալումների:

Այդօրինակ կապակցություններում սակավադեպ են ծավալումներով դրսևորվող միավորները:

Հմնտ. պայծառ քան զքաֆուր վարդ ՊԿԿ-ն, որում ծավալիչ (լրացում) է ստացել նախադրությամբ կառույցը (ՊԿԿ-ի ստորադաս բաղադրիչը):

2. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Ածական + նման + տրական խնդիր. հմնտ. կարմիր նման վարդի², ամուր քարի նման³:

Այս կառույցում նույնպես հնարավոր են ծավալումներ, հմնտ. բարձր թուխ ամպի նման ՊԿԿ-ն:

Նախադրությամբ կառույց+ածական: Այս կաղապարով ձևավորված ՊԿԿ-ներում ի հայտ են գալիս տարբեր հոլովներով խնդիր ստացող նախադրություններ:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Ձինչ նախադրությունը հայցական խնդրով + ածական. հմնտ. զինչ կաթն սպիտակ:

Ձերթ նախադրությունը հայցական

խնդրով+ածական. հմնտ. գերթ կարկուտ պաղ // սպիտակ, գերթ մոմ կակուղ:

Իբրև նախադրությունը հայցական խնդրով+ածական. հմնտ. իբրև գնդակ բոլոր:

Քանց (քան + ց նախդիր) նախադրությունը հայցական խնդրով + ածական. հմնտ. քան գրերթ վարդի, քանց զլատիֆդ աղուր:

Հմնտ. Միրէ գքո ընկերն անկեղծ, անարար զինչ կաթն սպիտակ (ՎՔ, ԲԿԶԸ, 111): Շողեղէն պատկեր՝ քան զթերթ վարդի (ն. տ., 33): Շաքրէ եղէգին մէջէն ես քաշած քանց զլարիֆդ աղուր (ՄՂ, 242):

2. Սեռականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Չափ նախադրությունը սեռական խնդրով և ածականով. հմնտ. մահու չափ անհանգիստ, Ասրծոյ չափ երախտառու:

Հմնտ. Մահու չափ անհանգիստ պահեն, յայլ տեղ ոչ երթայ (ՎՔ, ԲԿԶԸ, 111):

3. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

ա) Նման նախադրությունը (հետադրությունը) տրական խնդրով + ածական. հմնտ. արեգական նման պայծառ, նրման արեգական գեղեցիկ:

Հմնտ. Նրման արեգական է գեղեցիկ, որ լոյս կու տայ (ԿԵ, ԸԳԲԲ, 234):

Արեգական նման պայծառ երեսդ լոյս էր կամար (ԸԹ, ԸԳԲ, 161):

Նախադրությամբ կառույց+ածական կաղապարով ՊԿԿ-ներում երբեմն հանդիպում են ծավալումներով կառույցներ. գերդ զլուսին սուրաթ բոլոր, գերդ արին ալ պղտոր, գերթ կարկուտ պաղ և սպիտակ կապակցություններում ծավալման են ենթարկվել գերադաս բաղադրիչները:

Հմնտ. Ձգեաց հետ քար՝ գերթ կարկուտ պաղ և սպիտակ (ՎՔ, ՄԸԲ, 68):

բ) Բայ + գոյական + նախադրություն կաղապար.

Այդ կարգի միավորումներում ևս առկա են կառուցվածքային-շարադասական տարբերակներ՝ բայ+նախադրությամբ կառույց և նախադրությամբ կառույց+բայ:

Բայ+նախադրությամբ կառույց.

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Բայ + իբր + գ + հայցական. հմնտ. խաղաղանալ իբր գդրախտ:

Բայ + որպէս + (գ նախդիր) + հայցական. հմնտ. շողշողել(իմ) որպէս զլոյս, ձեմել(իմ) որպէս իշխան, նստել(իմ) որպէս արքայ:

Բայ + զէպ + հայցական. հմնտ. գունատվել զէտ զգաֆրան:

Բայ + զինչ + գ + հայցական. հմնտ. երևալ զինչ զհրեշտակ:

Հմնտ. Խաղաղացաւ իբր գդրախտ (ՎՔ, ՄԸԲ, 155):

2. Տրականով խնդիր + նման (նախադրություն - հետադրությամբ) է կազմվել դեղնել խնկիդ նման ՊԿԿ-ն:

Նախադրությամբ կառույց + բայ.

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Ձինչ (+ գ նախդիր) + հայցական + բայ. հմնտ. զինչ մոմ հալել (իմ), զերդ մոմ կակուղ լինել:

Ձերդ + հայցական + բայ. հմնտ. գերդ կուպր եռալ:

Քան + գ + հայցական + բայ. հմնտ. քան զմոմ հալել(իմ), քան զփորձած ոսկի լինել, քան զկարմիր խնծոր բոլորել:

Որպէս + գ + հայցական + բայ. հմնտ. որպէս զշուն հաչել:

Հմնտ. Տղայոց միտք գերդ մոմ կակուղ կու լինի (ՎՔ, ԲԿԶԸ, 111): Քան զփորձած ոսկի լինի, որ ի բովէն ահ չունենայ (Ֆ, 49):

2. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Նման + տրական + բայ. հմնտ. սիրամարգի նման քայլել (իմ):

Պէս + տրական + բայ. հմնտ. շան պէս ուրանալ:

Այսպիսի ՊԿԿ-ներում երբեմն հանդիպում են ծավալված բաղադրիչներով կապակցություններ:

Հմնտ. գերադասի ծավալումով դրսևորվող քան զուռ ի վեր վազել, քան զմոմն առաջն ի վառ լինել(իմ) ՊԿԿ-ներ:

րը, ինչպես՝ Քան զուռ ես ի վեր վազել, (ՎՔ, ՄԸԲ, 162):

Ստորև բերվող միավորներում ծավալվել է ստորադաս բաղադրիչը (նախադրությամբ կառույցը). հմնտ. զէպ աշնան դազել դողալ, քան կարմիր խնծոր բոլորել, քան սևացեալ ամպ ցողալ, ինչպես՝ Քան զկարմիր խնծոր բոլորել (ՎՔ, ՄԸԲ, 162):

Ինչպես տեսնում ենք, քննարկվող կապակցություններում սակավադեպ են բազմանդամ միավորները:

գ) Նախադրություն + խնդիր կաղապարով (միագագաթ) ՊԿԿ-ներ:

Այդօրինակ ՊԿԿ-ները կառուցվածքային առումով հանդիպում են առանց գերադաս անդամի: Նրանցում նախադրության հետ մեկտեղ հանդես է գալիս լիմաստ մեկ բաղադրիչ, այդ իսկ պատճառով այդ կարգի միավորները կոչվում են միագագաթ: Ըստ որում, «նախադրություն + խնդիր» կապակցությունը կարող է հանդես գալ թե՛ առանց ծավալումի և թե՛ ծավալումներով:

Դիտարկենք միագագաթ կառույցներն ըստ հոլովառու բառերի և նրանց խնդիրների: Ստորև բերվող ՊԿԿ-ները հանդես են գալիս որպես չծավալված կառույցներ:

1. Հայցականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Քան + գ + հայցական. հմնտ. քան զնոռն, քան զթերթ (վարդի), քան զգերի, քան զմարգարիտ, քան զոսկի, քան զծով, քան զմայր¹:

Հմնտ. Շողեղէն պատկեր՝ քան զթերթ վարդի (ՎՔ, ՄԸԲ, 33):

Կառույցում կարող են լինել փոխանվանաբար գործածված անդամներ, հմնտ. քան զմեծատունն ՊԿԿ-ն:

Հմնտ. Քան զմեծատունն եմ յղլփացեալ, Ակրն հոգոյս է խաւարած (Ֆ, 75):

Հանց + հայցական. հմնտ. հանց խո-

1 Խեթը պակաս քան զերեխոյ ՊԿԿ-ում առկա է գ նախդիր + սեռական խնդիր կառույցը:
2 Հմնտ. կարմիր երես նման վարդի անվանական հարադրությամբ ձևավորված ՊԿԿ-ն:
3 Նման սպասարկու բառը, ինչպես տեսնում ենք, գոյականի՝ իր խնդրի նկատմամբ կարող է գործածվել թե՛ նախադաս, թե՛ հետադաս:

ձայ:

Ջերդ + q + հայցական. հմմտ. գերդ գգերի կառույցում ի հայտ եկող հետևյալ փոխանունությունը. գերդ գյիմար. Եղայ գերդ ըգյիմար, 'i իսկի մարդու ի խոստ չեկայ (ԿԵ, ԼԳԲԲ, 235):

Ջինչ + հայցական. հմմտ. զինչ զիրեշտակ:

Որպէս + հայցական. հմմտ. որպէս իշխան, որպէս արքայ:

2. Սեռական խնդրով նախադրությամբ կաղապար.

Չափ' + սեռական. հմմտ. ծովին չափ, մահու չափու, փոխանունությամբ՝ մեռելոյն չափ:

3. Տրականով խնդրառու նախադրությամբ կաղապար.

Նման (նախադրություն // հեղադրություն) + փրական. հմմտ. նման Յուդայի, նման վարդի, նման հրեշտակի, ամպոյ նման, արեգական նման, աստեղաց նման, հագրեվարդի նման, սիրամարգի նման:

Ջինչ + նման + փրական խնդրով կառույց ունի *զինչ գարնան նման* ՊԿԿ-ն:

Հմմտ. Երեսդ է *լուսնի նման* (ՆԲ, ԼԳԲ, 174): Աստէն թէ ջահով ելնէք, *խնասարնոց նման* կու լինիք (Ֆ, 85):

Պէս հեղադրությունը փրական խնդրով: Այսօրինակ կաղապարով ՊԿԿ-ներում ուշագրավ են գէտ նախադրություն + պէս հետադրություն + տրական կառույցով միավորները. հմմտ. *գէտ ոչխարի պէս:* Այսպիսի կառույցներում երբեմն հանդես են գալիս փոխանուն բաղադրիչներ, հմմտ. *գէտ խելի պէս:*

Հմմտ. Կու *մորթեն գէտ ոչխարի պէս* (ՎԲ, ԲԿԶԸ, 317): Ատեն ատեն *գէտ խելի պէս* ձրի խօսվի զրոյց մարդն (ՎԲ, ԲԿԶԸ, 317):

Միջինհայերենյան միագագաթ ՊԿԿ-ների ձևայնացված (կաղապարավորված) մեկնաբանությունն այս ամենով չի սպառվում. այդօրինակ կառույցներում ի

հայտ են գալիս նաև ծավալված բաղադրիչներով ՊԿԿ-ներ:

Հմմտ. հայցական + նախադրություն կաղապարով հետևյալ միավորները.

գէտ մանկակորուստ կաքաւզինչ գարնան կայծակն ի յամպէն

զինչ հաւն երամէն ի գատքան սևացեալ անպ

քան զկաթն զխտակքան զէրն քաղցրիկ

քան զանգէտ աղքատքան զթերթ վարդի

քան զփորձած ոսկիքան զմարգարիտ պայծառ շարած

քան զամէն ծաղիկ պայծառքան մեծատունն յղփացեալ

քան զքանասար գայլ ոչխարի և այլն:

Ինչպես ցույց է տալիս միջին հայերենի ՊԿԿ-ների ձևայնացված նկարագրությունը, հայերենի զարգացման այդ շրջանին բնորոշ են ինչպես գրաբարյան կաղապարներ, այնպես էլ առանձնական (միջին հայերենին հատուկ) կաղապարներ²:

II. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՊԿԿ-ՆԵՐ

Միջին հայերենի նախադասություն-դարձվածքների մեջ իրենց կառուցվածքային-քերականական առանձնահատկություններով աչքի են ընկնում հաղորդակցական ՊԿԿ-ները, որոնք ունեն նախադասությանը հատուկ բոլոր հատկանիշները: Ընդ որում դրանք բնութագրվում են նախադասության անդամների կայուն շարադասությամբ:

Հմմտ. *Միրզդդ լցած է նենգութեամբ, Քան ըզգայլոյ և զամիծոյ* (Ֆ. 98):

Ի՞նչ յուրահատկություններ են դրսևորում միջինհայերենյան հաղորդակցական ՊԿԿ-ները:

1. Բայի եղանակաժամանակային և դիմաթվային ձևերը գործառական սահմանափակումներ ունեն: Դրանք հանդես

² Վերջիններս վերաբերում են որևէ առանձին լեզվի. այդպիսի կաղապարները կառուցվում են առանձին լեզվի համար (տես Լ.Մ.Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 9):

են գալիս՝

Ա. Որոշակի դեմքով ու թվով. *Երագի նման է* (ՎԲ,ՄԸԲ, 109) – 3-րդ դ., եգ. թ.:

Բ. Միայն մեկ եղանակով. *Ջինչ ելնէ արեւն ի մօրէն* (ՆԲ, 62) – (միայն ըղձական եղանակով. գրաբարյան սահմանական ներկան՝ ըղձականի իմաստով):

Ստանդարտ արձակ *ես դու գուգեյ, Քան զձիոյ և զջորոյ* (Ֆ., 98) – միայն սահմանական եղանակով:

Միրէ՛ գրո ընկերն անկեղծ, անարատ, զինչ կաթն սպիտակ (ՎԲ, ԲԿԶԸ, 111) – միայն հրամայական եղանակով:

Գ. Ժամանակային սահմանափակումներով. Մուրօքըդ մարդ ես կատարեալ, *Խելքըդ պակաս քան զերեխոյ* (Ֆ., 99):

2. Դրանք մեծ մասամբ հաստատական նախադասություն-դարձվածքներ են: Ըստ որում, այդօրինակ կապակցություններն արտահայտության պլանում ունեն հաստատական, բովանդակային պլանում՝ ժխտականության իմաստ:

Հմմտ. վերոբերյալ *Մուրօքըդ մարդ ես կատարեալ, Խելքըդ պակաս քան զերեխոյ* ՊԿԿ-ն, որը նշանակում է՝ „ոչինչ չես հասկանում, անօգուտ է քեզ հետ խոսելը„:

3. Դրանք հիմնականում պատմողական բնույթի նախադասություն-դարձվածքներ են: Հմմտ. *Ասես թէ մարդ ենք սպանել* (ՆԲ, 86):

4. Երկկազմ ՊԿԿ-ները թե՛ պարզ և թե՛ բարդ նախադասություններ են: Հմմտ. պարզ ընդարձակ նախադասության ձևավորում ունի *Տղայոց միրք զերթ մուկակուղ կու լինի* ՊԿԿ-ն (ՎԲ, ԲԿԶԸ, 111):

Կազմությամբ բարդ համադասական նախադասություն է *Մուրօքըդ մարդ ես կատարեալ, Խելքըդ պակաս քան զերեխոյ* ՊԿԿ-ն, որի երկրորդ միավորն առաջինի նկատմամբ ցուցաբերում է տրոհական հարաբերություն:

Բարդ ստորադասական նախադասության ձևավորում ունի *Ջինչ նաւն ի ծովուն միջին Կերերայ, թէ երբ գայ քամին* ՊԿԿ-ն (Ֆ., 173):

Հաղորդակցական ՊԿԿ-ներում

առանձնանում են բարդ ստորադասական նախադասության կախյալ բաղադրիչ համարող կառույցները: Հմմտ.

Ջինչ ելնէ արեւն ի մօրէն: Ասես թէ մարդ ենք սպանել:

Ուշագրավ են հատկապես միակազմ դիմաձևոր նախադասություն-ՊԿԿ-ները:

Հմմտ. *Երագի նման է* (ձևական դիմային նշանակությամբ ՊԿԿ):

Միրէ՛ գրո ընկերն անկեղծ անարատ, զինչ կաթն սպիտակ (ընդհանուր դիմային նշանակությամբ) և այլն:

Միակազմ հաղորդակցական ՊԿԿ-ներում առանձնանում են յուրահատուկ կառույցներ, որոնք համընկնում են բայական անդեմ նախադասություններին: Հմմտ.

Աղօթք ամբիծ մատուցանել, *Քան զՅովաննու կարասկերի*. Վասն աստուծոյ մեզ մեռանել, *Քան զվկային Սրեփաննոսի* (Ֆ., 115):

Այսպիսով, գրաբարում ՊԿԿ-ները բնութագրվում են որոշակի կառուցատիպերով, որոնք բաժանվում են անվանողական (բառակապակցական) և հաղորդակցական (ստորոգումային) տեսակների:

Բառակապակցական ՊԿԿ-ները կառուցվածքային առումով բաժանվում են միագագաթ (միաբևեռ) և երկգագաթ (երկբևեռ) տեսակների, որոնց ներքին դասակարգումների համար կարևորվում են գերանդաս բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը և քերականական արտահայտությունը: Հաղորդակցական ՊԿԿ-ներն ունեն նախադասությանը հատուկ հատկանիշներ և բնութագրվում են կառույցի բաղադրիչների կայուն շարադասությամբ:

Միջին հայերենի գրական հուշարձաններում թե՛ անվանողական և թե՛ հաղորդակցական ՊԿԿ-ներն ունեն ընդգծված ոճական-արտահայտչական դեր:

¹ Միջին հայերենում չափ հողվառու բառը հանդես է գալիս և որպես նախադրություն, և որպես հետադրություն:

1. Խ.Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990:
3. Լ.Մ.Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:
4. А. Г. Назарян. Фразеология современного французского языка, М., 1987.

ՀԱՍԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԿԵ, ՀԳՔՔ - Կ. Երզնկացի, Ոմանք չարախօսեն զինն վասն նախանձու, Հայ գրական քննադատության քրեստոնամատիա, Ե., 1981:
- ՀԹ, - Հովհ. Թլկուրանցի, Տաղ քաջ Լիպարտին, Հայ գրականության քրեստոնամատիա, Ե., 1992:
- ՆՀ, ՀԳՔՔ - Ն. Հովնաթան, Հայ գրականության քրեստոնամատիա, Ե., 1992:
- ՆԲ - Ն. Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Ե., 1987:
- ՍՂ - Ս.Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981:
- ՎՔ,ԲԿԶԸ - Վ. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., 1990:
- ՎՔ,ՄՀԲ - Վ.Քոսյան, Միջին հայերենի բառակապակցությունները, Ե., 1984:
- Ֆ - Ֆրիկ, Բանաստեղծություններ, Ե., 1941:

СТРУКТУРНЫЕ ТИПЫ ОБРАЗНЫХ УСТОЙЧИВЫХ СОЧЕТАНИЙ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ЛАЛИК ХАЧАТРИАН

Профессор кафедры армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета им. Хачатуря Абовяна, доктор филологических наук

Структурные типы образных устойчивых сочетаний в среднеармянском языке характеризуются конкретными моделями, которые разделяются на следующие подгруппы:

- a) номинативная: մարտիր որպէս հայելի, քաղցր զերդ զշաքար,
- б) коммуникативная: շողշողել(իւմ) որպէս զլոյս, երևալ զինչ զհրեշտակ.

В плане образования таких структурных типов важную роль играют способы выражения доминантного компонента, грамматические признаки зависимого члена, расположение элементов сочетания, а также связующие особенности предлогов.

STRUCTURAL TYPES OF IMAGE-BEARING SET-COMBINATIONS IN MIDDLE ARMENIAN

LALIK KHACHATRYAN

Doctor of Philology, Professor of ASPU after Kh. Abovyan

The structural types of image-bearing set-combinations in Middle Armenian are characterized by specific models, which are divided into the following groups:

- a. nominative - մարտիր որպէս հայելի, քաղցր զերդ զշաքար,
- b. communicative - շողշողել(իւմ) որպէս զլոյս, երևալ զինչ զհրեշտակ.

In terms of the formation of these structural types the ways of expression of dominant component play important role the grammatical features of a dependent member, layout combinations, as well as binding characteristics of prepositions.

«Ռուսաց լեզվի և մշակույթի» կենտրոնների ղեկավար

ԳԵՆ ԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԵՎ ԴՐԱ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Գենդերային անհավասարության խնդիրը լայն արձագանք է ստացել հայ իրականության մեջ: «Կանանց հարցը» հրապարակ հանվեց հայ տղամարդ մտավորականների կողմից՝ որպես ազգային շարժման, ազգային ընդհանուր նպատակների թելադրանք:

Հանգուցային բառեր. Գենդերային անհավասարություն, կինը և քաղաքականությունը, ժողովրդավարության մակարդակ,

Հայ հասարակական հոսանքների գրեթե բոլոր գործիչներն ընդունում էին իգական սեռի կրթության անհրաժեշտությունը՝ ելնելով ազգային շահերից: Նրանք գտնում էին, որ առանց դրա իրականացման, այլևս հնարավոր չէ ապահովել ազգի առաջընթացն ու զարգացումը: Իգական սեռի կրթության անհրաժեշտությունը հիմնավորվում էր սերնդի դաստիարակման գործում կնոջ ունեցած դերի կարևորությամբ:

Հայ անվանի մտավորականներից ու գրողներից իգական սեռի կրթության անհրաժեշտությունը կողմնակից էին Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ռ. Պատկանյանը, Պ. Պռոշյանը, Բաֆֆին և այլք: Առաջինն այդ մասին բարձրաձայնել է «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» թերթերի խմբագիր՝ Մեսրոպ Թադիադյանը: Իր «Ճառ դաստիարակության օրհորդաց» աշխատության մեջ նա բացահայտել է կանանց կրթության անհրաժեշտության հիմնավորումները: Նրա համոզմամբ՝ հայրենիքի անկախության համար մարտնչող քաղաքացիներ դաստիարակելու համար առաջին հերթին անհրաժեշտ են ուսյալ մայրեր¹:

Իսկ Հ. Աբելյանը պնդում էր, որ կրթության միջոցով կինը կազատվի անբարոյականությունից, որին նրան դրդում էր կարիքը: Հ. Հիսարյանը գրում էր. «Մայրերն են միայն, որ մարդիկ կշինեն»:

Ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչները վախենում էին, որ կնոջը շատ իրավունքներ տալը կարող էր խաթարել հայ ընտանիքը: Իսկ իրավական անհավասարությունն արդարացվում էր բնական անհավասարությամբ: Կինը չպետք է մոռանար «իր՝ բնությունից ստացած դրությունը և ներքին պաշտոնը և ցանկանար հասարակական կյանքի բոլոր երևույթների մեջ իրեն տղամարդուն հավասարեցնել»²:

Մ. Նալբանդյանը և նրա գաղափարակիցները փորձում էին ապացուցել, որ կնոջ իրավունքը չպետք է սահմանափակվեր միայն կրթություն ստանալով, քանի որ եկել է նոր դարաշրջան, որտեղ մարդկությունը կնոջը ստրուկ չի համարում:

19-րդ դարում Կ. Պոլսում ասպարեզ եկավ «Ընտանի իմաստասեր» պարբերականը, որի հիմնական նպատակն էր կնոջ, դեռահաս աղջիկների մեջ ներշնչել լիարժեքության, ազգային արժանապատվության, հասարակական գործերում իրենց կարևորության զգացումը³:

Կանանց հիմնավոր, ազգային ար-

1 Չաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ. էջ 52:

2 Հարությունյան Ա., «Երևելի տիկնանց դարը, հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարակազմի», Երևան 2005, էջ 160:

3 Հակոբյան Մ., «Ջյուռնալայ պարբերական մամուլը», Երևան 1987, էջ 362:

ժեքների վրա հիմնված խնդրով էր հետաքրքրված նաև Ստեփան Ռսկանը: Նա իր «Արևմուտք» հանդեսում բարձրաձայնում էր, որ առանց հիմնավոր կրթության անհնար է ընդունել Եվրոպայից եկող ազդեցությունները: Նա հայ կանանց հորդորում է «ոսկին կապարին հետ չփոխել, չտարվել Եվրոպայի արտաքին փայլով, այլ հասու լինել Եվրոպայի «ազնիվ տիկիներին» սրտին ու մտքին և օրինակ ունենալ «նախ՝ Եղիշեի նկարագրած արի տիկիները և հետո օտարագրի պեպեկները...»:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարները ճշգրիտ շեշտադրումներով ու գորեղ ապացույցներով «Մուրճ» ամսագրում բարձրաձայնել է խմբագիր Ավետիս Արասխանյանը: «Կինը հասարակության մեջ» հոդվածում նա կանանց հարցը տեղափոխում է մարդու իրավունքների հարթություն: Ուշադրություն է հրավիրում կանանց զարգացման խնդրի վրա, որը կենսական պայման է համարում մեր ազգի և ընդհանրապես, մարդկության զարգացման համար. «Պետական և ազգային զարգացման գաղափարն ամենից վառ է, ամենից արթուն և ընդհանրության մեջ խորը արմատներ գցած»²,–շեշտադրում է Ա. Արասխանյանը: Ըստ նրա՝ սա իրավունքի խնդիր է և չպետք է շփոթել այն կանանց և տղամարդկանց հավասար կամ անհավասար մտավոր ունակությունների հետ:

19-րդ դարում կանանց հարցի արծարծման տեսանկյունից նշանակալի դեր են ունեցել Գրիգոր Արծրունին և նրա «Մշակ» թերթը: Արծրունին առաջին անգամ այս հարցը բարձրացրեց, երբ դեռ ուսանող ժամանակ Սանկտ Պետերբուրգում թղթակցում էր «Մեղու» լրագրին: Արծրունին քննադատում էր ժամանակի դաստիարակության համակարգը՝ դպրոց, ընտանիք: Իր հոդվածներից մեկում նա գրում էր ընտանիքում կնոջ

իրավագուրկ լինելու մասին և բարձրացնում էր կնոջ կրթության իրավունքի ապահովման հարցը: Արծրունին ժամանակ առ ժամանակ հանրագումարի էր բերում հայ կնոջ առաջխաղացման արդյունքները: «Իգական պրոլետարիատ» հոդվածաշարում նա խիստ անբավարար էր համարում Անդրկովկասում 15 տարի գործող իգական դպրոցների հասարակական օգուտը: Արհեստագործական կրթության բացակայությունը հանրակրթական դպրոցում, նրա կարծիքով, հանգեցնում էր չարաղետ հետևանքի³:

Կնոջ կրթության խնդիրը, կինը և քաղաքականությունը, կնոջ ազատագրումը, կանաց իրավունքները, կնոջ հասարակական գործունեության ոլորտները, կնոջ ազդեցությունը լուսավորության վրա, կանանց աշխատանքի հարցը մշտապես քննարկվել ու բարձրացվել են «Մշակում»: «Ձեզ ենք դիմում, հայ կանայք, և կրկնում ենք, որ մենք ձեզանից ենք սպասում հայության բարոյական և մտավոր վերանորոգության գործի առաջ տանելը...Առանց ձեզ մենք ոչինչ ենք: Ձեզանից ենք սպասում մեր վերանորոգությունը...Այն թույլից սկսած, երբ հայ կինը կմեկնի մեզ օգնության ձեռքը, կրկին կվերադառնա հայությանը, մենք կկարողանանք մեզ փրկված ասել և ժողովրդի մտավոր և բարոյական վերանորոգության գործը հաջողված համարել⁴»: Գր. Արծրունին արձանագրում էր նաև հայ կանանց հաջողությունները, նրանց առաջխաղացումները: «Մեր կանանց առաջին քայլերը» հոդվածում նա գրում էր, թե ինչ հայրենասիրական քայլեր արեցին կանայք՝ հօգուտ գաղթականների⁵:

Բաֆֆին նույնպես անդրադարձել է կանաց խնդրին: Նրա «Հայ կինը» ուսումնասիրությունը շարունակաբար

3 «Մշակ», 1886, № 120, 122, 124:
4 Գևորգյան Լ., «Գ. Արծրունին և նրա «Մշակը», Երևան 1996, էջ 412:
5 Հայ պարբերական մամուլի պատմություն, 18-19-րդ դդ., էջ 56:

լույս է տեսել «Մշակում»:

Բաֆֆին, հետազոտելով գյուղի, գավառների, Թիֆլիսի կանանց կյանքը, բնութագրել է նրանց բոլոր տիպերը: Նա գտնում էր, որ կինը պետք է դուրս գար բանտարկյալ վիճակից, սակայն նախ՝ անհրաժեշտ էր նախապատրաստել կնոջը՝ հասարակական ասպարեզ դուրս գալու համար, ինչն անհրաժեշտ էր նաև տղամարդկանց. «Մեր զարգացած կանայք կարող են ունենալ միայն գրականական սալոններ, բայց մեր գրականությանը պարապող երիտասարդությունը դեռևս այն աստիճան անկիրթ է, որ հազիվ թե իր պատիվը հասկացող մի տիկին կցանկանար նրանց առջև բաց անել իր դռները»:

Մերժելով ընտանիքի «միապետական կազմը», որտեղ բռնակալի գահին նստած է տղամարդը, իսկ կնոջ ամեն մի ընդվզում իր ստրկական վիճակի դեմ անողորմաբար պատժվում էր, Բաֆֆին տղամարդու և կնոջ «կրոնա-ամուսնական» հնացած կապն այլևս պատմությանը մերժված է տեսնում. նրան փոխարինելու է գալու «ընտանեկան» կապը, որը կնոջը դուրս կբերի կրավորական վիճակից և կդարձնի հասարակության լիիրավ անդամ⁶:

«Հայ կինը Ղարաբաղում» ընդարձակ ուսումնասիրությանը «Մշակում» հանդես է գալիս Լեոն՝ գտնելով, որ հայ կինն արժանի է մամուլի էջերում ավելի մեծ ուշադրության: Նահապետական առաքինությունների անհետացման նշանները մի ավելի լավ հասարակական հարաբերություն չեն գուշակում, գյուղում դեռևս չորս պատի մեջ և սպիտակ չադրայից իր ազատության սահմանը՝ երևացող աչքերով ցուցադրող կինը, իսկ քաղաքում եվրոպական արտաքինով կինը՝ «փայլուն սիրունիկ զարդը, ոչնչով լավ և ոչնչով պակաս մի շքեղ սիրամարգից»: Մի դեպքում՝ անգարդ հետամնացություն, մյուս դեպք-

1 Գևորգյան Լ., նշվ. աշխ., էջ 413:
2 Նույն տեղում:

քում՝ պճնված քաղքենիություն:

«Մշակի» շնորհիվ ասպարեզ եկան կին թղթակիցներ, որոնք հաջողությամբ շարունակեցին սկսված բանավեճը: Խելացի ու համարձակ մտքերով աչքի է ընկնում «Կանանց խնդիրը հողվածը», որի տակ ստորագրված էր՝ օրիորդ Ե. Թ.: «Ստրկություն բառը կամաց-կամաց սկսում է խորթանալ»,–գրում էր թղթակցուհին,– «հավասարությունն ավելի ու ավելի բարձրանում է. անհատական ինքնուրույնության գաղափարը մտնում է մարդու մտքերի մեջ, մի խոսքով, գիտակցությունը ավելանում է, իսկ գիտակցությունը սկիզբն է և ավանդն ազատության»⁷:

Արևելահայ իրականության մեջ կանայք արձագանքողի դերում էին, և երկյուղածություն կար նրանց ելույթների մեջ: Արևմտահայ իրականության մեջ, ընդհակառակը, Սրբուհի Տյուսաբն ինքն էր բանավեճ հրահրում, կրքեր բորբոքում:

Կնոջ բերանով կնոջ ազատության հարցեր բարձրացնելը թուրքական իրականության պայմաններում մեծ համարձակություն էր: Մ. Մամուրյանի խոսքերով՝ նա «դառն ճշմարտություն ասելու բարոյական արիություն ունեցավ՝ մատը դնելով ազգային ծանր վերքի վրա»⁸: Ողջունելով Մ. Տյուսաբնի գաղափարները՝ Մամուրյանը արտատպեց նրա՝ «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածը: Տյուսաբն, Մամուրյանի խնդրանքով, գրեց նաև «Կանանց աշխատության սկզբունքը» հոդվածը, որտեղ կանանց բաժանեց երեք դասի՝ ա) աղքատ դաս, կին, որ աշխատում է գրկանքների, տվայտանքների մեջ, աշխատում է բնագոյով, սոսկ գոյությունը պահպանելու համար, բ) միջին դաս. գոռոզ ու աշխատանքի թշնամի, «մեծափարթամ» կանայք, գ) կանայք, որոնք հարստության ու զելխության մեջ արհամարհում էին աշխատանքը: Ըստ Տյու-

3 «Մշակ», 1887, № 46:
4 Գևորգյան Լ., նշվ. աշխ., էջ 427:

1 Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 175:
2 Նույն տեղում, էջ 170:

սարի՝ աշխատանքը պետք է ընկալվեր որպես սկզբունք, հասարակության մեջ արժանի տեղ գրավելու միջոց¹:

Ս. Տյուսաբը քննադատում էր Նապոլեոնի օրենսգրքերը, որտեղ կանանց իրավունքների մասին խոսք անգամ չկար, ծաղրի էր ենթարկում 18-րդ դարի ֆրանսիական «իմաստուններին, որոնք չհասկացան կնոջ կատարած դերակատարությունը հասարակության առաջընթացի գործում»²:

Կնոջ դատի պաշտպանությունը դարձավ Ս. Տյուսաբի գրական ստեղծագործության առանցքը: Նրա այդ գաղափարները հետագայում մարմնավորեցին նրա «Մայտա», «Սիրանույշ» «Արաքսիա կամ Վարժուհին» վեպերում, որոնցով, իբրև առաջին վիպասանուհի, առանձնահատուկ տեղ գրավեց հայ գրականության պատմության մեջ:

19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ պարբերական մամուլի միջոցով հասարակական գիտակցության մեջ աստիճանաբար արմատավորվեց սեռերի իրավահավասարության խնդիրը:

Առաջին հայ պարբերականը, որ պաշտոնապես հասցեագրվել է իգական սեռի ընթերցողներին «Հավերժահարսն» է, թեև իր բնույթով ու բովանդակությամբ այն կարելի է դասել կանանց պարբերականների շարքը³:

Խորհրդահայ մամուլն ու կանանց խնդիրը: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո պարբերական մամուլը կանանց հարցի առնչությամբ դրսևորում էր «պետական ֆեմինիզմի» քաղաքականություն, իսկ կանայք դրանց կողմից սկսեցին դիտվել իբրև քաղաքացիների հատուկ կատեգորիա: «Կենցաղի հեղափոխությունը» (սնունդ՝ հասարակական ճաշարան-

ներում, լվացք՝ լվացքատանը և այլն), պետք է ազատեր կնոջը տնային հոգսերից և ներգրավեր նրան հասարակական կյանք: Մեծ փոփոխություններ տեղի ունեցան ամուսնա-ընտանեկան ոլորտում. հաստատվեց քաղաքացիական ամուսնությունը, թույլատրվեց ապահարզանը, օրինականացվեցին արտամուսնական երեխաները: Աբորտը նույնպես օրինականացվեց, թեև այդ հարցը լուծվում էր ոչ թե ընտանիքի անդամների, այլ կին-բաժնի, կոլեկտիվի և սոցապահովության բաժնի ներկայացուցիչների համաձայնությամբ ու թույլտվությամբ:

Խորհրդահայ պարբերական մամուլը սկսեց կերտել աշխատավոր կնոջ կերպարը՝ կոմունիստական կուսակցության կողմից նախանշված նպատակներին հասնելու համար:

Խորհրդային Հայաստանի բոլոր շրջաններում անցկացվեցին անկուսակցական կանանց համագումարներ, որոնք լուսաբանվում էին մամուլի կողմից: «Խորհրդային Հայաստան» թերթը գրում էր. «Հայ կինը չի տեսել, որ իրեն մարդու տեղ դնեն, լսեն իր մտածմունքները և կանչեն իրեն մասնակցելու ընդհանուր աշխատավորության կյանքին»⁴:

Կանանց կոչ էր արվում մտնել հասարակական ոլորտ, հայտարարվում էր, որ ժամանակը չէ, որ կինը զբաղվի իր ընտանիքով և երեխաներով:

Մամուլում կանանց թեման առավել ակտիվ է շոշափվել Մարտի 8-ի կապակցությամբ: Ներկայացվում էր՝ օրինակ, տոնի առիթով կազմակերպվող օրինակելի միջոցառումների ծրագիրը: Թերթերում լուսաբանվում և խրախուսվում էին կանանց կատարած աշխատանքները, պարսավանքի էին ենթարկվում նրանք, ովքեր խոչընդոտում էին նրանց ակտիվ գործունեությանը: Խորհրդային առաջին տարիներին կանանց հասարակական ոլորտ ընդգրկելու խնդիր էր առաջացել, և մամուլի խնդիրն էր զբաղ-

վել դրա քարոզչությամբ: Հետագայում փոխվում է քաղաքականությունը, փոխվում է նաև մամուլի դիրքորոշումը: Հիշատակման է արժանի այն, որ կանայք ներգրավվեցին հասարակական ոլորտ, ինչը հանգեցրեց ծնելիության չափերի նվազմանը: 1936թ. հունիսի 27-ի ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշման համաձայն՝ արդարև արգելվեց: Մամուլն սկսեց ձևավորել բազմազավակ մոր կերպարը, ստալինյան Մահմանադրությամբ ամրապնդվեց սեռերի իրավահավասարությունը կյանքի բոլոր բնագավառներում:

Հետպատերազմյան տարիներին տնտեսության վերականգման խնդիր կար, և ԶԼՄ-ներում կարևորվեց կանանց մասնակցությունը հասարակական կյանքին: Ստեղծվեց արտոնյալ օրենսդրություն: Այս շրջանում հայաստանյան մամուլը հեղեղված էր հայ կնոջ ձեռքբերումների մասին պատմող նյութերով¹:

Շուշանիկ Կուրդիյանը² այն հայ բանաստեղծուհիներից էր, ովքեր դեմ էին կանանց իրավունքների սահմանափակմանն ու բռնությանը: Նա հայկական ֆեմինիզմի ծիլն էր, սկիզբն էր, այն բանաստեղծական ձեռքը, ով բացեց հայուհիների աչքերը, նրանց ոգևորեց, որ խոսեն: Նրա ստեղծագործությունները շատ դիպուկ են, և դրանցում բարձրացված թեման արդիական է բոլոր ժամանակների համար: Շ. Կուրդիյանի ստեղծագործություններից շատերը («Գեղեցկուհու մորմոռը», «Արծվի սերը», «Որպես քնքուշ մայիսյան վարդ և այլն»), նվիրված են հայ կնոջ դատի պաշտպանությանը: «Ես ձեզ խղճում եմ» բանաստեղծության մեջ Շ. Կուրդիյանը ներկայացրել է կանանց, ովքեր մտածում էին միայն տղամարդկանց գերելու մասին, ովքեր պատրաստ էին փողով վաճառվելու և չէին պաշտպանում

իրենց իրավունքներն ու ազատությունը.

«Ես ձեզ խղճում եմ

Խղճում եմ ձեզ, բթամիտ կանայք,

Որ արդ ու զարդի հետևից ընկած,

Թրև եք գալիս միշտ անսպասակ,

Լայիր լվաճառքի դեմքերդ կոկած:

Որ ամեն հնար դուք գործ եք ածում

Միշտ արունների հաճույքը շոյել»³:

Կանանց խնդրի լուսաբանումը ժամանակակից հայ մամուլում: Խոսքի և տեղեկատվության ազատությունը համարվում է հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայման: Այս ազատությունները կարևոր տեղ ունեն մարդու իրավունքների համակարգում, քանի որ տեղեկացված չլինելու պարագայում անհատը չի կարողանա իրականացնել իր մնացած իրավունքները: Այս կամ այն հասարակության ժողովրդավարության մակարդակի մասին կարելի է դատել ըստ այն չափանիշի, թե որքանով են այդ հասարակության մեջ օրենսդրորեն ապահովված ու կարգավորված խոսքի, տեղեկատվության և լրատվամիջոցների ազատությունները:

Խոսքի և ազատության իրավունքն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում⁴:

Ժողովրդավարության մասին տեսությունն ու գործելակերպն անընդհատ զարգացման մեջ են: Արդի ժամանակաշրջանում ժողովրդավարությունը բազմաթիվ հիմնախնդիրներ է առաջադրում հասարակությանը, որոնցից մեկը կանանց և տղամարդկանց հավասարությունն է: Սակայն հռչակել իրավահավասարություն, դեռ չի նշանակում

1 Թամրազյան Հ., «Երկեր» հ. Ա., Երևան 2006, էջ 786:

2 Գևորգյան Լ., նշվ. աշխ., 1996, էջ 418:

3 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 68:

4 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 130:

1 Հայ պարբերական մամուլի պատմություն, 18-19-րդ դդ., 79:

2 <http://hy.wikipedia.org/>:

3 <http://www.xnet.am/read/16183/0/>:

4 Զաքարյան Լ., Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

ապահովել դրա փաստացի իրականացումը: Չպետք է մոռանալ, որ չի կարող գոյություն ունենալ անսահմանափակ ազատություն՝ առանց պատասխանատվության: Ըստ այդմ՝ լրագրությունը գտնվում է ազատության ու պատասխանատվության սահմանագծում:

Հայաստանի Հանրապետությունում կան լրատվամիջոցներ, որոնք արագ և լիարժեք, շատ հաճախ նաև՝ ոչ ճիշտ տեղեկատվություն են մատուցում հասարակությանը՝ կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Կովկասյան հետազոտական ռեսուրս կենտրոնի հայաստանյան գրասենյակի (CRRC - Armenia) կատարած՝ «Հայաստանի ԶԼՄ-ի մասին 2011 թ. հասարակական կարծիքի ու նախընտրությունների հետազոտության» համաձայն՝ հայաստանցիների 81%-ն ամեն օր հեռուստացույցի առջև միջինը երեք ժամ է անցկացնում: 33%-ի համար հեռուստատեսությունը ժամանցի հիմնական միջոցն է, որն օրական 7-12 ժամ է խլում: Հայկական սերիալներ դիտում է Հայաստանի բնակչության 80%-ը: Հեռուստաընկերությունները չեն հապաղում հեռուստադիտողին «ուրախացնել» նորանոր օձառային օպերաներով: Ամեն հերթական սերիալ նախորդից ավելի շատ դաժան տեսարաններ, հայհոյախառք բառապաշար ու բռնություն է պարունակում: Գրեթե բոլոր սերիալների հեղինակները կարծես խոսքերը մեկ արած լինեն, օձառային օպերաների համարյա ամեն սերիայում տղամարդ կերպարը հայիոյում, հոգեբանորեն ճնշում և ծեծում է իր կնոջը (անգամ հղի կնոջը), քրոջը, մորն ու զոքանչին: Հերոսուհիներն էլ հիմնականում չեն աշխատում, նրանց կերպարները կարծես ստեղծված են միայն ինտրիգներ հյուսելու, անվերջ լացելու և բռնության ենթարկվելու համար:

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի վերլուծության համաձայն՝ հայկական սերիալներում կանանց

նկատմամբ բռնության, լացի ու ընկճվածության տեսարանները կազմում են 60%: Նույն պատկերը արտացոլվում է նաև իրականության մեջ: Հայաստանի կանանց 52%-ը գոնե մեկ անգամ բռնության որևէ տեսակի է ենթարկվել: Ըստ հիշյալ ՀԿ-ի անցկացրած «Ձերձ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցման տվյալների՝ հայ տղամարդկանց 55%-ը կարծում է, որ կինն է մեղավոր, եթե տղամարդը նրա վրա ձեռք է բարձրացնում:

Կանանց նկատմամբ մեդիայով «խրախուսվող» բռնությունը միակ խնդիրը չէ: Լրատվամիջոցներն ամեն օր մարդկանց ներշնչում են, որ կնոջ արժեքն ուղիղ համեմատական է նրա տեսքի ու սեքսուալության հետ: Երգիչներին շրջապատում են կիսամերկ աղջիկներ, երգչուհիներն էլ իրենց երգը հանրահայտ դարձնելու համար էրոտիկ տարրեր պարունակող հոլոժակներ են նկարահանում:

Կնոջ մարմինը նաև օգտագործվում է ապրանք գովազդելու և գնորդին գրավելու համար: Հայկական ամսագրային գովազդներում կանանց 50%-ը կարճ, բաց հագուստով է, ներքնագգեստով կամ էլ բոլորովին մերկ է:¹

Այն, ինչ ցուցադրվում է, ամրապնդվում է իրականության մեջ: Հայ տղամարդկանց 60%-ը համարում է, որ կինը երբեք լավ ղեկավար չի լինի²:

Հասարակության մեջ և տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց իրավունքների ու հնարավորությունների ոլորտում առկա անհավասարությունը հիմնականում պայմանավորված է ոչ միայն մշակութային ավանդույթներով ու սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլև իրականացվող քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի, գենդերային գաղափարախոսության՝ հետևաբար նաև ողջ հասարակության

1 «Կնոջ կերպարը հայկական գովազդում» հետազոտություն, (տես <http://womennet.am>):
2 <http://womennet.am> :

մեջ գենդերային մտածելակերպի բացակայությամբ:

Գովազդում կիրառվում են կանանց հասարակական կարծրատիպերով թելադրվող հետևյալ կերպարները.

1. Ընտանեկան օջախի պահպան (մայր, կին), այս կերպարը հիմնականում օգտագործվում է կենցաղային իրերի, սննդամթերքի, մանկական ապրանքների, դեղամիջոցների գովազդում:
2. Քաղաքային կոկետուհի. նա հեշտությամբ հաղթահարում է ցանկացած իրավիճակում ծագող բոլոր խնդիրները և վարում է ակտիվ կյանք: Այս կերպարը կիրառվում է կոսմետիկ միջոցների, օձանելիքի, հագուստի, կոշիկի, աքսեսուարների և, անգամ, հյութերի ու սպորտային ապրանքների գովազդում:
3. Գործարար կին. Նա անկախ է և միշտ բարձունքին: Այս կերպարն ակտիվ օգտագործվում է տեխնիկայի, մեքենաների, հագուստի գովազդում:

Տղամարդու կերպարը գովազդում ինչու է հետևյալ տիպերի.

1. Գործարար տղամարդ. գովազդվող ապրանքը նրան օգնում է հասնել իշխանության, հզորության: Տվյալ կերպարն օգտագործվում է էլիտար ապրանքների գովազդում:
2. Խիզախ հերոս՝ «մաչո». համապատասխանում է տղամարդկանց՝ առաջնորդ լինելու կերպարին, կիրառվում է օձանելիքի, մարմնի խնամքի կոսմետիկ միջոցների գովազդում:
3. Ընտանիքի տեր. հոգ է տանում իր ընտանիքի մասին, մասնավորապես՝ տնտեսական, ընտանեկան հարցերում: Այս կերպարն ի հայտ է գալիս մեքենաների կամ բջջային օպերատորների սակագնային պլանների գովազդում:

Գովազդում գենդերային խտրականությունը ստեղծվում է տղամարդկանց՝ որպես գերիշխող և կանանց՝ որպես հնազանդվող սեռերի ներկայացման միջոցով: Գենդերի կիրառումը հայկական գովազդում չի սահմանափակվում տղամարդկանց և կանանց հարաբերությունների և հասարակության մեջ զբաղեցրած դիրքի մասին կարծրատիպային պատկերացումներով: Եթե արտասահմանյան գովազդում տղամարդու և կնոջ տիպիկ կերպարները սպառողներին հարազատ են, ապա հայերի համար այդ կերպարներն օտար են:

Հայաստանում յուրաքայչուր 5-րդ կինը բարձրագույն կրթություն ունի, բայց այդ ներուժը մեր իրականության մեջ չի օգտագործվում ըստ արժանվույն: Պատճառները շատ են՝ սկսած հայ հասարակության հոգեկերտվածքից, վերջացրած նրանով, որ հայ կանայք մեծ մասամբ զբաղված են ընտանիքով ու ընտանեկան հարցերով:

Հայաստանում կանանց դերը հասարակության մեջ զգալիորեն բարձրացել է: Մեր երկրում կան բազմաթիվ չլուծված հարցեր՝ կապված կանանց խնդրի հետ, սակայն դրանք ժամանակ են պահանջում, և, աստիճանաբար «սայլը տեղից շարժվում է: Լրատվամիջոցները կամ սուտ տեղեկատվություն են իրականացնում այս խնդրի հետ կապված, կամ էլ հարցին անդրադառնում և այն լուսաբանում են սխալ տեսանկյունից: Հայաստանում գենդերային խտրականությունը հիմնականում անդրադառնում են ինտերնետային լրատվամիջոցները, որոնք լուսաբանում են կամ այդ ուղղությամբ ՀԿ-ների կատարած աշխատանքը, կամ՝ որոշ միջոցառումներ: Լրատվամիջոցների գլխավոր խնդիրը հարցը բարձրացնելն է հասարակության շրջանում, դրա համար լուծման տարբերակներ առաջարկելն է, հասարակությանն իրազեկված պահելն է մեր երկրում կատարվող բռնությունների, անհավասարությունների ու անարդարությունների

վերաբերյալ:

Ընտանեկան բռնությունը բռնության ամենատարածված տեսակներից մեկն է: Ընտանեկան բռնությունն ասելով՝ նկատի ունենք որոշակի գործողություններ, որոնք կատարվում են ներընտանեկան հարաբերություններում և բնորոշվում են հոգեբանական ճնշման գործադրմամբ, ինչպես նաև կարող են ուղեկցվել ծեծով, սպառնալիքներով, սեռական բռնության կիրառմամբ. այսինքն՝ բռնությունը ընտանեկան զույգի միջև փոխհարաբերության այն տեսակն է, որը ընտանիքի զույգի անդամներից որևէ մեկին պատճառում է ֆիզիկական, հոգեբանական կամ սեռային վնաս: Սովորաբար տղամարդիկ են դիմում բռնության՝ փորձելով ճնշում գործադրել կամ ցույց տալ իրենց իշխանությունը թույլ սեռի հանդեպ:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության շրջանակներում կատարված աշխատանքի արդյունքում կարելի է փաստել, որ հայաստանյան հեռուստատեսությունները քիչ են անդրադառնում մեր իրականության մեջ առկա գենդերային հիմնահարցերին: Լրատվամիջոցների զգայուն քաղաքականությունն ամրապնդում է կանանց կարծրատիպային ընկալումը հասարակության կողմից որպես անհատներ, ովքեր անընդունակ են իրականացնել հասարակական-քաղաքական ակտիվ գործունեություն:

Այսպիսով՝ տղամարդու և կնոջ հավասարության մասին խոսելիս հարկավոր է նկատի ունենալ ոչ թե ֆիզիկական հավասարությունը, այլ այն, որ սոցիալապես կինն ու տղամարդը պետք է լինեն հավասար: Դա նշանակում է, որ հասարակության և պետության մեջ նրանց համար պետք է ընձեռված լինեն հավասար հնարավորություններ: Քան-

զի ժողովրդավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց սեռերի հավասարության: Առաջադեմ ու զարգացած հասարակությունը վաղուց է հանգել այն համոզման, որ սեռերի հավասարության նպատակի իրականացման համար ամենադժվար խոչընդոտը մարդկանց մտածելակերպում արմատացած կաղապարներն են՝ գենդերային կարծրատիպերը: Մարդը ծնված օրվանից իր ամբողջ կյանքի ընթացքում կրում է տվյալ հասարակության ազդեցությունը՝ «կերտվում» որպես կին կամ տղամարդ: Գենդերային նորմերը սերմանվում են մանկուց, իսկ հետագայում ամրապնդվում զանազան սոցիալական ինստիտուտների միջոցով: Լրատվամիջոցներն ամեն օր մարդկանց ներշնչում են, որ կնոջ արժեքն ուղիղ համեմատական է նրա տեսքի ու սեքսուալության հետ: Երգիչներին շրջապատում են կիսամերկ աղջիկներ, երգչուհիներն էլ իրենց երգը հանրահայտ դարձնելու համար էրոտիկ տարրեր պարունակող հոլովակներ են նկարահանում: Մամուլը պետք է կարծիք հայտնելու հնարավորություն ընձեռի այս հարցին դեմ և կողմ վերաբերվող մարդկանց: Հայաստանում այսօր գոյություն չունի կնոջ նույնականացման խնդիր, ընդհակառակը, այսօր գոյություն ունի ազգային նույնականացման, ինքնության խնդիր: Հայ կանանց մեծ մասը չունի իր տեղը կյանքում: Հայաստանում յուրաքանչյուր 5-րդ կինը բարձրագույն կրթություն ունի, բայց այդ ներուժը մեր իրականության մեջ չի օգտագործվում ըստ արժանվույն: Պատճառները շատ են՝ սկսած հայ հասարակության հոգեկերտվածքից, վերջացրած նրանով, որ հայ կանայք մեծ մասամբ զբաղված են ընտանիքով ու ընտանեկան հարցերով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զաքարյան Լ., Հարությունյան Ա. «Գենդեր և լրագրություն», Երևան, 2010թ.
2. Թամրազյան Հ., «Երկեր», Երևան, 2006թ.
3. Հակոբյան Մ., «Զմյուռնահայ պարբերական մամուլը», Երևան, 1987թ.
4. «Հայ պարբերական մամուլի պատմությունը 18-19-րդ դդ.», Կահիրե, 2006թ.
5. Հարությունյան Ա. «Երևելի տիկնանց դարը, հայ կանանց հասարակական գործունեությունը 19-րդ դարում և 20-րդ դարակզբին», Երևան, 2005թ.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«Մշակ», 1886թ., N120, 122, 124
«Մշակ», 1887թ., N46

ԿԱՅՔԵՐ

www.wikipedia.org
www.xnet.am
www.womannet.am

ПРОБЛЕМА ГЕНДЕРНОГО НЕРАВЕНСТВА В АРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ И ЕЕ ОСВЕЩЕНИЕ В АРМЯНСКИХ СРЕДСТВАХ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ

ЛУИЗА ГУМРОЯН

Руководитель центра “Русский язык и культура”

В статье рассматривается актуальная проблема современной армянской действительности – гендерное неравенство. Был проведен опрос группы армянских образованных людей мужского пола. Они считают, что гендерное неравенство тормозит процесс развития демократического общества и выступают за женское образование, высоко оценивая особую роль женщин в обществе. По их мнению, соблюдение гендерного равенства исходит из интересов общества. Таким образом, автор выступает за освещение этой проблемы в армянских СМИ.

25. Шадриков В.Д. Мир внутренней жизни человека. [Текст] / В.Д.Шадриков. М.: Университетская книга, 2005
26. Шадриков В.Д., Мазиллов В.А. Общая психология. Учебник для академического бакалавриата. [Текст] / В.Д.Шадриков, В.А.Мазиллов. М.: Юрайт, 2015. 411 с.
27. Шульц Д.П., Шульц С. Э. История современной психологии. [Текст] / Д.Шульц, С.Шульц. СПб: Евразия, 1998. 528 с.
28. Юревич А.В. Системный кризис психологии [Текст] / А.В.Юревич // Вопросы психологии, № 2, 1999, с. 3–11.
29. Bühler K. Die Krise der Psychologie. [Текст] / K. Bühler. Jena: Fischer, 1927. XV, 223 S.
30. Cole M. Alexander Luria and the Resolution of the Crisis in Psychology [Текст] / M. Cole // I Международная конференция памяти А.Р. Лурии – First International Luria Memorial Conference: Abstracts. Moscow, Russia, September 24–26, 1997. М.: MGU, p.117.
31. International Congress of Psychology 21 st Paris, 1976.: Actes du XXI e Congress international de psychologie. Paris, 18–25 juillet. [Текст] Paris: Press Univ. de France, 1978. 462 p.
32. Kostyleff N. La crise de la psychologie experimentale. [Текст] / N. Kostyleff. Paris, 1911. 186 p.
33. Lewin K. The Conflict between Aristotelian and Galilean Modes of Thought in contemporary Psychology [Текст] / K. Lewin // J. Gen. Psychol., 1931, pp.141–177.
34. Willy R. Die Krisis in der Psychologie. [Текст] / R. Willy. München, 1899. 280 S.
35. Wundt W. Grundzüge der physiologischen Psychologie [Текст]. / W. Wundt. Leipzig: Engelmann, 1874. XII, 870 S.

This article analyzes the phenomenon of the crisis in psychology. Periodically, there are new publications on the crisis in psychology. This indicates that the topic remains relevant. The article explains the position according to which there are psychological reasons that cause the new generations of psychologists all talk about the crisis. The main thesis of this article – intrusive treatment (and return) to the theme of the crisis there is nothing more than a memory of Psychologists (for themselves), that psychology is not perfect yet, if measured by and large, consider it the science of the human soul, the science of the most amazing and perfect (elevated), as once thought, Aristotle. It is alleged that during the inception of the crisis should be taken in 1874, ie, it coincides with the date of occurrence of psychology as an independent science. Identified and described three levels of crisis.

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ. XXI ԴԱՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱԶԻԼՈՎ

Կ. Դ. Ուշինսկու անվան Յարոսլավի պետական մանկավարժական
համալսարանի ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում դիտարկվում է ճգնաժամի բացառիկության վերլուծությունը հոգեբանության մեջ: Հոգեբանության մեջ ճգնաժամի վերաբերյալ պարբերաբար ի հայտ եկող հրապարակումները փաստում են այն, որ վերջինիս մասին թեման արդիական է և փակված չէ:

Հոդվածում սահմանվում է մի դրույթ, որի համաձայն՝ գոյություն ունեն հոգեբանական դրդապատճառներ, որոնք հնարավորություն են տալիս նոր սերնդի հոգեբաններին խոսելու ճգնաժամի մասին: Ներկայացվող հոդվածի հիմնական դրույթն այն է, որ ճգնաժամի վերաբերյալ կպչուն վերաբերմունքը (և անդրադարձը) ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգեբանների հիշողությունը (իննց իրենց համար) այն բանի մասին, որ հոգեբանությունը դեռ կատարյալ վիճակում չէ: Եթե հնարավոր լինի չափել գերակշիռ չափով, պետք է համարել այն գիտություն հոգու մասին, գիտություն՝ առավել զարմանալի և կատարյալի (բարձրացման) մասին, ինչպես ենթադրում էր Արիստոտելը: Ապացուցված է, որ ճգնաժամի ստեղծման ժամանակը պետք է ընդունել 1874 թվականը, այսինքն՝ այն համընկնում է հոգեբանության՝ որպես ինքնուրույն գիտության առաջացման ժամանակի հետ:

КОРРЕЛЯЦИЯ ГЕНИАЛЬНОСТИ И РЕАЛЬНОСТИ
(ДИАЛОГ ТАЛАНТА И ДИПЛОМА)

Взаимосвязь таланта, гения и педагогики – это сложная тема современности. В истории и практике много примеров, когда методы преподавания не воспринимаются талантливым человеком. Статья раскрывает эти проблемы с новой стороны.

Ключевые слова: диплом, талант, образование, гений.

Крамольные мысли о свободном таланте и консервативных рамках образования мучают не одно поколение творческих лиц. Исследований, посвященных этой теме, – очень мало. Так, известные случаи, когда на вступительных экзаменах Ю. Никулин «провалился», чуть не отчислили из музыкальной школы В. Гергиева, У. Дисней был уволен из газеты из-за недостатка воображения и отсутствия оригинальных идей, культовые The Beatles получили жесткий отказ от одной из крупных студий звукозаписи, где им было сказано: «нам не нравится их звучание, у них нет будущего в шоу-бизнесе!» (этот список можно было бы продолжить не одной парой ярких примеров).

Итак, невольно задаешься болезненным вопросом: можно ли стать вторым Эйзенштейном, не заканчивая ВГИК? На этот весьма и весьма «интересный» вопрос попытаемся найти ответ в настоящей статье.

Диплом кинорежиссера, желательно

красный, заставляет уважать его счастливого обладателя, на плечах у которого “появляются эполеы”. Хотя такого ВУЗовского «скрижали» нет у К. Тарантино, Дж. Кэмерона, Лана и Энди Вачовски, К. Нолана, А. Куросавы и Т. Китано. Да и выпускник нашего альма-матер (Ташкентский театрально-художественный институт им. А. Островского, ныне Государственный институт искусств и культуры Узбекистана) Т. Бекмамбетов, конечно, не классик кино и имеет диплом художника. И имеет ли в данном случае значение наличие соответствующего диплома?

Сегодня на поприще индустрии кино вольготно себя чувствуют те, которые привносят в свое творчество «глоток свежего», неортодоксального, а парадоксального мышления, люди, верящие в дар.

В настоящее время, время различных общественных перемен, современные видные кинокритики и киноведы высказывают мысль о том, что «самые успешные продюсеры во всем мире сегодня стремятся тратить многомиллионные бюджеты не стандартно – доверяя их арт-хаусным режиссерам, рекламщикам и клипмейкерам, чтобы влить в индустрию свежую кровь. Художник из Индии – Тарсем Сингх в начале пути как раз снимает клипы и рекламу, как вдруг за три года его «Белоснежка: Месть гномов» (2012) и «Вой-

на Богов: Бессмертные» (2011) собирают в прокате почти 400 млн. долларов. Фестивальный любимец Альфонсо Куарон, получивший номинацию на Оскар за малобюджетную драму «И твою маму тоже», вскоре снимает третьего «Гарри Потера» и приносит студии «Уорнер» 800 млн. долларов. Дизайнер из ЮАР Нил Бломкамп снимает всего за 30 млн. «Район №9» и за свой «Элизиум» получает 115 млн. бюджет и тратит деньги, везет на гигантскую свалку под Мехико, где все, включая Мета Деймана, работают в 20 смен. Свежие имена, диких локаций, осознанный риск, новые технологии – это самый модный и правильный способ снимать фильм сегодня» [1].

Усовершенствование процесса создания теле-, кинофильмов и в их качества – прерогатива поколения постнатального и классического кинопериода.

Забегая вперед, отметим: мы вовсе не ратуем за ненужность творческого образования и не даем рекомендаций тем, кто собирается стать кинотворцом. Мы лишь достаточно серьезно и разносторонне освещаем явление, о котором не любят говорить в современном обществе. Эта постановка вопроса правомерна и уместна, так как существует некий стереотип об обязательном наличии диплома, без которого талантливым людям, а может и гениям через “тернии к звездам” не пробиться и не донести “свое детище” до своего зрителя. В итоге у многих творческих лиц складывается своеобразная фобия и опускаются руки перед созданием прекрасного.

Нынешняя индустрия кинопромышленности (конвейерное или особое производство) достаточно требовательна, и, что самое главное, подготовлена для того, чтобы воспринимать новый киноязык, новую трактовку киноповествований, новый эстетический прием. На наш взгляд, за короткий, по исто-

рическим меркам, период в истории кино происходит некая торсиальная ротация. Так, в так называемый период «оттепели», не воспринимали новые идеи, новые подходы и новые взгляды нового поколения кинорежиссеров. Эти кинотворцы классиками кино и консерваторами того времени. Они считались бунтарями, творческими хулиганами. После всех перипетий скептик киноархивов диктовался сурово и не совсем справедливо. Циклический виток истории повторяется не зря, потому что как тогда, так и сегодня кино имеет большую популярность у молодого поколения, отражает широкий резонанс у тинэйджерского кино. Поэтому этот вид искусства как в середине XX века, так и сегодня считается остроактуальным на пульсе социума.

Талант в нашем обществе может, должен и будет доминировать и лидировать, а причина абсолютно ясна: он (талант) – возвышенной, его передовые идеи – яркие и совершенны, несмотря ни на что. При этом абсурден сам факт непризнанности выдающихся творческих личностей. В будущем мы предполагаем вернуться к рассмотрению этого вопроса еще раз, так как отрицание, недооценка и отсутствие содействия процессу появления креативных и молодых (а иногда и не очень) людей с богатым профессиональным арсеналом гениальных мыслей – тема, заслуживающая изучения.

ЛИТЕРАТУРА

1. Специальный репортаж. 12 октября – 2013 г. телеканал Россия 24.

ՀԱՆՃԱՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ՏԱՂԱՆԴԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԻ ԵՐԿԵՆՈՍՈՒԹՅՈՒՆ)

ԷԼԴԱՐ ՅՈՒԼԴԱՇԵՎ

*Ուզբեկստանի արվեստի և մշակույթի պետական ինստիտուտի ավագ գիտաշխատող-հայցորդ,
Ուզբեկստանի արվեստի և մշակույթի պետական ինստիտուտի Երիտասարդ գիտնականների
խորհրդի նախագահ*

Տաղանդի, հանճարի և մանկավարժության կապը արդիականության բարդ խնդիր է: Պատմության և տեսության մեջ բազմաթիվ օրինակներ կան, երբ դասավանդման մեթոդները չեն ընդունվում տաղանդավոր մարդու կողմից: Հոդվածը բացահայտում է այդ խնդիրները նոր տեսանկյունից:

CORRELATION BETWEEN GENIUS AND REALITY (DIALOGUE BETWEEN TALENT AND DIPLOMA)

ELDAR YULDASHEV

*Senior Researcher of Uzbekistan State Institute of Arts and Culture,
Chairman of the Board of Young Scientists of Uzbekistan State Institute of Arts and Culture*

The interrelation of talent, the genius and pedagogy is a complicated issue nowadays. In the history and theory there are a lot of examples when methods of teaching aren't perceived by a talented person. Article reveals these problems from a new angle.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Հանրային կարծիքն արտահայտում է հասարակական գիտակցության իրական պատկերը, հասարակության հետաքրքրությունները, տրամադրություններն ու տարբեր սոցիալական խմբերի զգացմունքները: Հանրային կարծիքի ձևավորման հիմնական մեթոդներն են ներշնչանքը, վարակումը, համոզումը, կրկնօրինակումը, իսկ ձևավորման հիմնական գործիքները՝ գանգվածային լրատվության միջոցները, բանավոր քարոզչությունը, քաղաքական ենթաքարոզչությունը, միջանձնային շփումները: Հանրային կարծիքն իր զարգացման ճանապարհին հաղթահարում է մի քանի փուլեր՝ առաջանում է, ձևավորվում և անցնում գործնական փուլ: Այն կարող է առաջանալ ինչպես ինքնաբերաբար, այնպես էլ գիտակցված: Գիտական գրականության հետազոտությունները ցույց են տալիս, որ տեսաբանների շրջանում փուլերի բաժանման մի քանի մոտեցումներ են առկա:

Բանալի բառեր. հանրային կարծիք, Զանգվածային լրատվության միջոցներ, հասարակական գիտակցություն, ուսումնասիրության մեթոդներ, փաստաթղթերի վերլուծություն, հարցումներ, կարծրատիպեր, իմիջ, գովազդ, լրության պարույր, ազդեցություն, գանգվածային գիտակցություն:

«Public opinion»-ը անգլերեն եզրույթ է, որը թարգմանաբար նշանակում է հանրային կարծիք: Հանրային կարծիքի բազմաթիվ սահմանումներ գոյություն ունեն ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական և ամերիկյան գիտական աշխատություններում: Բրիտանական հեղինակավոր «Բրիտանիկա»

հանրագիտարանը հանրային կարծիքը սահմանում է, որպես «**որն է խնդրի մասին անհատների տեսակետների, մոտեցումների և հավատալիքների ամբողջությունը՝ արտահայտված հասարակության մեծամասնության կողմից**»: Տեսաբանները վկայում են, որ պատմականորեն հանրային կարծիքի մասին առաջին տեսություններն առաջացել են արևմտյան փիլիսոփայության մեջ: «Հանրային կարծիք» (Public opinion) եզրույթն առաջին անգամ օգտագործել է անգլիացի գրող Ջոն Սոլսբերին (John Salisbery) 1159 թվականին՝ ազգաբնակչության բարոյական աջակցությունը խորհրդարանին ցույց տալու համար: Սակայն քաղաքակրթության պատմության ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս նկատելու, որ հնուց ի վեր արժևորվել է ուրիշի կարծիքի վրա ազդելու ունակությունը: Հանրային կարծիքի ձևավորման համար առաջնորդներն օգտագործել են ինչպես քարոզչական, այնպես էլ կերպարի ստեղծման հնարքներ: Օրինակ՝ Բաբելոնի Համնուրաբի թագավորը (Ք. Ա. 1792-1750թթ.) հրամայել է իր հայտնի օրենքները փորագրել երկու մետրի հասնող սև քարե սյան վրա, որի վերևում պատկերված է թե ինչպես է Աստված իրեն հանձնում գավազանը՝ ի նշան իշխանության: Այս կերպ նա ցանկանում էր կերտել հանրային իր կերպարը: Հին Հունաստանում հռետորի հաջողության գլխավոր պայմաններից էր հանրության վերաբերմունքը, իսկ Հին Հռոմում տարածված էր մինչև այժմ հայտնի աֆորիզմներից մեկը՝ «Vox populi vox Dei»- ժողովրդի ձայնը Աստծո ձայն է»: Սա

ցույց է տալիս, թե ինչքան մեծ կարևորություն էր տրվում հռոմեացի ժողովրդի կարծիքին¹:

Միջին դարերում Եվրոպայում այս կամ այն մարդու հայացքը կախված էր այն խավից, որին նա պատկանում էր, սակայն հանրային կարծիքի ֆենոմենը գոյություն ուներ կրոնական և քաղաքական էլիտայի շրջանում: Պայքարն իշխանության համար ենթադրում էր պայքար՝ մտքերի վրա ազդելու կողմնակիցներ ձեռք բերելու համար: Հետագայում, 17-18-րդ դարերում, «**հանրային կարծիք**» հասկացությունը բնութագրում էր բնակչության և քվեարկողների քաղաքական պատկերացումները, որոնք արտահայտվում էին խորհրդարանից դուրս և խորհրդարանական տեսակետներին հակասող բնույթ էին կրում: Իսկ 18-րդ դարի 2-րդ տասնամյակից ի վեր «հանրային կարծիք» եզրույթն ստացավ լայն կիրառում ամբողջ աշխարհում:

Նոր ժամանակներում հանրային կարծիքի մասին հետազոտությունները տեղ են գտել հիմնականում անգլիացի փիլիսոփաներ Թոմաս Հոբսի (Thomas Hobbes), Ֆրենսիս Բեկոնի (Francis Bacon) և Ջոն Լոկի (John Locke) աշխատություններում: Լոկը, իր «Էսսե մարդկային մտքի մասին» (An Essay concerning Human Understanding) աշխատության մեջ առանձնացնում է աստվածային, մարդկային և հանրային կարծիքի նշանային խմբերը, որոնց պետք է ենթարկվի մարդն իր վարքագծով: Լոկը հանրային կարծիքը դիտարկում է որպես բարոյականության դրսևորում և համարում է, որ մարդիկ իրենց արարքները գնահատելիս առաջնորդվում են ոչ միայն կրոնական պատվիրաններով, քաղաքացիական օրենքներով, այլ նաև հանրային կարծիքով: ««Առաքինություն» և «արատ» բառերն ամենուր արտահայտում են գովքի կամ մեղադրանքի այն ընկալումները, որոնք ընդունված են հանրու-

թյան կողմից»²: Բազմաթիվ տեսաբանների կարծիքով՝ Լոկի հանրային կարծիքի վերաբերյալ «բարոյականության» և «անբարոյականության» տեսությունը թույլ տվեց հետագայում դիտարկել հանրային կարծիքի դերը կյանքի տարբեր դրսևորումներում, ինչպես նաև հիմնավորել հանրային կարծիքի այնպիսի հատկանիշը, ինչպիսին է՝ գնահատական տալը:

Անգլիացի հայտնի փիլիսոփա Թոմաս Հոբսը դիտարկում էր հանրային կարծիքը որպես «որոշակի սոցիալական կարիքների արտացոլանք»³: Նա պնդում էր, որ մարդկանց գործունեությունն ու արարքները հիմնավորված են իրենց կարծիքներով, և մարդկանց կարծիքները ճիշտ կառավարելու դեպքում, կարող են կառավարել նաև նրանց գործունեությունը:

«Հանրային կարծիք» հասկացությունը դիտարկել է նաև գերմանացի փիլիսոփա Գեորգ Վիլհելմ Հեգելը (Georg Wilhelm Hegel): Հեգելը հանրությանը բաժանում էր երկու մասի՝ «քաղաքացիական հասարակություն» և «պետություն»: Հեգելը փորձում էր ապացուցել, որ միայն պետությունը կարող է լուծել հասարակության խնդիրները: Ըստ նրա՝ ժողովրդին բնորոշ են սուբյեկտիվ կարծիքները, իսկ պետությանը՝ օբյեկտիվ⁴:

Հանրային կարծիքը շարունակում է մնալ հիմնականում իրավաբանական գիտությունների առարկա մինչև 19-րդ դարը, որից հետո այն դառնում է հոգեբանական սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկա: 20-րդ դարի 20-ականներից սկսվում են հանրային կարծիքի ուսումնասիրությունները գի-

2 Ավետիսյան Ա., Հանրային կապեր. Հանրային կարծիքի վրա ազդեցության մեթոդներ, «Հանրային հաղորդակցություն, արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները Հայաստան 2013», Գիտաժողովի նյութեր, «Էդիթ Պրինտ» Երևան 2014, էջ 40-51:

3 Локк Дж., Избранные философские произведения: в 2 т. Т. 1. М.: Соц-экгиз.1960. с.-356.

4 Гоббс Т., Левиафан или материя, форма и власть государства: церковного и гражданского. Часть II. О государстве. - М.: Мысль, 1997. - с. - 110.

1 <http://www.britannica.com/EBchecked/topic/482436/public-opinion>.

տական ոլորտում: 1960-ականներից սկսած ուսումնասիրություններ են իրականացվում հանրային կարծիքի ձևավորման առանձնահատկությունների շուրջ, իսկ 1990-ականներից ի վեր սկսվեցին անցկացվել գանգվածային քաղաքական հարցումներ, ինչպես նաև սոցիոլոգիական ուսումնասիրությունները բաժանվեցին երկու խմբի՝ **գիտական և կոմերցիոն**:

Հանրային կարծիքի ձևավորման առանձնահատկությունները

Հանրային կարծիքի ուժն ու դերը, դրա ազդեցությունը սուբյեկտների գործունեության վրա անժխտելի է համարվել պատմական բոլոր գործընթացներում: Պատահական չէ, որ 18-րդ դարի անգլիական խոշորագույն փիլիսոփաներից Դեյվիդ Հյումը (David Hume) գրում էր. «Կառավարումը հիմնված է միայն կարծիքի վրա, և այս օրենքը վերաբերում է ինչպես ամենաբռնակալ, այնպես էլ ամենաժողովրդավարական կառավարման համակարգին»¹:

Ըստ տեսաբանների՝ հանրային կարծիքն արտահայտում է հասարակական գիտակցության իրական պատկերը, հասարակության հետաքրքրությունները, տրամադրություններն ու տարբեր սոցիալական խմբերի զգացմունքները: Հանրային կարծիքի ձևավորման հիմնական մեթոդներն են ներշնչանքը, վարակումը, համոզելը, կրկնօրինակումը, իսկ ձևավորման հիմնական գործիքները՝ գանգվածային լրատվության միջոցները, բանավոր քարոզչությունը, քաղաքական ենթաքարոզչությունը, միջանձնային շփումները: Հանրային կարծիքն իր զարգացման ճանապարհին հաղթահարում է մի քանի փուլեր՝ առաջանում է, ձևավորվում և անցնում գործնական փուլ: Այն կարող է առաջանալ ինչպես ինքնաբերաբար, այնպես էլ գիտակցված: Գիտական գրականության հետազոտությունները ցույց են տալիս,

որ տեսաբանների շրջանում փուլերի բաժանման մի քանի մոտեցումներ են առկա: Օրինակ՝ սոցիալական հոգեբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Ուլեդովը, իր աշխատություններում, քննելով հանրային կարծիքի ձևավորման գործընթացը, առանձնացնում է հետևյալ փուլերը՝

- անհատական գիտակցության մեջ պատկերացումների և զգացմունքների առաջացում,
- մարդկանց միջև տեղեկատվության փոխանակում (ըստ Ուլադովի՝ այս փուլում կարծիքը անհատական գիտակցության սահմաններից անցում է կատարում հանրային գիտակցության: Կարծիքների փոխանակման, բանավեճերի և քննարկումների կայացման պահից սկսվում է հանրային կարծիքի ձևավորումը)²:

Իսկ բուլղարացի տեսաբան Դիմիտրի Գանչևն առանձնացնում է կարծիքի ձևավորման 5 փուլ:

Առաջին փուլը բնութագրվում է կյանքի տարբեր դրսևորումների և առանձին դեպքերի մասին տեղեկատվության ուղղակի կամ անուղղակի ստացմամբ և ընկալմամբ: Այս փուլում առաջանում են իրադարձությունների, փաստերի և խնդիրների մասին որոշակի զգացմունքներ և պատկերացումներ:

Երկրորդ փուլում տեղի է ունենում ստացած տեղեկատվության անհատական դատողություն, գիտակցում, անուղղակիորեն ընկալում և անհատական գիտակցության մեջ այդ տեղեկատվության գնահատում: Հաշվի առնելով անձնական փորձը, հետաքրքրությունների շրջանակը, որոշակի ազդեցությունների ներքո ձևավորվում է անձնական կարծիքը:

2 Ավետիսյան Ա., «Հանրային կապեր. հանրային կարծիքի վրա ազդեցության մեթոդներ», Հանրային հաղորդակցություն. Արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները, Գիտաժողովի կույթեր, Հայաստան 2013, էջ 40:

Երրորդ փուլում, քննարկումների, բանավեճերի ընթացքում տեղի է ունենում տվյալ խնդրի վերաբերյալ մարդկանց և սոցիալական խմբերի կարծիքների, տեսակետների, գնահատականների փոխանակում: Այս փուլում տեղի է ունենում տարբեր անձնական կարծիքների և տեսակետների միջև պայքար: Համապատասխան կարծիքի ձևավորման այսպիսի գործընթացում մասնակցություն են ունենում ինչպես անձնական, այնպես էլ հասարակական գիտակցությունը:

Չորրորդ փուլում անհատական տեսակետներն ու կարծիքները խմբավորվում են և միավորվում քննարկվող խնդրի ընդհանուր հիմնարար սկզբունքների շուրջ: Այս փուլում բյուրեղանում և ձևավորվում է մեկ **հանրային կարծիք**:

Իսկ **հինգերորդ փուլում**, արդեն իսկ ձևավորված հանրային կարծիքը դրսևորվում է գործնականում:

Հանրային կարծիքի ուսումնասիրության մեթոդներ

Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքագրման 3 հիմնական մեթոդներ գոյություն ունեն՝

- Դիտումներ,
- Փաստաթղթերի վերլուծություն,
- Հարցումներ՝ հարցազրույցների կամ հարցաթերթիկների տեսքով:

Դիտումներ

Սոցիոլոգիայում դիտումները տարբեր են. երբեմն սոցիոլոգն ինքնուրույն հետևում է տեղի ունեցող իրադարձությանը, երբեմն նա կարող է օգտվել այլ մարդկանց կողմից իրականացված դիտումների տվյալներից:

Հիմնականում տարբերակում են հետևյալ դիտումները՝

Օբյեկտիվ (արտաքին) դիտում-ինքնադիտում (ներքին դիտում):

1. Օբյեկտիվ դիտման դեպքում

1 Павлов С. Н., Управление информацией и общественными связями для создания эффективного имиджа вуза, «Академия Естествознания, 2011 г., глава 2, <http://www.rae.ru/monographs/130>

երևույթների ուսումնասիրությունը կախված է արտաքին դրսևորումների՝ շարժողական և վեգետատիվ ռեակցիաների, վարքի ընկալման հետ:

Ինքնադիտումը՝ ինքն իրեն դիտումն է՝ սեփական գիտակցության և վարքի նկատմամբ:

2. Դաշտային (բնական)-լաբորատոր (արհեստական) դիտում:

Դաշտային դիտումը օբյեկտների, նրանց առօրյա կյանքի և գործունեության դիտումն է իրական պայմաններում:

Լաբորատոր դիտումն իրականացվում է արհեստականորեն ստեղծված պայմաններում:

3. Անհատական-կոլեկտիվ դիտում:

Անհատական դիտումն իրականացվում է մեկ դիտողի կողմից: **Կոլեկտիվ կամ խմբային դիտումն** իրականացվում է մի քանի դիտողների համատեղ աշխատանքի միջոցով: Ընդ որում, համատեղությունը որոշվում է, առաջին հերթին, ուսումնասիրության ընդհանրացվածությանը (միասնական պլան, նպատակ, մեթոդիկա):

4. Պատահական-մտադրված դիտում:

Պատահական դիտումը նախօրոք չպլանավորված դիտումն է, որն իրականացվում է անսպասելիորեն ստեղծված պայմաններում:

Մտադրված դիտումը նախօրոք պլանավորված դիտումն է, որը պահանջում է որոշակի նպատակներ:

5. Ամբողջական- ոչ ամբողջական դիտում:

Ամբողջական դիտման նպատակն է օբյեկտի հստակ, մանրամասն ուսումնասիրումը:

Ոչ ամբողջական դիտման ընթացքում ուշադրություն է դարձվում իրավիճակի և դիտվողների վարքի օպտիմալ պարամետրերի վրա:

6. Համընդհանուր-ընտրողական դիտում:

1 Гегель Г.В. Сочинения. М. Л., 1934. Т. 7. с. 324-337.

Համընդհանուր դիտումը օբյեկտի աւընդհաս դիտումն է՝ առանց ընդմիջման:

Ընտրողական դիտումն իրականացվում է դիտողի կողմից ընտրված հատուկ ժամանակամիջոցներում:

7. Հաստատուն-գնահատողական դիտում:

Հաստատուն դիտման ընթացքում նկատված երևույթները և գործողությունները միայն գրանցվում են և քննարկման ենթակա չեն:

Գնահատողական դիտումն ուղեկցվում է դիտողի կողմից իրավիճակի և գրանցված երևույթների գնահատմամբ:

8. Ստանդարտ-ոչ ստանդարտ դիտում:

Ստանդարտ դիտումն իրագործվում է նախօրոք մշակված սխեմայով, գրանցման ձևով: Ընդ որում, այս դեպքում հաճախ օգտագործվում են բլանկներ: Կիրառվում է, երբ ուսումնասիրվող գործընթացը հասկանալի է, և պահանջվում է միայն ձգբռնում և լրացուցիչ ինֆորմացիայի ստացում:

Ոչ ստանդարտ դիտումը չկարգավորված դիտումն է, որի ընթացքում կատարվածի նկարագրումը դիտողի կողմից արտահայտվում է ազատ ձևով:

9. Բացփակ դիտում:

Բաց դիտման ընթացքում դիտվողները գիտեն իրենց՝ ուսումնասիրման օբյեկտ լինելու մասին:

Փակ դիտման ժամանակ հետազոտվողին չեն հայտնում այդ մասին, իրականացվում է նրանից գաղտնի:

10. Ներառված-չներառված դիտում:

Ներառված դիտման ընթացքում դիտողը ընդգրկվում է հետազոտվող խմբի մեջ և ուսումնասիրում այն «ներսից»:

Ոչ ներառված դիտումը դիտում է կողքից՝ առանց օբյեկտի վրա դիտողի ազդեցության:

11. Ուղղակի-անուղղակի դիտում:

Ուղղակի (անմիջական) դիտումն իրականացվում է հենց անմիջական դի-

տողի կողմից:

Անուղղակի դիտումն իրականացվում է միջնորդների միջոցով:

12. Դիտավորյալ-ոչ դիտավորյալ դիտում:

Դիտավորյալ դիտման ընթացքում դիտողը դիտվողին դրդում է որոշակի գործողության:

Ոչ դիտավորյալ դիտման ընթացքում բացակայում է հետազոտողի հատուկ դրդողական ազդեցությունը դիտվողի վրա¹:

Այս մեթոդի հիմնական թերությունը համարվում է դիտողի ոչ օբյեկտիվությունը: Մարդ անհատը հազվադեպ է գնահատում իրերն անկողմնակալ, նրան բնորոշ է եզրակացություն անելը: Դիտումները հիմնականում օգտագործվում են որպես լրացուցիչ մեթոդ, որն օգնում է հավաքագրել նյութեր աշխատանքն սկսելուց առաջ կամ օգնում է ձշտել տեղեկատվության հավաքագրման այլ մեթոդների արդյունքները:

Փաստաթղթերի վերլուծություն

Սոցիոլոգիայում փաստաթուղթ է համարվում յուրաքանչյուր տեղեկատվություն, որն արձանագրվել է տպագիր կամ ձեռագիր տեսքով, ժապավենի, լուսանկարի կամ տեսաերիզի վրա: Այս առումով «փաստաթղթային» հասկացությունը տարբերվում է լայն կիրառական իմաստից: Մովորաբար մենք փաստաթղթեր ենք անվանում պաշտոնական նյութերը: Փաստաթղթերը հիմնականում համարվում են հարցումներին կամ ուղղակի դիտումներին լրացնող հիմնական նյութերը: Այս մեթոդի հիմնական թերությունը՝ փաստաթղթի ինֆորմացիայի ձշնարտացիությունն է: Փաստաթղթի իսկությունը պետք է շփոթել դրանում տեղ գտած ինֆորմացիայի ձշնարտացիության հետ: Բացի դրանից, փաս-

1 Sten' Павлов С. Н., Управление информацией и общественными связями для создания деффективного имиджа вуза, "Академия Ествствознания, 2011 г., глава 2, <http://www.rae.ru/monographs/130>.

տաթղթերը, որպես կանոն, չեն ներառում գործընթացների նկարագրություն, այլ միայն նշում են արդյունքները:

Հարցումներ

Հարցումները թերևս ամենաանկախ և ամենակիրառվող սոցիոլոգիական մեթոդն է, որն ուղղված է սուբյեկտիվ աշխարհայացքի, նրանց հակվածության, գործունեության շարժառիթների, կարծիքների հավաքագրմանը: Առաջին անգամ պաշտոնական հարցումներն առաջացել են 18-րդ դարում Անգլիայում, իսկ 19-րդ դարի սկզբին այն կիրառվեց նաև ԱՄՆ-ում: Ֆրանսիայում և Գերմանիայում առաջին հարցումներն իրականացվել են 1848 թվականին, Բելգիայում 1868-1869 թթ.¹, իսկ հետագայում այն լայն կիրառություն ստացավ ամբողջ աշխարհում: Այս մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է, որ պետք է իմանալ ի՞նչ հարց տալ, ինչպե՞ս այն տալ և ինչպե՞ս իմանալ, որ կարելի է վստահել դրանց արդյունքներին: Հետազոտողի համար կարևոր է հասկանալ, որ հարցմանը մասնակցում են ոչ թե «միջին ռեսպոնդենտներ», այլ իրական մարդիկ, ովքեր ունեն կառուցված գիտակցություն և ենթագիտակցություն: Ռեսպոնդենտներին հատկանշական է այս կամ այն հարցին անհատական համակրանք, նախասիրություն, վախ և այլն: Ուստի, հարցերն ընկալելով, նրանք կարող են չպատասխանել՝ մեկին բավական գիտելիքներ չունենալու պատճառով, մյուսին՝ ուղղակի չուզենալով, կամ պատասխանել ոչ անկեղծ:

Գոյություն ունեն հարցման երկու տեսակ՝ **հարցազրույց և հարցաթերթիկային հարցում:**

Հարցազրույցը ենթադրում է հարցազրույցավարի և ռեսպոնդենտի ուղղակի շփում: Հարցազրույցներն իրենց հերթին բաժանվում են տարբեր տիպերի՝

1. Ըստ զրույցի անցկացման տեսի-

1 Никандров В.В., Экспериментальная психология., Учебное пособие, – СПб.: Издательство «Речь», 2003г., с.- 76-81.

նուլոգիայի՝ առանձնացվում են աստիճանային հարցազրույցներ (ladder interview)², «ազատ հարցազրույցներ» (հիմնականում մի քանի ժամ տևողությամբ զրույցներ), «ստանդարտացված հարցազրույցներ» և «կիսաստանդարտացված հարցազրույցներ», որոնց ամբողջ ընթացքը, անցկացման կարգը, ինչպես նաև հարցերի հերթականությունը նախօրոք մշակված է, սակայն ի տարբերություն ստանդարտացված հարցազրույցների՝ կիսաստանդարտացված հարցազրույցների դեպքում նախօրոք մտածված հարցերի հերթականությունը կարող է փոխվել:

2. Հարցազրույցները կարող են լինել մակերեսային («կլինիկական») կամ ուղղված լինեն ռեսպոնդենտի ռեակցիաների բավականին նեղ շրջանակի բացահայտմանը:

3. Վերջապես, ըստ կազմակերպման կարգի, հարցազրույցները կարող են լինել **խմբակային** (երբ զրուցավարը փորձում է քննարկում ստեղծել, սակայն դրանք հազվադեպ են օգտագործվում) և **անհատական**³:

Հարցաթերթիկների միջոցով իրականացվող հարցումներն առաջին հերթին դասակարգվում են ըստ բովանդակության և հարցերի կառուցվածքի: Տարբերակում են **բաց հարցումներ** (երբ ռեսպոնդենտը պատասխանում է ազատ ձևաչափով), **փակ հարցումներ** (երբ հարցաթերթիկում նախօրոք նշված են պատասխանների տարբերակները և ռեսպոնդենտը պետք է ընտրություն կատարի դրանց միջև), **կիսափակ հարցումները** (միավորում են նախօրոք երկուսի ձևաչափերը):

Անկախ նրանից, թե հարցման որ տարբերակն է ընտրված, թերությունները նույն են՝ դրանք կապված են ռես-

2 Ноэль Э., Массовые опросы, введение в методику демоскопии, Москва, «Прогресс», 1978г., с.-14.

3 Breakwell, G.M. (editor), Doing Social Psychology Research, Wiley-Blackwell, 2004, pages 305-343.

պոնդետների պատասխանների վստահելիության հետ:

Կարծրատիպերը հանրային կարծիքի ձևավորման միջոց

Հանրային կարծիքի ձևավորման գործում ԶԼՄ-ների կարևորությանն առաջին անգամ անդրադարձ է կատարվել 20-րդ դարում ամերիկացի գրող, լրագրող Ուլտեր Լիպմանի (Walter Lippman) կողմից, ով հանրային կարծիքը համարում էր հստակ ուղղվածություն ունեցող **տեղեկատվության ազդեցության արդյունք**: Որպես հանրային կարծիքի ուսումնասիրության սկզբնական կետ, նա օգտագործում էր «կարծրատիպ» բառը: Լիպմանը, կարծրատիպը սահմանում էր որպես կյանքի, դրա երևույթների և գործընթացների մասին հեշտացված, նախօրոք ընդունված պատկերացումներ, որոնք չեն բխում սեփական փորձից: 1922 թվականին իր գրած «Հանրային կարծիք» (Public opinion) գրքում նա «կարծրատիպ» բառով փորձում է բնութագրել այն երևույթը, երբ հասարակությունը փորձում է դասակարգել մարդկանց: Որպես կանոն, հանրային կարծիքը ուղղակի կնիք է դնում մարդկանց վրա՝ ելնելով որոշակի հատկանիշներից: Լիպմանն առանձնացնում էր կարծրատիպերի 4 առանձնահատկություն: **Առաջին հերթին կարծրատիպերն** ավելի դյուրին են, քան իրականությունն է: Երբ բնութագրում են կարծրատիպերը, դրանք հիմնականում մի քանի նախադասության տեսքով են լինում: **Երկրորդ**՝ մարդիկ ձեռք են բերում կարծրատիպերը (ծանոթներից, ընտանիքից, զանգվածային լրատվության միջոցներից և այլն), բայց երբեք չեն ձևավորում ինքնուրույն՝ հիմնվելով իրենց սեփական փորձից: **Երրորդ**՝ բոլոր կարծրատիպերը հիմնականում չեն համապատասխանում իրականությանը: Կարծրատիպերն անհատին այնպիսի հատկանիշներ են պարտադրում, որ նա պետք է ունենա ուղղակի այն պատճառով, որ պատկանում է որոշակի խմբի:

Չորրորդ՝ կարծրատիպերը շատ դիմացկուն են: Անգամ, երբ մարդիկ հավատախանում են, որ իրենց կարծրատիպերը չեն համապատասխանում իրականությանը, նրանք հիմնականում հակված են հրաժեշտ չտալու դրանց, այլ պնդելու, որ բացառությունները միայն ապացուցում են կանոնների ճշմարտացիությունը:

Ավելի հաճախ ԶԼՄ-ներն օգտագործում են կերպարի (իմիջի) ստեղծման տեխնոլոգիաներ: **Իմիջի և կարծրատիպի հիմնական տարբերությունը դրանց գործառնությունների հակասական լինելն է**: Կարծրատիպի նպատակն է պատկերացում տալ միևնույն խմբին պատկանող բոլոր առարկաներին (մարդ, երևույթ և այլն), մինչ իմիջը կոնկրետ ապրանքի կամ երևույթի պատկերն է: Կարծրատիպը, որոշ առումով հենվում է իրականության վրա, իսկ իմիջը ստեղծվում է ասոցիացիաների հիման վրա, այն ավելի ձկուն է, քան կարծրատիպը: Իմիջը ժամանակ առ ժամանակ փոխվում է՝ կախված սոցիալական, ֆինանսական կամ քաղաքական իրավիճակներից: Իմիջի ստեղծման գործում մեծ դեր ունեն նաև երևակայությունները: Տարբեր գիտնականների կարծիքով՝ կարծրատիպերի և իմիջների մասնիպուլիացիայի օգնությամբ կարելի է ձևավորել կամ փոխել հանրային կարծիքը: Զանգվածային գիտակցության մեջ մեծ դեր ունի գաղափարների, սովորույթների, զգացմունքների, ավանդույթների զանգվածային լինելը և հանրության պատկերացումները: Օրինակ՝ գովազդ ստեղծողները հավաստիացնում են, որ «մարդիկ ոչ թե ծխախոտ են ծխում, այլ դրա կերպարը», «կանայք ոչ թե շպար են գնում, այլ գեղեցիկ լինելու ցանկություն» և այլն:

Ռուսական հայտնի քաղաքագետ Գերման Դիլիգենսկին իր «Սոցիալ-քաղաքական հոգեբանություն» աշխատության մեջ նշում է. «Շատ պատկերացումներ, որոնք անհատը ստանում է տարբեր սոցիալական ակունքներից՝ ընտանիք,

դպրոց, շրջակա միջավայր, զանգվածային լրատվության միջոցներ, մեխանիկորեն ամբողջական տեսքով տեղավորվում են գիտակցության մեջ՝ առանց ենթարկվելու որևէ փոփոխության և առաջնորդում են նրան ողջ կյանքի ընթացքում: Հոգեբանության և քաղաքագիտության մեջ այդ երևույթներն անվանում են **սոցիալական կարծրատիպեր**»: Ըստ Դիլիգենսկիի՝ **կարծրատիպերի ձևավորման գործում մեծ դեր ունի տեղեկատվության աղբյուրի հանդեպ վստահությունը**: Ինչպես նաև ինֆորմացիայի ճշմարտացիությունը ստուգելու անհնարինությունն ստիպում է անհատին ընկալել տեղեկատվությունը որպես փաստ՝ դրա մասին ամբողջական պատկերացումներով՝:

Ինչպես կրոնական պատկերացումները, այնպես էլ կարծրատիպերը երբեմն չեն ենթադրում ճշմարտացիության ստուգում: Օրինակ՝ քրիստոնյա աշխարհին հարկավոր չէ ապացույց Հիսուս Թրիստոսի գոյության մասին, այնպես էլ կարծրատիպերը չեն ենթադրում փաստեր. անհատը վստահ է, քանի որ «բոլորն են այդպես կարծում»²:

Բոլոր կարծրատիպերն իրենց մեջ ներառում են առօրեական կարծիքների գծեր, քանզի դա կարծրատիպերի հիմնարար հատկանիշներից է: Բայց ոչ բոլոր առօրեական կարծիքներն են դառնում կարծրատիպեր: Յուրաքանչյուր անհատ վստահ է, որ մեկին գումարած մեկ հավասար է երկուսի, քանի որ դա փաստ է: Բացի նրանից, որ դա առօրեական կարծիք է, այն ճշգրիտ գիտության՝ մաթեմատիկական համակարգի մի մաս է, որն ապացուցվում է ինչպես տրամաբանորեն, այնպես էլ գործնականում: Կարծիքը, որպեսզի դառնա կարծրատիպ, պետք է լինի արքիոմայատիպ,

չունենա ապացուցման կարիք³:

Ըստ ռուս հայտնի սոցիոլոգ Վլադիմիր Վոլվաչի՝ հանրային կարծիքը կախված չէ անհատական կարծիքից: Զանգվածային գիտակցության մեջ կարծրատիպերի նշանակությունն ահռելի է: Անհատը կարող է կասկածել կարծրատիպի գոյությանը և անգամ հերքել այն: Երբ անհատը կտրված է հասարակությունից, նա կարող է, իր անձնական փորձից ելնելով, չընդունել հանրության կողմից ընկալվող կարծրատիպերը, սակայն հայտնվելով հանրության շրջանում, ձուլվելով նրա հետ, նա ամբողջությամբ առաջնորդվում է այն կարծրատիպերով, որոնց նա մերժում էր: Հենց դա է կարծրատիպի ուժը հանրային գիտակցության մեջ, այն չի կարելի կոտրել գիտության առկայությամբ կամ գործնական փորձով, բայց երբ զանգվածային գիտակցության ուժը թուլանում է, կարծրատիպերն անհետանում են: Սովորաբար, կարծրատիպերի ձևավորման գործընթացն իրականացվում է անտեսանելի տեղեկատվությունը զանգվածային գիտակցությանն է ուղղվում անսկատելիորեն, այնուհետև այն տարածվում է ինքնաբերաբար և սկսվում է ձևավորման գործընթացը⁴:

Այս կարծիքին մենք հանդիպում ենք նաև գերմանացի հայտնի քաղաքագետ Էլիզաբեթ Նոել-Նոյմանի (Elisabeth Noelle-Neumann) զանգվածային հաղորդակցության և քաղաքագիտության «լռության պարույր» տեսության մեջ: Այն ենթադրում է, որ անհատը, գտնվելով փոքրամասնության մեջ, ամենայն հավանականությամբ չի հայտնի իր կարծիքը, քանզի նա վախենում է մեկուսացումից: Այդ վախը, որպես կանոն, հանդիսանում է պարույրի սկիզբը, այնուհետև այն ավելի ու ավելի է մեծանում: Այս գործընթացում

1 Дилигенский Г. Г., Социально-политическая психология. -М.: Новая школа, 1996. -с. 28-29.

2 Вольвач В., Стереотипы как способ формирования общественного мнения, /Общественно-политический и историко-просветительский альманах «Диспут». -№4. - Омск: 2001 г, с.-3-5.

3 Տե՛ս նույն տեղում, էջ 3-5:

4 Вольвач В., Стереотипы как способ формирования общественного мнения, /Общественно-политический и историко-просветительский альманах «Диспут». -№4. - Омск: 2001 г, с. 9-10.

մեծ է նաև ԶԼՄ-ների դերը: Առավել հաճախ զանգվածային լրատվության միջոցներն են թելադրում, թե որ կարծիքն է դուրսհանում և կարող են լուրջ ազդեցություն ունենալ անհատական գիտակցության վրա: Նոեյ-Նոյմանը լուրջան պարույրը բնութագրում է որպես մի գործընթաց, որտեղ հանրային կարծիքի վերաբերյալ կանխատեսումները վերածվում են փաստերի, քանի որ զանգվածային լրատվության միջոցներում մեծամասնության կարծիքի լուսարանումը դառնում է ստատուս-քվո¹: Երբեմն հանրային կարծիքի կեղծ հարցումներին հղում անելով՝ քաղաքացիներին համոզում են աջակցել «հասարակության մեծամասնության» համակրանքը վայելող քաղաքական դիրքորոշմանը: Դա ստիպում է այլ դիրքորոշում ունեցող մարդկանց փոխել այն՝ սոցիալ-հոգեբանական մեկուսացումից խուսափելու համար: Ընդդիմադիր կարծիքի լուրջան ֆոնին՝ «իրական կամ կարծեցյալ մեծամասնության» ձայնն առավել ուժեղ է հնչում, և սա ավելի է դրդում տատանվողներին համաձայնել «մեծամասնության կարծիքին»: Նման տեխնոլոգիայով են աշխատում ժամանակակից ընդդիմությունները, երբ լինելով փոքրամասնություն՝ դուրս են գալիս փողոց կամ ստանալով աջակցություն ԶԼՄ-ից՝ պարբերաբար «գոռում» են, թե իրենք մեծամասնությունն են: Իսկ լող մեծամասնությունը, ներշնչման օրենքներին համապատասխան, աստիճանաբար փոխում է կարծիքը, և փոքրամասնությունն աստիճանաբար դառնում է մեծամասնություն: Այսպես անդադար «լուրջան պարույրը» ավելի է պտտվում՝ ապահովելով մանիպուլյացիայի հեղինակների հաղթանակը²:

1 Ноэль-Нойман Э., Общественное мнение. Открытие спирали молчания: Пер. с нем./Общ. ред. и предисл. Мансурова Н.С. М.: Прогресс-Академия, Весь Мир, 1996, с.-3-16.

2 Միրաբյան Վ., Տեղեկատվա-հոգեբանական ազդեցությունը տպագիր լրատվամիջոցներով, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2208

Հանրային կարծիքի ձևավորման գործընթացում զանգվածային տեղեկատվությունը՝

- հարմարվում է (ադապտացվում) տվյալ լսարանին, դառնում լայնորեն կիրառելի,
- համագործակցում է տեղեկատվության հետ՝ արդեն շրջանառվելով զանգվածային գիտակցության մեջ,
- օգտագործվում է ԶԼՄ-ների, պետական և հասարակական ինստիտուտների կողմից, ինչն ավելի է բարձրացնում դրա վստահելիությունը:

Այս բոլոր գործոններն ազդում են հանրային կարծիքի, կարծրատիպերի ձևավորման վրա, սակայն փոքր ինչ դրան տալով անկանխատեսելիություն՝ փոքրացնում են մանիպուլյացիայի հնարավորությունները: Բայց և շատ տեսաբանների կարծիքով՝ ճիշտ տեխնոլոգիաների ընտրությունը հանրային գիտակցությունը կառավարելու հնարավորություն է ընձեռում:

Ամփոփելով՝ հանրային կարծիքի ուժն ու դերը, դրա ազդեցությունը սուբյեկտների գործունեության վրա անժխտելի է համարվել պատմական բոլոր գործընթացներում: Այն իր ձևավորման գործընթացում անցնում է որոշակի փուլերով, իսկ հանրային կարծիքի ուսումնասիրությունների համար առկա են տարբեր մեթոդներ, որոնք կրում են գրեթե նույն թերությունները: Զանգվածային գիտակցության մեջ ահռելի է նաև կարծրատիպերի դերը, որոնք ունեն տարբեր առանձնահատկություններ: Սովորաբար, կարծրատիպերի ձևավորման գործընթացն իրականացվում է անտեսանելի, սակայն դրանք լուրջ դեր են խաղում հանրային կարծիքի ձևավորման գործում: Անհատը հասարակության մեջ առաջնորդվում է բոլորի կողմից ընդունված կարծրատիպերով, քանզի վախենում է մեկուսացումից: Այս գործընթացում անհերքելի է Զանգվածային լրատվության միջոցների դերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ա. Շ., Հանրային կապեր, դասախոսություններ, «Անտարես» հրատ., Երևան, 2008
2. Ավետիսյան Ա., Հանրային կապեր. Հանրային կարծիքի վրա ազդեցության մեթոդներ, «Հանրային հաղորդակցություն, արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները Հայաստան 2013», Գիտաժողովի նյութեր, «Էդիթ Պրինտ» Երևան, 2014
3. Локк Дж., Избранные философские произведения: в 2 т. Т. 1. М.: Соц-экгиз.,1960
4. Гоббс Т., Левиафан или материя, форма и власть государства: церковного и гражданского. Часть II. О государстве . – М.: Мысль, 1997
5. Гегель Г.В., Сочинения. М. Л., 1934. Т. 7.
6. Павлов С. Н., Управление информацией и общественными связями для создания дэфективного имиджа вуза, Академия Ествствознания, 2011 г., глава 2, <http://www.rae.ru/monographs/130>
7. Никандров В.В., Экспериментальная психология., Учебное пособие, – СПб.: Издательство «Речь», 2003
8. Ноэль Э., Массовые опросы, введение в методику демоскопии, Москва, «Прогресс», 1978
9. Breakwell, G.M. (editor), Doing Social Psychology Research, Wiley-Blackwell, 2004
10. Дилигенский Г. Г., Социально-политическая психология. –М.: Новая школа,1996
11. Вольвач В., Стереотипы как способ формирования общественного мнения, /Общественно-политический и историко-просветительский альманах «Диспут». –№4. – Омск: 2001.
12. Միրաբյան Վ., Տեղեկատվա-հոգեբանական ազդեցությունը տպագիր լրատվամիջոցներով, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2208
13. <http://www.britannica.com/EBchecked/topic/482436/public-opinion>.

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ И ЭТАПЫ РАЗВИТИЯ

АСТГИК АВЕТИСЯН

Доцент кафедры телерадиожурналистики ЕГУ, к.ф.н.

Общественное мнение отражает истинную картину общественного сознания, общественные интересы, настроения и чувства различных социальных групп. Основными методами формирования общественного мнения являются: внушение, заражение, убеждение, подражание, а основные инструменты формирования: средства массовой информации, устная пропаганда, политическая агитация, межличностная коммуникация.

Развитие общественного мнения проходит различные этапы: формирование, функционирование, выражение, реализация на практике. Оно может формироваться стихийно и сознательно. Анализ научной литературы показывает, что у исследователей существует несколько подходов к выделению этапов.

Ключевые слова: общественное мнение, средства массовой информации, общественное сознание, методы изучения, анализ документов, опросы, стереотипы, имидж, реклама, спираль молчания, воздействие, массовое сознание.

The public opinion reflects a true picture of public consciousness, public interests, moods and feelings of various social groups. The main methods of public opinion formation are suggestion, infection, persuasion and imitation. The main instruments of opinion formation are mass media, oral propaganda, political agitation and interpersonal communication.

Development of public opinion passes various stages: formation, functioning, expression and realization in practice. It can be formed spontaneously and consciously. The analysis of scientific literature shows that researchers have some approaches to allocation of stages.

Key words: public opinion, mass media, public consciousness, study methods, document analysis, opinion poll, stereotypes, image, advertisement, spiral of silence, impact, collective consciousness.

МНДЖОЯН ОГАНЕС ЛЕВОНОВИЧ

Доктор биологических наук, профессор, лауреат

Государственной премии Армянской ССР

К 95-летию со дня рождения

Мнджоян Оганес Левонович родился 9 августа 1920 года в Ленинакане (ныне: Гюмри). С 1935 по 1938гг. учился на строительном факультете Ереванского строительного техникума.

С 1938г. Мнджоян Оганес Левонович – студент химико-технологического факультета Ереванского политехнического института.

В период 1942 – 1945гг. О. Л. Мнджоян – участник Великой Отечественной войны. Он награжден двумя боевыми орденами и пятью медалями.

В 1946г. после демобилизации поступил на работу в качестве старшего химика в научно-исследовательскую химико-фармацевтическую лабораторию [позже – Институт тонкой органической химии АН Армянской ССР (ИТОХ)].

В 1947г. окончил Ереванский политехнический институт, ему была присвоена квалификация “инженера-технолога, исследователя”.

С 1948г. работал в должности младшего научного сотрудника ИТОХ.

О.Л. Мнджоян является лауреатом Государственной премии Армянской ССР. Ученый награжден юбилейной медалью “За доблестный труд в ознаменование 100-летия со дня рождения В.И. Ленина”, удостоен почетного знака “Победитель социалистического соревнования” и почетной грамоты Президиума АН Армянской ССР, награжден дипломами ВДНХ СССР и ВДНХ Армянской ССР.

В 1951г. О.Л. Мнджоян успешно защитил диссертацию на тему “Некоторые производные дизамещенных уксус-

ных кислот и их превращения в аспекте фармакологических исследований”. Ему была присвоена ученая степень кандидата химических наук. В 1952 г. молодой ученый был назначен на должность старшего научного сотрудника, а в 1957 г. – заведующего химическим сектором № 3.

Многолетние исследования, выполненные О. Л. Мнджояном, составили содержание диссертационной работы на соискание ученой степени доктора биологических наук “Изыскание физиологически активных соединений, действующих на холинергические структуры”, успешно защищенной в 1975 г.

Интересы научной школы, которой руководил О. Л. Мнджоян, относятся к специальности “Биоорганическая химия и химия природных и физиологически активных соединений”, они охватывают химические и биологические исследования по поиску аналогов ацетилхолина и алкалоида никотина, избирательно ингибирующих или активирующих тот или иной биохимический процесс, связанный с медиаторной функцией ацетилхолина.

Фундаментальные исследования, отражающие вопросы взаимозависимости химического строения и биологической активности молекулы, базируются на следующих принципах: переход количества в качество, значение геометрии молекулы и необходимость родственности метаболитов синтезированного соединения к организму животных.

За время работы в ИТОХ О. Л. Мнджояном были разработаны общие методы синтеза симметричных и несимметрич-

ных производных дикарбоновых кислот, сукцин- и глутаримидов, моно- и бис-аминокетонов, замещенных уксусных кислот, также аминокислот и пептидов. При этом изучался механизм образования сложных аминоэфиров с помощью хлорангидридного метода, активированных эфиров, образование простых аминоэфиров через четвертичные аммониевые соли и др.

О. Л. Мнджояном предложено и развито новое синтетическое направление поиска физиологически активных веществ. Это направление в ИТОХ является одним из ведущих в изыскании высокоэффективных лекарственных препаратов для лечения и профилактики нервно-психических заболеваний, а также препаратов для анестезиологической практики. Важными результатами исследований по данному направлению являются установление зависимости между структурой и биологическим действием соединений, разработка новых путей синтеза, изучение механизмов реакций и внедрение в медицинскую практику новых лекарственных препаратов.

Одними из первых объектов химических исследований были двухосновные карбоновые кислоты, затем начались работы по синтезу их производных.


Двухосновные карбоновые кислоты часто встречаются в природе в растительном и животном мире. Янтарная кис-

лота, например, образуется при бактериальных процессах разложения яблочной и винной кислот, а также при гидролизе белковых веществ (например, казеина). Она встречается в незрелом крыжовнике, винограде, в стеблях ревеня. Зобная и щитовидная железы некоторых животных содержат янтарную кислоту.

Глутаровая кислота находится в соке свеклы и неочищенной овечьей шерсти, проявляет каталитическую активность в синтезе аминокислот тканью печени. Пимелиновая кислота является одним из исходных продуктов, используемых многими бактериями и грибами в биосинтезе биотина и др.

Имеющиеся данные свидетельствуют о том, что двухосновные карбоновые кислоты могут стать исходными веществами в синтезе биологически активных соединений, тем более, что они являются родственными продуктами для организма животных, и организм может или полезно использовать их, или обезвредить в случае необходимости.

Учитывая вышеизложенное, с целью изучения связи между химическим строением и биологической активностью были начаты работы по синтезу аминоэфиров дикарбоновых кислот и их четвертичных аммониевых солей согласно нижеприведенным общим формулам (1-5).




Для выяснения влияния состава и строения отдельных частей молекулы аминоэфиров изменения проводились в трех направлениях: 1) в полиметиленовой цепи кислот, 2) в аминокислотной части, 3) за счет эфиобразующих групп. При этом получались как симметричные, так и смешанные производные.

Изменения в полиметиленовой цепи кислот проводились последовательным наращиванием метиленовых групп – синтезом производных от щавелевой и до декандикарбоновой кислот, а также замещением водорода в цепи алкильными и алкоксильными радикалами – синтезом производных малоновой, янтарной и глутаровой кислот. Для синтеза пробковой кислоты, кроме динитрила ее, был использован тетрахлоргептан – продукт теломеризации этилена с четыреххлористым углеродом.

Совместные работы под руководством Арменака Левоновича и Оганеса Левоновича Мнджоянов, а также химиков и фармакологов ИТОХ при изучении большого ряда соединений привели к внедрению в медицинскую практику препаратов – дитилина, бротилина, субехолина и пуфемиды. Разработаны рентабельные методы полужаводского синтеза этих препаратов.


Дитилин – диметиламиноэтилового эфира янтарной кислоты дийодметилат. Мышечный релаксант, нашедший широкое применение в хирургии, в частности, в анестезиологии. Благодаря ему стали возможны операции на грудной клетке.



Дитилин


Бротилин – диметиламиноэтилового эфира янтарной кислоты дибромметилат (мышечный релаксант) получен по вы-

шеуказанной схеме с дальнейшим превращением диметиламиноэтилового эфира янтарной кислоты в дибромметилат.




Бротилин

Субехолин – диметиламиноэтилового эфира пробковой кислоты дийодметилат. Мощный стимулятор дыхания, выгодно отличающийся от известных препаратов – лобелина и цитотока тем, что применяется внутримышечно и не вызывает побочных эффектов центрального действия.



Субехолин

Пуфемид – 3-(п-изопропоксифенил)-сукцинимид. Применяется при малых формах эпилепсии, а также при височной эпилепсии.



Пуфемид


Таким образом, фармакологические исследования йодалкилатов и гидрохлоридов большого числа синтезированных аминоэфиров показали, что среди них имеются соединения с интересными холинолитическими свойствами с точки зрения действия на вегетативные ганглии. У некоторых из них была обнаружена способность снимать спазм коро-

нарных сосудов сердца. Как известно, основным проявлением коронарной недостаточности является приступ стенокардии. Это заболевание представляет собой одну из наиболее распространенных форм сердечно-сосудистой патологии, для лечения которой значительный арсенал лекарственных средств еще не достиг цели. Снятие болевого приступа осуществляется сосудорасширяющими средствами (валидол, нитроглицерин), однако необходимы препараты для предупреждения возникновения спазма, способные нормализовать нарушенные функции нервной системы, вызывающие спазм.

Основой для синтеза аминоэфиров *n*-алкоксибензойных кислот послужил тот факт, что в физиологически активных природных соединениях встречаются вещества, представляющие собой аминоэфиры, в которых различные органические кислоты конденсированы со спиртами сложного и простого строения (кокаин, атропин, ацетилхолин и др.). Благодаря работам, проведенным в институте под руководством О. Л. Мнджояна, была найдена новая эффективная группа холинолитиков – аминоэфиров *n*-алкоксибензойных кислот, которая до того времени была рекомендована рядом исследователей только в качестве местных анестетиков. В частности, изучение связи между химическим строением и холинолитической активностью гидрохлоридов и четвертичных аммониевых солей, полученных аминоэфиров замещенных уксусных кислот дало возможность предложить и внедрить в медицинскую практику три новых преимущественно действующих на Н-холинореактивные биохимические структуры препарата – арпенал, месфенал, этпенал.


Арпенал – γ -диэтиламинопропилового эфира дифенилуксусной кислоты гидрохлорид, который как противосудорожное и спазмолитическое средство

применяется для лечения паркинсоновой болезни, бронхиальной астмы и хореи.




Арпенал

Месфенал – γ -диэтиламинопропилового эфира дифенилуксусной кислоты метилсульфометилат применяется при различных гиперкинезах и болезнях желудочно-кишечного тракта.



Месфенал

Этпенал, представляющий собой диэтиламинопропилового эфира дифенилэтоксиксусной кислоты гидрохлорид:



Этпенал

В клинике он применяется как противосудорожное средство при гиперкинезах центрального происхождения.

На основании изучения зависимости между химической структурой и биологической активностью целенаправленно синтезированных гомологических рядов производных моно- и дикарбоновых кислот выявлен ряд закономерностей, которые могут служить основой для дальнейшего изучения процессов нерв-

ной регуляции, а также синтеза новых соединений, избирательно действующих на отдельные биохимические структуры:

- на основе большого числа синтезированных гомологов симметричных и смешанных аминоэфиров дикарбоновых кислот было установлено, что четвертичные аммониевые соли этих аминоэфиров (диацетилхолины) являются высокоактивными соединениями, избирательно действующими на Н-холинореактивные биохимические структуры нервной системы, сила действия которых возрастает от низших гомологов к высшим, достигая максимума у дийодметилата β -диметиламиноэтилового эфира пробковой кислоты;
- на примере диэтиламино- и пирролидиноэтиловых эфиров, а также дипропиламино- и гексаметиленаминоэтиловых эфиров дикарбоновых кислот показано исключительно важное значение конформации молекулы для взаимодействия с рецепторами и, в частности, жесткой конформации пятичленного пирролидинового и семичленного гексаметиленаминового циклов.
- по результатам исследований производных дикарбоновых кислот в медицинскую практику внедрены высокоэффективный мышечный релаксант кратковременного действия – *дитилин* и *бротилин*, мощный стимулятор никотиновых рецепторов – *субехолин*, высокоэффективный противоэпилептический препарат *пифемид*.
- разработаны методы синтеза производных сукцин- и глутаримидов, изучена реакция цианистого водорода с замещенными бензиденмалонатами. Установлены оптимальные структуры, действу-

ющие на различные модели судорожного состояния. Показано, что наиболее активными соединениями при судорогах, вызванных никотином, являются *N*-метил- α -*n*-алкоксифенилсукцинимиды, что подтверждает важную роль *N*-метилпирролидинового пятичленного цикла в структуре никотина для обеспечения его избирательной активности на никотиновые холинореактивные биохимические структуры. На примере димеров α -4-оксифенилсукцинимидов, соединенных полиметиленовой цепью, доказано, что высокая противосудорожная активность сохраняется только при определенном числе (6 или 10) метиленовых групп, что дает возможность взаимодействия между рецепторами.

- Исследована зависимость избирательности действия аминоэфиров замещенных уксусных кислот на М- и Н-холинорецепторы центральной нервной системы от конформации молекулы. В связи с этим разработаны методы синтеза аминоэфиров замещенных уксусных кислот, исследовано образование аминоспиртов хлорангидридным методом и реакция солей аминоалкилхлоридов и аминоспиртов с соответствующими кислотами. Изучение связи между химическим строением и холинолитической активностью гидрохлоридов и четвертичных аммониевых солей этих аминоэфиров позволило уточнить значение отдельных конформаций для избирательности действия на различные холинорецепторы центральной и периферической нервной системы и внедрить в медицинскую практику препараты арпенал, месфенал и этпенал. В

этой же серии работ предложен и доказан механизм перегруппировки четвертичных аммониевых производных диалкиламиноалканолов в соответствующие простые аминоэфир.

- Разработаны пути синтеза α -, β - и γ -аминокетонов – производных аминокислот и пептидов, а также диаминодикетонов. Установлено, что аминометилирование метилэтилкетона протекает за счет как метиленовой, так и метильной групп. Показано, что при соединении двух β -аминокетонов в одну молекулу решающее значение для сохранения высокой местноанестезирующей активности имеет расстояние между двумя активными группами. Установлено, что в отличие от моноаминокетонов диаминокетоны обладают антогонистическим действием в отношении наркотических анагетиков, не исключен морфин. Среди полученных моно- и бис-аминокетонов выявлены высокоактивные местноанестезирующие, противовоспалительные и канцеролитические вещества (фторморфокаин и препарат 1724).
- Исследованы и разработаны ме-

тоды синтеза аминоэфиров и, в частности, холиновых эфиров замещенных и незамещенных аминокислот и пептидов, среди которых были найдены холиномиметики и холинолитики с низкой токсичностью, а также соединения, обладающие высокой радиозащитной активностью. Установлен механизм образования аминоэфиров по методу активированных эфиров. Ферментативным методом изучена скорость гидролиза, а биофизическим методом – изменение проходимости неорганических ионов через мембрану. Среди холиновых эфиров аминокислот и пептидов обнаружены вещества, которые могут контролировать избирательное прохождение отдельных неорганических ионов через мембрану.

Подтверждением обоснованности и перспективности разрабатываемого под руководством О. Л. Мнджояна направления является значительное число внедренных в медицинскую практику лекарственных препаратов и полученных им авторских свидетельств. Сотрудниками лаборатории защищено 18 кандидатских и 2 докторские диссертации.

HOVHANNES MNJOYAN
DOCTOR OF BIOLOGY, PROFESSOR, STATE PRIZE WINNER,
DEVOTED TO HIS 95TH ANNIVERSARY
VIGEN TOPUSYAN, GYULNARA GEVORGYAN
Institute of Fine Organic Chemistry after A. L. Mnjoyan

The article is devoted to 95th anniversary of H. Mnjoyan, who had a great impact on the development of Fine Organic Chemistry with his inventions and innovations in this field. He made fundamental investigations in the field of Biology which were based on the following principles: reverse from quality to quantity and the synthesis of methobolites with living organisms.

Իշխատարար Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության համահամալսարանական ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր

ԿՈՆՖՈՒՑԻՈՍԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Կոնֆուցիոսը (մ. թ. ա. 551-479 թթ.) համարվում է ինչպես Հին Չինաստանի միասնության և գաղափարական հզորության խորհրդանիշը, այնպես էլ կոնֆուցիականության բարոյաքաղաքական և կրոնական ուսմունքի հիմնադիրը, որը առաջադիմական և նորաձև հոսանքներից մեկն էր Չինաստանում: Նա վիրխարի ներդրում ունի ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքի զարգացման գործում:

Ինչպես անտիկ շրջանի շատ մտածողներ Կոնֆուցիոսը նույնպես գրավոր աշխատություններ չի թողել, բացառությամբ իր գրույցներից, որոնք նրա մահից հետո մշակվել և համակարգվել են նրա աշակերտների կողմից և հետագայում հրատարակվել են «Ջրույցներ» (Լուսյույ) խորագրով՝ իբրև կոնֆուցիականության ուսմունքի տարածման արժեքավոր դասագիրք: Այն եզակի պատմական վավերագիր է նաև մ. թ.ա. 6-րդ դարի Հին Արևելքի քաղաքակրթության նշանավոր կենտրոններից մեկի՝ Չինաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական և քաղաքական կացութաձևի մասին:

Հանգուցային բաներ՝ Հին Չինաստան, կոնֆուցիականություն, կրոնական ուսմունք, անտիկ շրջան, պատմական վավերագիր, կանոնիկ գրքեր, Հին Արևելքի քաղաքակրթություն, մարդկային հասարակություն, բնածին գիտելիքների տեսություն, բարոյաքաղաքական իրադրություն:

Ըստ ավանդույթի Կոնֆուցիոսին են վերագրվում նաև Հին Չինաստանի հինգ կանոնիկ գրքերի ստեղծման և համա-

կարգման աշխատանքները: Այսպես, նա ժողովել է տարեգրությունների «Գարուն և աշուն» (Չուն-ցյու) գիրքը, ձևավորել և կազմել է «Երգերի գիրքը» (Շի-ցզի),¹ միավորել և ամբողջացրել է «Պատմությանց գիրքը» (Շու-ցզի), մեկնաբանել և բացահայտել է «Փոփոխությանց գրքի» իմաստասիրական տաս հայտնի դրույթները:

Հավատարիմ մնալով կրոնական ավանդական գաղափարներին, որոնց համաձայն «երկինքն» է մարդուն թելադրում իր կամքն՝ իբրև «գերագույն աստվածություն», Կոնֆուցիոսը պնդում էր, որ մարդու կյանքը ենթակա է ձակատագրին, հետևաբար՝ «հարստությունն ու մեծագարնությունը ծագում են երկնքից»:² Նա փորձում էր հիմնավորել, որ եթե մարդու կյանքն ի վերուստ կանխորոշված է ձակատագրով, ապա մարդկային հասարակությունը նույնպես ի վերուստ բաժանված է «կատարյալների» և «ոչ կատարյալների», որոնք նույնպես անփոփոխ ու հավիտենական են: Այս տեսության համաձայն կրտսերն անտրտունջ պետք է ենթարկվի ավագին, ոչ կատարյալը՝ կատարյալին:

Կոնֆուցիոսի նշանավոր հետևոր-

1 Հին Չինաստանի կանոնիկ գրքերից մեկն է, որտեղ ընդգրկված են մ. թ. ա. 11-7-րդ դարերում հորինված ներբողներ ու երգեր: Գիրքը բաղկացած է երեք հարյուր մասից: «Երգերի գիրքը» Կոնֆուցիոսի համար առաջին հերթին բարոյագիտական գիրք էր և արժեքավոր էր նրանով, որ մարդուն դաստիարակվելու և կրթվելու անսահմանափակ հնարավորություններ էր ընձեռում:

2 Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1979, էջ 53:

դը Մին-գզին էր (մ. թ. ա. 372-289թթ.): Հասարակության մեջ սոցիալական անհավասարությունը նա կապում էր «երկնային կամքի» հետ, համաձայն որի մարդկային կյանքը ենթարկվում է «երկնային կամքին», որը կարգավորում և իրագործում էր «երկնքի որդին»՝ իմաստուն միապետը: Այս տեսության համաձայն մարդն ի ծնե բարի է և օժտված է չորս հատկությամբ՝ կարեկցանքի, ամոթի, համեստության և ճշմարիտը կեղծից տարբերելու կարողությամբ: Բայց և այնպես միջավայրի վատ ազդեցությունների հետևանքով բնատուր այդ հատկությունները հետզհետե կարող են կորչել և անհետանալ: Նա առաջադրեց նաև բնածին գիտելիքների տեսությունը, որը մարդու մեջ ծնունդ են առնում աստվածային «անընդգրկելի ոգու» շնորհիվ: Մարդը պետք է ամբողջովին բացահայտի ի վերուստ իրեն տրված գիտելիքները, որպեսզի կարողանա ճիշտ ապրել, կանխորոշի իր անհաջողությունների և դժբախտությունների պատճառները, չխոցվի հասարակության մեջ տիրող անարդարություններից, ատելություն և թշնամանք չտածի իրենից բարձր դիրք ունեցողների նկատմամբ: Կոնֆուցիոսի մեկ այլ գաղափարական կողմնակից՝ Սյուն-գզին (մ. թ. ա. 298-238թթ.), կոնֆուցիականության մեջ ստեղծեց մատերիալիստական ուսմունք, ըստ որի երկինքը բնության մի մասն է և գուրկ է գիտակցությունից: Նա կարծում էր, որ մարդը ճանաչելով իրերի օրենքները՝ դառն¹, պետք է այն օգտագործի իր նպատակների իրականացման և շահի համար: Այն, որ կոնֆուցիականության մեջ առաջատար կողմը արտոնյալ դասակարգի տիրապետության արդարացումն ու «երկնային կամքի» փառաբանումն էր, հետագայում հիմք հանդիսացավ Դուն-Ջուն-շուի կողմից կոնֆուցիական օրթոդոքսալ դոկտրինայի ստեղծման համար

1 Չինական դասական փիլիսոփայության հասկացություններից մեկը որը նշանակում է ուղի, ճանապարհ:

(մ. թ. ա. 2-րդ դար): 11-12-րդ դարերում Չժու-Սիի և այլ փիլիսոփաների ջանքերով ստեղծված նոր կոնֆուցիականության մեջ առաջադրվում էր այն գաղափարը, որ իրերի մեջ գոյություն ունի երկու սկզբնապատճառ՝ լի՝ բանական ստեղծագործական ուժ, և ցի՝ պասիվ մատերիա. լի-ն մարդու մեջ ստեղծում է դրական հատկանիշ՝ ձգտում դեպի բարին, իսկ ցի-ն բացասական հատկանիշ՝ ձգտում դեպի չարը, զգայական գայթակղություններին տրվելը:

Կենդանության օրոք Կոնֆուցիոսը ճանաչում չգտավ. նրա մահվանից հարյուրամյակներ անց միայն նրա ուսմունքը տիրապետող ուղղություն դարձավ Չինաստանում: Դարեր շարունակ կոնֆուցիականությունը հանդիսացել է ֆեոդալական Չինաստանի տիրապետող գաղափարախոսությունը:

Կոնֆուցիոսի կենսագրությունը հեռու է ստույգ լինելուց, քանի որ նրա կենսագիր Մի-մա-ցիան, ով պատմագրության մեջ հավասարվում է Հերոդոտին, նրա ամբողջական կենսագրությունը գրել է մ. թ. առաջին դարում՝ նրա մահվանից գրեթե չորս դար հետո: Իսկ դա նշանակում է, որ Կոնֆուցիոսի կենսագրության մեջ իրական և անիրական փաստերն ու եղելությունները գրեթե գտնվում են միևնույն հավասարության մեջ: Նրա անվան բուն չինական օրինակը Կուն-ցյու է, ունեցել է նաև Կուն-գզի, Չյուն-նի, Կուն-ֆու-գզի անունները: Շրջանառվող անունը Կուն-ֆու-գզի լատինական տարատեսակն է . այն առաջին անգամ շրջանառել են ճիզվիտ միսիոներները 17-րդ դարում: Այդ անունով էլ նա հայտնի դարձավ Եվրոպայում:

Կոնֆուցիոսը ծնվել է մ. թ. ա. 551թվականին ժամանակակից Չինաստանի Շանդուն նահանգի հարավ-արևմուտքում գտնվող պատմական Լու երկրում: Նրա հայրը ցածր աստիճանավոր էր: Ավանդույթը պատմում է, որ յոթանասուն տարեկանում նա ամուսնացել է դեռատի մի կնոջ հետ՝ այն հույսով, որ

վերջինս իրեն որդի պարգևի, քանի որ առաջին կնոջից միայն աղջիկներ և մեկ հիվանդ որդի ուներ: Ամուսնու ցանկությունն իրականացնելու նպատակով, կինը աղոթքով դիմել է լեռների և գետերի մեջ ապրող ոգիներին և ծնել է արու գավակ, որին անվանակոչել են Չյուն-նի: Կոնֆուցիոսի ծննդի հետ կապված կան նաև այլ ավանդապատումներ. դրանցից մեկը պատմում է, որ նա ծնվել է երկնքի կամքով՝ մեծ գիտնական դառնալու առաքելությամբ: Հոր մահով ընդհատվել է Կոնֆուցիոսի մանկությունը, քանի որ իր և մոր գոյությունը պահելու համար նա պարտավորված էր կատարել տարբեր բնույթի աշխատանքներ, իսկ ավելի հասուն տարիքում նա վարել է նաև պետական տարբեր պաշտոններ:

Կոնֆուցիոսի համար գաղափարական տեսակետից շահեկան է եղել նրա հանդիպումը դաոիզմի հռչակավոր հիմնադիր Լաո-շեի հետ: Իր բարոյական խիստ և պահպանողական սկզբունքների պատճառով, եթե նա հաջողություններ չունեցավ պետական ծառայություններում, ապա հսկայական էին նրա ձեռքբերումները դպրոցավարության բնագավառում: Այդ մասին նա խոստովանում է. «Քանի որ ես պետական ծառայության համար պետք չեկա, հետևաբար ինձ նվիրեցի այլ հմտություններ յուրացնելուն»¹: Այդ ասպարեզում նա իրեն համարում էր որպես «երկնքի ընտրյալ»: Չին դպրոցի պատմության մեջ իր բնույթով ու տեսակով Կոնֆուցիոսի դպրոցն առաջին մասնավոր, սակայն միևնույն ժամանակ առաջին ժողովրդավարական դպրոցն էր. այն ունեցել է ավելի քան երեք հազար աշակերտ, որոնցից 72-ը դարձել են նրա ուսմունքի հետևորդներն ու չինական փիլիսոփայական դպրոցի նշանավոր ներկայացուցիչները:² Իր դպրո-

1 Կոնֆուցիոս, Չրոյցներ, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1991, էջ 65:

2 Ավանդույթը պատմում է, որ Կոնֆուցիոսի մահից հետո նրա աշակերտները երեք տարի շարունակ սուգ են պահել իրենց ուսուցչի գերեզմանի վրա:

ցում Կոնֆուցիոսը դասավանդել է կրոն, իմաստասիրություն, բարոյագիտություն, վայելչախոսություն, պատմություն, հին գրերի և գրականության պատմություն, երգ-երաժշտություն, ենթադրվում է, որ նա դասավանդել է նաև ճշգրիտ գիտություններ: Դասավանդվող առարկաների շարքում հատկապես կարևորվում էր երգեցողությունն ու երաժշտությունը: Նա համոզում էր, որ երգն առաջացնում է հույզեր, սրում մարդու տեսողությունը, ձևավորում նրա քաղաքացիական գիտակցությունը: Երգը մարդու ամենալավ բարեկամն է ինչպես տխրության, այնպես էլ ուրախության պահերին: Եվ եթե բանաստեղծությունը վեհացնում է մարդուն, ծեսերը պարգևում են հանգստություն, ապա երաժշտությունը մարդուն դարձնում է կատարյալ: Հետևապես՝ «Երաժշտությունը պետք է լինի ամբողջովին բարեհնչյուն և միաժամանակ ազնիվ բանականության ճշմարիտ արտահայտություն»:³ Հսկայական է Կոնֆուցիոսի դերը նաև չինական ժողովրդական բանահյուսության հավաքման և համակարգման գործում: Պահպանվել են չինական ժողովրդական բանաստեղծության և տաղերգության հազվագյուտ նմուշներ, նաև պատմական իրադարձությունների մասին հիշարժան տեղեկություններ, որոնք սերունդներին են փոխանցվել նրա ջանքերի շնորհիվ:

Կոնֆուցիոսն իր ուսումնասիրություններում առաջնորդվում էր հետևյալ սկզբունքով. հետազոտման ենթակա ամեն մի երևույթ և առարկա դիտարկել, քննարկել, վիճելի և կասկած հարուցող հարցերն ու խնդիրները ստուգել, ստացված ցուցանիշներն ամփոփել, համակարգել, անհրաժեշտության դեպքում նաև համառոտել, այնուհետև վերջնաորոշվող շղթայել ու կապակցել մեկ ընդհանուրի և ամբողջի մեջ: Նրա պատճառաբանությանը քաղաքակրթական և բարոյագիտական արժեքներն ստեղծվում են այդ

3 Նույն տեղում, էջ 28:

ձանապարհով, մինչդեռ եզակի են այն մարդիկ, ովքեր գիտակցում են համամարդկային արժեքների նշանակությունն ու դրանց անհրաժեշտությունը: Կոնֆուցիոսն այդ եզակիներից մեկն էր:

Կոնֆուցիոսին, իր կատարելիությամբ ու անհասանելիությամբ, փորձել են ներկայացնել նաև նրա նշանավոր աշակերտները: Նրանցից մեկը պատկերավոր ձևով գրում է. «Համեմատության համար վերցնենք պալատը շրջապատող պարիսպը: Իմ դեպքում այն հավասար կլինի մարդկանց ուսերի բարձրությանը: Կարելի է հանգիստ նայել պարիսպի վրայով և տեսնել, թե ինչ լավ բան կա պալատում: Ինչ վերաբերում է Ուսուցչին (Կոնֆուցիոսին.-Շ. Ո.), ապա այդ դեպքում պարիսպն անհամեմատ բարձր է: Ով չի կարող մուտքը գտնել, չի կարող տեսնել նաև պալատի ամբողջ գեղեցկությունն ու նախնիքների տաճարը: Եվ շատ քչերն են, որ կարողանում են մուտքը գտնել...»:¹ Աշակերտներից մեկն էլ գրում է. «...Եթե մյուս իմաստունները նման են բլրի կամ լեռան, որոնց վրա կարող են բարձրանալ մարդիկ, ապա Չժուն-նին (Կոնֆուցիոսը.-Շ. Ո.) արևին կամ լուսնին է հավասար: Ոչ ոք չի կարող հասնել արևին կամ լուսնին: Իսկ ինչ ասել նրանց մասին, ովքեր երես են թեքում արևից ու լուսնից: Միայն այն, որ նրանք իրենց ձմարիտ արժեքն էլ չգիտեն»:² Հետաքրքիր է նաև հետևյալ բնութագրությունը. «...Ուսուցիչն (Կոնֆուցիոսը.-Շ. Ո.) անհասանելի է այնպես, ինչպես անհնար է աստիճաններով բարձրանալ հասնել երկնքին: Եթե նա երկիր ստանար կառավարելու համար, ապա նրա մասին կարելի էր ասել՝ կատարվելու էր այն, ինչ նա հրամայեր: Նա ցույց տվեց ձանապարհը և մարդիկ գնացին նրանով: Նա ուրախացրեց մարդկանց, և մարդիկ եկան դեպի նա: Նա շարժման

մեջ դրեց մարդկանց, և նրանք սկսեցին գործել ներդաշնակորեն և համերաշխությամբ: Ինչպե՞ս կարելի է երբևիցե հասնել նրան»:³

Այսպիսով, հանձինս Կոնֆուցիոսի, մարդկությունը ձանաչում է իր ժամանակի համար արտասովոր զարգացած մտավորականի և հզոր անհատականության, որի նախատիպը չի եղել անտիկ Չինաստանի մշակույթի պատմության մեջ: Նրա գաղափարները վիթխարի նշանակություն են ունեցել չինական միասնական պետության ստեղծման գործում: Անկախ նրա գաղափարական հակառակորդների կատաղի պայքարին, այնուամենայնիվ, նրա ուսմունքը կարողացավ հաղթահարել և դարեր անց դառնալ Չինաստանի պետական կրոն: Այսօր աշխարհում կոնֆուցիականության գաղափարակիրների թիվը հասնում է չորս հարյուր միլիոնի:

Իբրև ինքնուրույն կրոն, կոնֆուցիականությունը այլ կրոնների համեմատականներում ունի ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերիչ կողմեր: Այսպես, օրինակ, այն չունի հոգևոր սպասավորների ծառայություն, չի քննարկում աշխարհի ստեղծման, կեցության ու գիտակցության հարաբերակցության փիլիսոփայական հարցեր: Մինչդեռ այն ունի գործառական նշանակություն, որն առաջին հերթին միտված է մարդու սոցիալականացման, հեռևապես նաև՝ հասարակության քաղաքացիական գիտակցության և բարոյական կատարելագործման խնդիրներին: Թերևս դա է հիմնական պատճառը, որ կոնֆուցիականությունն առանձին դեպքերում դիտարկվում է ոչ թե կրոն, այլ՝ ուսմունք: Սակայն դա իրականում այդպես չէ, քանի որ բոլոր կրոնների նման այն նույնպես ընդունում է գերբնականի իշխանությունը մարդկային կյանքի և հասարակության վրա: Կոնֆուցիականության համար գերբնականի իշխանու-

1 Ավանդույթը պատմում է, որ Կոնֆուցիոսի մահից հետո նրա աշակերտները երեք տարի շարունակ սուգ են պահել իրենց ուսուցիչ գերեզմանի վրա:
2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 157:

թյունը՝ երկինքն է: Հերակլիտի նման Կոնֆուցիոսը նույնպես պաշտպանում է այն տեսությունը, ըստ որի, բնության կյանքը շարժման անընդհատ գործունեություն է և, եթե ամեն ինչ անընդհատ փոփոխվում, նորոգվում է, ուրեմն հնարավոր չէ երկու անգամ մտնել միևնույն գետը, երկրորդ անգամ մտնելիս հոսում են արդեն նոր ջրեր:¹ Գրեթե նույն գաղափարը Կոնֆուցիոսը ձևակերպել է հետևյալ կերպ. «Այս ջրերի նման ամեն ինչ հոսում է ու կորչում: Անկասելի է շարժումը գիշեր ու ցերեկ: Եվ այսպես անվերջ անցնում է ժամանակը»:² Կոնֆուցիոսի ուսմունքի գիտական սահմանումը տրված է հետևյալ քաղվածքում. «Որքան վերև եմ նայում, այնքան ավելի այն վեր է բարձրանում: Որքան ավելի շատ եմ ձգտում թափանցել ներսը, այնքան ավելի անթափանց է դառնում: Պարզ տեսնում ես, որ առջևդ է, բայց մեկ էլ հանկարծ հայտնվում է հետևումդ: Թեև Ուսուցչի (Կոնֆուցիոսի.-Շ.Ո.) ուսմունքը դժվարամատչ է, այնուամենայնիվ, նա կարողանում է մարդկանց ինչ-որ կախարդանքով իր կողմը ձգել և քայլ առ քայլ առաջ տանել: Դա իմ սրտով է և այլևս չեմ կարող չխորանալ նրա ուսմունքի մեջ: Ես լարում եմ իմ բոլոր ուժերը, և ինձ մի պահ թվում է, թե ամեն ինչ պարզ է արդեն: Բայց որքան էլ ձգտում եմ հասնել նրան, չեմ կարողանում»:³ Կրթելով՝ նա ընդլայնում էր իր աշակերտների գիտելիքները, դաստիարակելով մշակում նրանց վարքը՝ սովորույթների, ծեսերի և ավանդույթների պատշաճության օրենքների համաձայն: Նրա ուսմունքը քննադատում էր անարդարությունը, որը անհնազանդության և խռովության աղբյուր էր, ձաղկում էր փառասիրությունը և անձնական շահին տուրք տալու մոլուցքը, չէր ընդունում, երբ վճռականությունը ցուցադրում

1 Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, «Հայաստան» հրատ., Երևան, 1975, էջ 246:
2 Կոնֆուցիոս, Զրույցներ, Երևան, 1991, էջ 68:
3 Նույն տեղում, էջ 66:

էին, իսկ անկեղծությունը՝ թաքցնում: Նրա ուսմունքը հեռու էր կանխակալությունից, կասկածներ չընդունող անառակելիությունից, թանձրամիտ համառությունից և եսապաշտությունից: Իբրև կրոն և գաղափարախոսություն կոնֆուցիականության հիմքը կազմում են Հնագամատյանը՝ Ուց-գին, որը պատմական ասքերի, բանահյուսության և կրոնական ծեսերի և արարողակարգի ժողովածու է և Քառամատյանը՝ Սիշուն, որը մարդկային հասարակության և մարդու վարքագծի բարոյական նորմերի հավաքածու է: Քառամատյանի ամենաարժեքավոր հատվածը «Զրույցներ» գիրքն է. այն կազմված է քսան գլխից, որն ընդգրկում է Կոնֆուցիոսի և նրա նշանավոր աշակերտների խոհերն ու ասույթները համամարդկային արժեքների, պետության կառավարման, պետական պաշտոնյաների պատրաստման և ճիշտ ընտրության, նրանց վարքագծի, մարդասիրության, արժանապատվության, վեհանձնության, ինքնահարգանքի և այլ հարցերի մասին: Գիրքն ստեղծվել է Կոնֆուցիոսի մահից հետո՝ նրա աշակերտների նախաձեռնությամբ. այն ձևավորման և մշակման երկար ձանապարհ է անցել, եղել են նաև գրքի արգելափակման դարաշրջաններ: Վերջնական տեսքի այն բերվել է մ. թ. 8-րդ դարում: «Զրույցներ»-ն, ըստ էության, փիլիսոփայական աշխատություն չէ. այն ընդամենը գրույցների, պատգամների, խոհերի և դատողությունների ժողովածու է, որտեղ առանձնահատուկ տեղ են գրավում կյանքի և ապրելակերպի փիլիսոփայությունը, գործնական բարոյագիտությունը և հասարակության մեջ մարդու սոցիալական տեղի ու դերի կարևորումն ու իմաստավորումը: Զրույցների և դատողությունների առանցքն՝ իբրև բարձրագույն արժեք, մարդն է իր բոլոր խնդիրներով, պահանջներով ու պարտավորություններով: Գրքի տրամաբանական հարցադրումը փորձում է պատասխանել ոչ թե «ինչ՞ու», այլ «ինչպե՞ս» հարցին. որն է մարդու բարոյա-

կան և ֆիզիկական կատարելության չափանիշը, ինչպէս կառավարել երկիրը, ի՞նչ է բարին ու բարիքը, ի՞նչ է մարդասիրությունը, արժանապատվությունն ու պատվախնդրությունը, ի՞նչ արժէք ունի պատմագիտությունը մարդկության համար և այս կարգի այլ հարցեր:

Կոնֆուցիոսի տրամաբանությամբ հանձարեղ և տաղանդավոր մարդիկ բացառություններ են, բայց եթե երկիրը կառավարում են արդարամիտ և խոհեմ կառավարիչները, ապա զարգանում են հանձարներն ու տաղանդները, ծաղկում են գիտությունները, արհեստներն ու արվեստները: Երկիրը կառավարողների առաքինությունը իրական բարոյականություն է, քանի որ նրանց բոլոր ջանքերը գործադրվում են ընդհանուրի բարօրության համար: Ինչպէ՞ս անել, որ ժողովուրդը լինի հնազանդ ու հավատարիմ, իսկ մարդիկ միմիայն բարի գործեր կատարեն. այս հարցադրմանը Կոնֆուցիոսն առաջարկում է. «Կառավարեք ժողովրդին արժանապատվությամբ, և նա կլինի հնազանդ: Երբ դուք ինքներդ դրա օրինակը տաք, ապա նա կլինի հավատարիմ: Խրախուսեք նրանց, ովքեր արժանի են, խրատներ տվեք նրանց, ովքեր ոչինչ չգիտեն, և մարդիկ կձգտեն միմիայն բարի գործեր կատարել»:¹ Նրա ուսմունքում էական նշանակություն ունեն պարտքի (Իի), հավատարմության (Սիի), հանրային կյանքի (Լիի), բարոյական հիմքի (ժենի), հարգանքի (Թի) և պատկառանքի (Յիա) գաղափարները: Մարդու սոցիալական վարքի հիմքը Կոնֆուցիոսի տրամաբանությամբ նրա դիրքն է պետության, հասարակության և ընտանիքի մեջ: Նրա պատկերացմամբ՝ կառավարել նշանակում է բարի գործ կատարել և ամեն մարդու հասարակության մեջ տալ այն տեղը, որին նա արժանի է: Նա պնդում էր, որ պետության նկատմամբ ժողովուրդը հավատ պետք է ունենա, հակառակ դեպքում այդ պետության գո-

յությունը անհնարին է: Նա սահմանում է ավագների պաշտամունք, պահանջում է հնազանդություն իշխանության նկատմամբ, բայց միևնույն ժամանակ դնում է իմաստուն, խոհեմ, արժանապատիվ և մարդասեր կառավարման պահանջ, երբ կառավարությունը երաշխավորում է սոցիալական արժանավայել պայմաններ, ապահովում է երկրի անվտանգությունը թշնամիներից և հոգ է տանում այն մասին, որ ժողովուրդը հավատա իրեն, որովհետև «Եթե ժողովուրդը չհավատա իր կառավարությանը, այն ժամանակ կմեռնի պետությունը»:² Անվանի փիլիսոփան կարևորում էր ինչպես խոսքի և գործի, այնպես էլ բառի և գաղափարի տրամաբանական միասնության սկզբունքը, որովհետև եթե բառերը չհամապատասխանեն գաղափարներին, ապա այդ դեպքում լեզուն չի հասկացվի, իսկ եթե լեզուն չհասկացվի, ապա երևան կգան անկարգությունն ու խառնաշփոթությունը. այս դեպքում վայելչությունն ու բարոյականությունը կմատնվեն անկման, իսկ եթե կասկածի տակ դրվեն վայելչությունն ու բարոյականությունը, ապա չեն լինի այլևս արդարացի պատիժներ: Այդ պատճառով կառավարիչը պետք է բառերն ու գաղափարներն ուղիղ գործածի և վարվի ձիշտ և ճիշտ դրանց համապատասխան. Բառերից միմիայն մի բան է պահանջվում՝ լինել հասկանալի. «...Եթե վերևում ձիշտ վերաբերմունք կա իրավունքի և պարտականության նկատմամբ, - ասում է Կոնֆուցիոսը, - ապա ներքևում ոչ մեկը փորձ անգամ չի անի լինել անհնազանդ: Եթե վերևում բարձր գնահատվի արդարությունը, ապա ներքևում ոչ ոք չի համարձակվի անարդար լինել: Եվ եթե պայմաններն այսպիսին լինեն, ապա աշխարհի բոլոր կողմերից դեպի ձեզ կգան մարդիկ՝ ուսերին բերելով նաև իրենց երեխաներին»:³ Եվ եթե ցանկացած երկիր մեկ դար անընդմեջ կառավարվի

2 Նույն տեղում, էջ 90:
3 Նույն տեղում, էջ 98-99:

1 Կոնֆուցիոս, Ջրույցներ, էջ 20:

առաքինի, արժանապատիվ և ընդունակ մարդկանց կողմից, ապա տվյալ երկրում հետզհետե կվերանան հանցագործություններն ու պատիժները: Մրանք Կոնֆուցիոսի կողմից հիմնավորված քաքինմատիկ ճշմարտություններ են:

«Ջրույցներ»-ը համաժամանակյա տեսանկյունից թեև կրում է պահպանողական, իսկորոշ հարցերի մեկնաբանություններում մինչև անգամ մակերեսային և մտահայեցողական բնույթ, այսուհանդերձ, նրանում արծարծված դատողությունների և գաղափարների գերակշիռ մասն ունեն բոլոր ժամանակների համար տևական և արդիական ուղղվածություն, քննարկվող հարցերի, պահանջների, պատգամների, խորհուրդների ու խորհրդածությունների բացառիկ ունիվերսալություն: Կրթության, գիտության, երաժշտության, պոեզիայի, պատմության և պատմական արժեքների գնահատման, հասարակության մեջ մարդու սոցիալական դիրքի բարձրացման, բարոյական վարքի, պետության և պետականության ստեղծման, կառավարման և պետական պաշտոնյաններին ներկայացվող իր առաջադեմ գաղափարներով և բոլոր ժամանակների համար արդիական պահանջներով, Կոնֆուցիոսը 27 դարերի հեռավորությունից թևակոխել է 21-րդ դար:

Անդրադառնալով առողջ և բարեկարգ հասարակության մեջ մարդու սոցիալական դերի և դիրքի ապահովման և բարձրացման խնդիրներին, նա պահանջում է ազնվորեն քայլել ճշմարիտ ճանապարհով և այդ համոզմունքին մնալ հավատարիմ ամբողջ կյանքի ընթացքում, թելադրում է չզնալ այն երկիրը, որտեղ անհաստատ կարգեր են իշխում, չմնալ այն պետության մեջ, որտեղ խառնաշփոթություն է տիրում, և ընդհակառակը աչքի ընկնել այն ժամանակ, երբ պետության մեջ տիրապետում է կարգ ու կանոն, որովհետև՝ «Եթե մի երկիր գնում է ճշմարիտ ճանապարհով և իշխում է կարգ ու կանոնը, ապա

ամոթ է , որ մարդ այնտեղ ապրի աղքատ և ամենացածր դիրք անգամ չունենա: Ընդհակառակը, եթե մի երկիր ճշմարիտ ճանապարհի վրա չէ, ապա ամոթ է այնտեղ հարուստ ապրելն ու պատիվներ ունենալը»:¹ «Ջրույցներ»-ում մեծ տեղ է հատկացվել պետության կառավարման հարցերին: Ըստ էության, անվանի փիլիսոփան առողջ և բարեկարգ հասարակություն ունենալու առաջին նախապայմանը համարում էր բարոյական օրենքների հիմքի վրա կառուցված պետությունը: Քննարկելով պետության բարեհաջող կառավարման հարցերը առաջին հերթին նա հստակ պահանջներ է ներկայացնում պետական ծառայողին: Նրա տրամաբանությամբ պետական աստիճանավորը պետք է տիրապետի որոշ կարևոր առաքինությունների և խուսափի վնասակար ու վտանգավոր մի քանի արատներից: Առաքինություններից մեկը նա համարում էր՝ կառավարել հանուն ժողովրդի բարօրության, չլինել վատնող, իսկ դա նշանակում է խրախուսել այն, ինչ բարիք է բերում ժողովրդին: Կառավարման անհրաժեշտ առաքինություն նա համարում էր նաև ժողովրդին ներկայացվող պահանջներում չափավորության և զսպվածության պահպանումը, պահանջել ժողովրդից, սակայն չհասցնել նրան դժգոհության, պահանջել նրանից հնազանդություն և հարգանք, սակայն չլինել դաժան, այսինքն, նրանից պահանջել այն, ինչ նա կարող է անել: Մինչդեռ, ժողովրդից պահանջել որև բան, բայց նրան չնախապատրաստել դրան և հաշվի չառնել նրա հնարավորությունները՝ նշանակում է նրան մատնել հուսահատության և փորձությունների, որը կրքերի անցանկալի հետևանքների: Հետևությունն այն է, որ պետության բարեհաջող և հակամետ կառավարումն իր հերթին օգնում է հասարակության համաչափ և ներդաշնակ զարգացման գործընթացին: Մարդկային հասարակությունը բաժանելով կատա-

1 Նույն տեղում, էջ 61:

ոյալների և ոչ կատարյալների, Կոնֆուցիոսը շեշտը դնում էր կատարյալ մարդու վրա՝ զարգացնելով բարձր և վեհ, նաև՝ արդարացի և օրինապահ հասարակության ստեղծման գաղափարը, մի գաղափար, որը մարդկային հասարակության պատմության զարգացման բոլոր շրջաններում պահպանել է իր առաջնահերթությունն ու հրատապությունը:

Գրքի տարբեր էջերում, անվանի փիլիսոփան փորձել է տարբեր կողմերից մեկնաբանել «կատարյալ մարդ» հասկացությունը: Նրա պատճառաբանությամբ կատարյալ է այն մարդը, ով իր ուժերը նվիրում է կյանքի հիմքերն ամրապնդելուն, որովհետև եթե ամուր են հիմքերը, ապա կգտնվի նաև ճիշտ ապրելու ճանապարհը: Մեկ այլ բնութագրմամբ նա կատարյալ է համարում այն մարդուն, ով օգնում է մյուսներին բարիք գործելու համար և երբեք նրանց չարության չի մղում, այնինչ ոչ կատարյալ մարդիկ ճիշտ հակառակն են անում: Հասարակությունը կատարյալ դարձնելու նպատակով Կոնֆուցիոսը փորձում է հակադրել ինչպես չարը՝ բարուն, սուտը՝ ճշմարիտին, այլանդակը՝ գեղեցիկին, այնպես էլ կատարյալ մարդուն՝ ոչ կատարյալին, որպեսզի կարողանա բացահայտել բարոյագիտական այն ունիվերսալ նորմերն ու համամարդկային արժեքները, որոնք կօժանդակեն առողջ, բարեկարգ և արդարամիտ հասարակություն ստեղծելու գործին: Նա անվերապահորեն հավատում էր, որ կատարյալ մարդն իր գոյությամբ ու գործունեությամբ հարստացնում է մարդասիրությունը, որը բարեկարգ հասարակություն ստեղծելու անհրաժեշտ ցուցանիշներից մեկն է: Զարգացնելով իր մտքերը կատարյալ մարդու՝ որպես բարեկեցիկ հասարակություն ստեղծելու կարևոր գործոնի, Կոնֆուցիոսը փորձել է ստեղծել իր ժամանակի կատարյալ մարդու նկարագիրը: Նրա հայեցաբանությամբ մարդը կատարյալ կարող է համարվել այն ժամանակ, երբ նա լինի իմաստուն, անշահախնդիր,

խիզախ և առաքինի: Ուշագրավ է այն, որ այդ հատկանիշները պետք է ձևավորվեն և հասցվեն կատարելության՝ «վայելչության և երաժշտության օրենքներով»: Կատարյալ մարդն իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, թե ինչպես կատարի իր պարտականությունները, որովհետև նա կամաչի, եթե իր խոսքերն ավելի լինեն, քան՝ գործերը: Այսպիսով, դեպի կատարյալ մարդը տանող ճանապարհը երեքն են՝ շիտակ վերաբերմունք մարդկանց նկատմամբ, որը մարդուն ազատում է ավելորդ հոգսերից, գիտելիքներ, որը մարդուն ձեռք ազատում է անհիմն կասկածներից, վճռականություն, որը մարդուն հեռու է պահում վախից ու տագնապներից:

Ինչպես նկատում ենք, հստակորեն ընդգծված է Կոնֆուցիոսի, հետագայում նաև կոնֆուցիականության համար կարևոր նշանակություն ունեցող ընտանիքի և պետության ընդհանրության և միասնության գաղափարը: Նա իրավացիորեն պատճառաբանում էր, որ փոքրաքանակ ժողովուրդներ ունեցող և պետականության ձևավորման փուլում գտնվող երկրների կառավարիչները պարտավոր են աչալուրջ և շրջահայաց լինել իրենց բոլոր գործերում և արարքներում: Նրանց գենքը մշտապես պետք է լինի չափավորությունն ու լայնախոհությունը: Նա բարձրացնում է բոլոր ժամանակների համար առաջնահերթ և արդիական մի խնդիր՝ բարձրաստիճան պաշտոնյա պատրաստելու խնդիրը: Երբ մի առիթով նրան հարցրել են թե ինչպե՞ս է, որ նա պաշտոն չունի և չի մասնակցում երկրի կառավարման գործերին, նա պատասխանել է՝ «Պատմությանց գրքում՝ ասված է՝ հարգանք ունեցեք ծնողների նկատմամբ, ծնողների նկատմամբ հարգանքը և եղբայրական սերը, որ առաքինություններ են, ազդում են քաղաքականության վրա: Ուրեմն դրանց մասին հոգ տանելով, կարելի է

1 Չինաստանի հինգ կանոնիկ գրքերից մեկն է:

նպաստել պետական և հասարակական կարգապահության բարելավմանը: Ինչու միայն հայտնի պաշտոններ զբաղեցնելը համարենք ծառայություն»:¹ Կոնֆուցիոսի համոզմամբ պետական պաշտոն կարող է զբաղեցնել նա, ով խոսելիս պարսավանքի առիթ չի տալիս իր մասին և քիչ առիթներ է ունենում զղջալու. «Շատ լսիր,–ասում է նա,–խուսավիր այն ամենից, ինչը վտանգավոր է և առհասարակ եղիր խոհեմ ու խելացի: Այդ դեպքում չես զղջա»:² Ժողովրդի մեջ բարօրություն և խաղաղություն հաստատելու և սոցիալական տարբեր շերտերի միջև հնարավոր և ցանկալի հավասարակշռություն ապահովելու համար շատ կարևոր է պետական ծառայողի բարոյական նկարագիրը: Իր անձնային որակներով նա պետք է տարբերվի մյուսներից. լինի ազնիվ, արդարամիտ, արժանապատիվ, իմանա իր պարտականությունները մարդկանց հանդեպ և դրանցից խույս չտա, ղեկավարվի բարոյականության օրենքներով, զերծ մնա չար ու վնասակար գաղափարներից և արարմունքներից, տիրապետի քաղաքավարության և բարեկրթության օրենքներին, չլինի մանրախնդիր, լինի համբերատար, խելամիտ և հանդուրժող: Իր խորհուրդ–պատգամն ուղղելով պետական պաշտոնյային Կոնֆուցիոսն ասում է. «Եթե բարձրացնենք արդարներին, իսկ անազնիվներից հեռու մնանք, ժողովուրդը հնազանդ կլինի: Եվ ընդհակառակը, եթե անազնիվները պատվի արժանանան, իսկ արդարները մերժվեն, ժողովուրդը հնազանդ չի լինի »:³ Երկիրը կառավարել նշանակում է արդար և բարի գործ կատարել, այլ կերպ գործել հնարավոր չէ, որովհետև «...Իոք պետք է իրոք ցանկանաք բարին, այն ժամանակ ժողովուրդը նույնպես կդառնա բարի: Տիրակալը քամու նման է , ժողովուրդը՝ խոտի: Եթե քա-

1 Նույն տեղում, էջ 20:
2 Նույն տեղում, էջ 19:
3 Նույն տեղում, էջ 19 –20:

մին փչի, խոտը կթեքվի»:⁴ Նա քաջալերում էր աշխատանքում լինել անխոնջ, ոչ մի բանում չլինել անտարբեր և միշտ պատրաստական և հավատարմորեն կատարել իր պարտքն ու պարտականությունները: Նա հավասարապես քննադատում էր ինչպես նրանց, ովքեր արագ հաջողությունների էին ձգտում, այնպես էլ նրանց, ովքեր մանր օգուտների հետևից ընկնելով կորցնում էին մեծ գործեր կատարելու հնարավորությունը: Նա իրավացիորեն կարծում էր, որ ազնիվ և արժանապատիվ պաշտոնյային թեև ծառայելը հեշտ է, սակայն դժվարը նրա համակրանքը շահելն է, որովհետև եթե փորձեն նրա բարեհաճությանն արժանանալ անազնիվ ճանապարհով, ապա կարժանանան նրա հակակրանքին: Ինչպես տեսնում ենք, Կոնֆուցիոսի պատճառաբանություններում պետական պաշտոնյան մեծամիտ և փառասեր չէ, նա լի է արժանապատվությամբ և մարդասիրությամբ, անշեղորեն գնում է դեպի բարին, մարդկանց մղում արդարության, հաստատում համերաշխություն և ներդաշնակություն: Ուրեմն, եթե կառավարողները հարգեն վարվեցողության և բարոյականության այն օրենքները, որոնք ընդհանուր են բոլորի համար, ապա ժողովուրդը շատ ավելի հեշտ կկառավարվի: Պետական պաշտոնյայի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ «...նա իրեն դաստիարակում է այն բանի համար, որ բարեխոհորեն կատարի իր պարտքը: Նա իրեն դաստիարակում է այն բանի համար, որ խաղաղություն և հանգստություն պատճառի մարդկանց: Նա դաստիարակում է ինքն իրեն ժողովրդին խաղաղություն և հանգստություն պագնելու համար»:⁵ Այն հարցին թե որն է ամոթալի արարք՝ Կոնֆուցիոսը պատասխանում է. «Եթե որևէ պաշտոնյա մտածում է միայն այն մասին, որ իր տեղը պահպանի և դրա հետ միասին իր եկամուտներն ապահովի, ապա

4 Նույն տեղում, էջ 94:
5 Չինաստանի հինգ կանոնիկ գրքերից մեկն է:

դա ամոթալի արարք է»:¹ Անվանի փիլիսոփան հանգում է այն մտքին, որ եթե պետությունը ձիշտ ճանապարհի վրա է, ապա մարդիկ կարող են ազատ և անկաշկանդ մտածել ու խոսել, նաև՝ համարձակ ու վճռական գործեր ձեռնարկել, հակառակ դեպքում՝ «...մարդիկ գուցե թե վճռական գործեր ձեռնարկեն, սակայն նրանց խոսքը չի կարող լինել ազատ»:² Ով գործում է ճշմարիտ բարոյական օրենքների համաձայն, կարող է նաև խոսել, սակայն ամեն խոսող չէ, որ միշտ գործում է բարոյական օրենքների համաձայն: Այս տեսանկյունից Կոնֆուցիոսը կարևորում է նաև մարդու մեջ սեփական համոզմունքներ ձևավորելու անհրաժեշտությունը. «Ամուր կամք և բարձր բարոյականություն ունեցող մարդը, -ասում է նա.- երբեք չի փորձի իր կյանքը փրկել սեփական համոզմունքների գնով: Նա պատրաստ է անգամ իր կյանքը տալ հանուն այդ համոզմունքների»:³ Դա նշանակում է, որ եթե մարդը խոսքի մեջ անկեղծ ու չափավոր է, իսկ գործի մեջ պարտաճանաչ ու բարեխիղճ, ապա նա կարող է հաղթահարել ցանկացած դժվարություն: Պաշտոնյայի համար իրավունքը և պարտականությունը նրա բարոյականության և ծառայողական գործելակերպի անհրաժեշտ կողմնորոշիչներն են: Նա ենթարկվում է օրինավորության և պատշաճության օրենքներին և առաջին հերթին պահանջում է ոչ թե ուրիշներից, այլ ինքն իրենից:

Ընտանիքի և պետության միջոցով սոցիալականացման հարցերն անվանի փիլիսոփան քննարկում է պատշաճ մակարդակով: Նա առաջարկում է, որ պետք է երիտասարդ մարդն ընտանիքում լինի օրինակելի և հարգալից ծնողների հանդեպ, իսկ դրսում բոլորի հանդեպ համակված լինի սիրով ու բարության: Մարդը ձգտում է կատարելության՝ նկատի ունենալով դժվարություն-

ները, հասկանում և գիտակցում է, որ այդ նպատակին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ իր կենսակերպն ու նիստուկացը համապատասխանեցնի և ենթարկի ժամանակի պահանջներին և ավանդույթ-սովորույթներին: Նա գտնում էր, որ բնությունից մարդիկ թեև ծնվում են միանման, սակայն դաստիարակությունը և սովորությունները նրանց օրոքստօրե հեռացնում են միմյանցից: Այսինքն, մարդկանց միջև եղած տարբերությունները պայմանավորված են նրանց ստացած դաստիարակությանը. «Ով հավատարմորեն կատարում է իր պարտականությունները, պետք է կատարի նաև այն, ինչ խոստանում է: Ով հոգ է տանում վարքի ու պատշաճության ընդհանուր օրենքների պահպանման մասին, կարող է խուսափել ամոթից ու անպատվությունից»:⁴ Նրա կարծիքով դաստիարակված մարդն ուտելիս պահպանում է չափը և կյանքում չի ձգտում հարմարվողականության ու պատեհապաշտության: Նրա արարքները միշտ խելոք են, խոսքերը՝ մտածված: Նա իր անձը նվիրում է այն ամենին, ինչը ճշմարիտ է և արդար: Հետաքրքիր է նաև դաստիարակված մարդու նրա հետևյալ սահմանումը. եթե մարդն աղքատության մեջ չի դիմում ստորաքարշ արարքների, իսկ հարստության մեջ մեծամիտ չէ և չի մոռանում բարեկրթության, քաղաքավարության և վայելչության օրենքների նկատմամբ սերը, ապա այդպիսի մարդու մասին կարելի է ասել, որ նա դաստիարակված է:⁵ Կոնֆուցիոսը քննադատում էր անհիմն բարոյախոսությունն ու քարոզչությունը, որովհետև կարևորը ոչ թե խելացի խրատներն ու հորդորներն ընդունելն է, այլ սեփական վարքը խրատների և խորհուրդների համաձայն բարեփոխելն ու սխալներն ուղղելն է, քանի որ «Ինչպե՞ս կարելի է գործ ունենալ այն մարդկանց հետ, ովքեր ուրախանում են հաճելի խոսքերից՝ առանց

1 Նույն տեղում, էջ 106:
2 Նույն տեղում, էջ 107:
3 Նույն տեղում, էջ 122:

4 Նույն տեղում, էջ 13:
5 Նույն տեղում, էջ 14:

հասկանալու դրանց իմաստը և ընդունում են խրատները՝ առանց բարեփոխելու իրենց վարքը»:¹ Նա մարդու մեջ հատկապես կարևորում էր նրա վարքն ու բարոյական պահվածքը: Նրա պատկերացմամբ բարոյական պահվածքն այն է, երբ մարդ հաղթահարում է ինքն իրեն, սանձում իր հոռի ցանկություններն ու կրքերը, դեկավարվում վայելչության, քաղաքավարության և բարության սկզբունքներով. «Ով թեկուզ մեկ օր այդպես վարվի.-ասում է նա.-ապա կխրախուսվի բոլորի կողմից: Ծշմարիտ արարքներ կատարելը կախված է հենց մեզանից: Ուրիշների վրա չպետք է հույս դնել»:² Զարգացնելով այդ գաղափարը, նա իր սաներին խրախուսում էր, որ այն ինչ հակառակ է բարոյականությանը պետք չի ո՛չ տեսնել, ո՛չ լսել և ո՛չ էլ խոսել այդ մասին: Այդ հարցը քննարկելով մեկ այլ տեսանկյունից, նա գտնում էր, որ ով աչքի է ընկնում բարոյական վարքով, շատ զգույշ և խոհեմ պետք է վարվի բառերի հետ, քանի որ լուրջ և կարևոր գործերի մասին չի կարելի խոսել անխոհեմ ձևով: Երբ մարդ բարեխիղճորեն կատարում է իր պարտքն առանց որևէ բան մոռանալու, չի անում այնպիսի բան, որ չէր ցանկանա ուրիշներն անելն իրեն, մարդկանց միշտ վերաբերվում է քաղաքավարությամբ և հարգանքով՝ ինչը համապատասխանում է համակեցության պահանջներին, այդ դեպքում «ոչ ոք չի դժգոհի քեզանից, ո՛չ պետության մեջ և ո՛չ էլ ընտանիքում»:³ Նա խարազանում էր նախանձը, ագահությունը, մեծամտությունն ու բանասարկությունը, որոնց առկայության դեպքում մարդու բոլոր դրական հատկանիշներն արժեզրկվում են: Իր մտքերը համոզիչ դարձնելու համար Կոնֆուցիոսը «Երգերի գրքից» բերում է հետևյալ ներբողը. «Ով նախանձ ու ագահ չէ, ինչպե՞ս կարող է անարդարություն գործել»:⁴ո-

1 Նույն տեղում, էջ 69:
2 Նույն տեղում, էջ 87-88:
3 Նույն տեղում, էջ 88:
4 Նույն տեղում, էջ 87-88:

րովհետև խոռովության և անհնազանդության աղբյուր է այն, երբ սաստիկ ատում են նրանց ովքեր անարդար բան են կատարել: Նա իրավացիորեն պնդում էր, որ քծնանքը, շողոքորթությունն ու կեղծավորությունը անհամատեղելի են բարեկրթության և լավ բնավորության հետ, ուստի մարդկանց հորդորում էր ամեն օր իրենց ստուգեն երեք կարևոր արարքներում՝ ուրիշների հանդեպ եղել ե՞ն անկեղծ ու վստահելի, արդարամիտ ե՞ն եղել ընկերների հետ, և վերջապես, ըմբռնել ե՞ն այն՝ ինչ կարդացել են: Դիմացիոնի լսելը Կոնֆուցիոսը համարում էր մշակույթ: Երբ նա զրուցում էր մարդկանց հետ, շատ ուշադիր լսում էր նրանց, տեղի- անտեղի չէր միջամտում, երբեք հոգնածության և ձանձրության նշաններ չէր դրսևորում, կամ մտացրիվ չէր լինում:

Նա մշակեց բարոյական օրենքներով և նորմերով առաջնորդվելու դաստիարակության կարգինալ սկզբունքը. այն պատկերավոր ձևով նա համեմատում էր բևեռային աստղի հետ, որը մշտապես իր տեղում է, իսկ մյուս բոլոր աստղերը «խոնարհաբար շրջապատում են նրան», այլ կերպ ասած դաստիարակության բոլոր սկզբունքները բխում են նրանից: Այդ գաղափարի հավաստիությունը նա փորձում էր հիմնավորել հնագանդության և կարգապահության, օրենքներ և պատիժներ կարգացույցների հարաբերակցության ցուցանիշներով՝ «Եթե հնագանդությունը ամրապնդվի օրենքներով, իսկ կարգապահությունը՝ պատիժներով, -ասում է նա,-ապա ժողովուրդը կաշխատի շրջանցել օրենքներն ու պատիժները և խիղճն ամբողջովին կկորցնի»:⁵ Ընդհակառակը, եթե ժողովուրդն առաջնորդվի բարոյականության օրենքներով և կարգապահությունը հաստատվի ավանդույթների և սովորությունների պահպանման համաձայն, ապա նա ոչ միայն խիղճը չի կորցնի, այլև կունենա ամոթի

5 Հիմաստանի հինգ կանոնի գրքերից մեկն է, էջ 15:

զգացում և այդ ճանապարհով կձևավորվի կարգ ու կանոն պահպանելու քաղաքացիական գիտակցություն:

Բարոյական բարձրագույն արժեքների համակարգում Կոնֆուցիոսը հատկապես առանձնացնում է բարին, գեղեցիկն ու ճշմարիտը՝ որպես իրականության հետ մարդու փոխհարաբերության առանձնահատուկ կողմեր: Հնարավոր է բարությանը փոխհատուցել անարդարությունը հարցին, Կոնֆուցիոսը պատասխանում է. «Անարդարությունը պետք է փոխհատուցել արդարությամբ, իսկ բարին՝ բարությամբ»:¹ Ով սիրում է բարին, իրեն բարձր է դասում մյուսներից, իսկ ով ատում է չարը, գործում է բարոյականության օրենքներով ու նորմերով, այսինքն, հեռու է պահում իրեն այն ամենից, ինչ հակառակ է այդ օրենքների: Հետևապես իրավացի էր նա, երբ գտնում էր, որ՝ «...ով բարոյականություն չունի՝ աղքատության մեջ երկար ապրել չի կարող: Նա նաև չի կարող ուրախության մեջ երկար ապրել»:² Հակադրելով չարը բարուն Կոնֆուցիոսը փորձում էր ապացուցել, որ մարդը ծնվում է բարի, սակայն եթե այդ հատկությունը չի բացահայտվում և համապատասխան դաստիարակությամբ չի ամրապնդվում, ապա բնածին այդ հատկությունը ժամանակի ընթացքում կարող է կորչել և անհետանալ: Իր տեսակետը հիմնավորելու համար նա փաստարկում է «Երգերի գրքի» այն ներբողը, որտեղ ասվում է. «Կտրել ու փայլեցնել փղոսկրի նման, հղկել ու հարթել ինչպես թանկագին քար», այլիմաստորեն դա նշանակում է մարդուն կրթել ու դաստիարակել այնպես, ինչպես խնամքով և զգուշությամբ հղկում և մշակում են թանկագին քարը: Հստակ երևում է, որ հասարակության բարօրության և բարեկարգման երաշխիքն անվանի փիլիսոփան տեսնում էր դաստիարակության միջոցով հասարակության սոցիալականացման մեջ: Զար-

զացնելով իր մտքերը մարդու բարոյական նկարագրի մասին Կոնֆուցիոսը հանգում է հետևյալին. «Արհեստավորը, եթե ուզում է մի լավ բան սարքել, առաջին հերթին հոգ է տանում լավ գործիքներ ունենալու մասին: Պետք է ծառայել նրանց, ովքեր աչքի են ընկնում բարձր բարոյականությամբ և իմաստությամբ: Ուրեմն՝ բարեկամացիր կրթված և գիտուն մարդկանց հետ, քանի որ նրանք բարի և արդար գործեր են կատարում»:³ Նրա փաստարկմամբ բարձր բարոյականությամբ և իմաստությամբ օժտված մարդիկ այն «լավ գործիքներն են», որոնք իրենց հերթին օգնում են մարդկանց բարոյական նկարագրի ձևավորման և նրանց սոցիալականացման գործին: Նա հավասարապես խարազանում էր ինչպես շողորթությունը, այնպես էլ մանրախնդրությունը, որովհետև «...շողորթ խոսքերը վնասում են բարոյականությունը, իսկ մանրախնդրությունը փչացնում է մեծ ծրագրերը»: Նա մարդկությանը պատգամում էր առաջնորդվել բոլոր ժամանակների համար պարտադիր հետևյալ սկզբունքով՝ ով ատում է մարդկանց, ստուգիր՝ ինչ՞ու է ատում, ով սիրում է նրանց, ստուգիր՝ ինչ՞ու է սիրում, քանի որ մարդիկ մարդասիրության ավելի կարիք ունեն, քան ջրի ու կրակի. «Ես տեսել եմ մարդկանց, որ մահացել են կրակից կամ ջրից, բայց չեմ տեսել մեկին, որ մեռնի մարդասիրությունից»: Ինչպես Պյութագորասը Կոնֆուցիոսը նույնպես մարդկանց խրախուսում էր ապրել աննկատ, չափավոր, առանց թմրկահարելու և մատնանիշ անելու իրենց արժանիքներն ու առավելությունները: Մարդն ընդունակ է հետևելու մեծ գործերի և բարձր գաղափարների, սակայն դա չի նշանակում, որ նա դրանով հավակնում է հասնել բարձր դիրքի և աստիճանի. «Ինձ չի վշտացնում այն, -ասում է նա,- որ ոչ պաշտոն ունեմ, ոչ էլ աստիճան: Ավելի շուտ ինձ մտահոգում է

այն, որ ընդունակությունների և սեփական ուժի պակաս եմ զգում: Չեմ վշտանում նաև անհայտ մնալուց: Մտածում եմ միայն այնպիսին լինել, որ մարդիկ ինձ ճանաչեն»:¹ Նա փաստում էր, որ ազնիվ և կատարյալ մարդը պետք է տիրապետի հետևյալ առաքինություններին՝ քաղաքավարության, մեծահոգության, անկեղծության և բարության, որովհետև քաղաքավարությամբ վայելում են հարգանք, մեծահոգությամբ՝ համակրանք, անկեղծությամբ՝ վստահություն, իսկ բարությունը բերում է հաջողություն: Նա քննադատում էր սնապարծությունն ու պաշտոնամոլությունը, դրանք համարելով բարոյական արատներից վատագույնները. «Քանի դեռ պաշտոն չունեն, -ասում էր նա,- նրանց միակ հոգսը պաշտոն ձեռք բերելն է, հենց որ պաշտոն են ձեռք բերում, նրանց միակ հոգսն է, որ այն նորից չկորցնեն, և որպեսզի չկորցնեն պաշտոնը, նրանք ընդունակ են ամեն ինչի»:²

Հասարակությունը կատարյալների և ոչ կատարյալների բաժանելու իր հայեցակարգով, Կոնֆուցիոսը փորձում էր զարգացնել այն գաղափարը, որ առաքինություններն ու մոլորություններն՝ իբրև վարքային հատկանիշներ, նույնպես համապատասխանում են այն մարդկանց, ովքեր կրում են դրանք: Հետևապես՝ «սխալների և անսխալների» վրա հնարավոր է ճանաչել և բնութագրել մարդկանց: Այսպես, օրինակ, եթե կատարյալ մարդու համար կարևորը հոգևոր արժեքներն են, ապա ոչ կատարյալ մարդը բավարարվում է միայն նյութականով, մեկը մշտապես ձգտում է ճշմարտության, մյուսը՝ շահին, մեկը հավատարիմ է իր պարտքին ու պարտավորություններին, մյուսը միայն սեփական շահին, իսկ ով մշտապես ամեն ինչում սեփական շահն է որոնում, անպատճառ հանդիպում է անցանկալի արգելքների և փորձությունների: Կատարյալ մարդու մեջ նա

առանձնացնում է չորս հիմնական առաքինություն՝ բարեկրթությունը, ճշմարտախոսությունը, հավատարմությունը և արարքների շիտակությունն ու ազնվությունը: Այսուհանդերձ, Կոնֆուցիոսը ամենաբարձր առաքինությունը համարում է չափի գիտակցումը, որը բարոյական վարքի գլխավոր ցուցանիշն է: Նա քննադատում է ինչպես չափից դուրս շատը, այնպես էլ չափից դուրս քիչը՝ պաշտպանելով միջին չափը. «Եթե ես, -ասում է նա,- այլևս ոչ մեկին իմ շուրջը չգտնեմ, որն իր խոսքի ու գործի մեջ հետևում է միջին չափին, ապա կցանկանամ գործ ունենալ գոնե այնպիսի մարդկանց հետ, որոնք կամ ոգեշնչվող են կամ շրջահայաց»:³ քանի որ ոգեշնչվողները ձգտում են առաջ, իսկ շրջահայացները միշտ խուսափում են սխալ քայլերից: Այսուամենայնիվ, չափից դուրս զգուշավորությունը նա դիտարկում էր որպես վախ, չափից դուրս արիությունը՝ ըմբոստություն և անհնազանդություն, իսկ եթե արդարացիությունը անցնի չափի սահմանները, ապա այն կարող է վերածվել անարդարության: Ինչպես տեսնում ենք Կոնֆուցիոսը նույնպես պաշտպանում էր «չափից դուրս ոչինչ» սղոնյան սկզբունքը: Այսպիսով, ով հետևում է բարոյական նորմերին և օրենքներին, ձգտում է քաջալերել ինչպես իրեն, այնպես էլ ուրիշներին, նախանձախնդիր է, որպեսզի այդ օրենքները հասանելի լինեն և՛ իրեն, և՛ մյուսներին: Այսօրինակ մարդիկ, նրա կարծիքով, կարող են արարքներ գործել և օրինակ հանդիսանալ նաև ուրիշների համար: Սա, նրա բնութագրմամբ, ճշմարիտ վարքն է: Նա իր սաներին սովորեցնում էր ձգտել ճշմարտությանը, զբաղվել արվեստներով, շատ լսել, ընտրել դրանցից բարին և հետևել դրան, շատ տեսնել և տեսածը պահել հիշողության մեջ: Սա գիտելիքներ ձեռք բերելու Կոնֆուցիոսի մշակած մեթոդաբանությունն էր. «Ով ձգտում չունի, -ասում է նա,- ես

1 Նույն տեղում, էջ 116:
2 Նույն տեղում, էջ 29:

3 Նույն տեղում, էջ 122:

1 Նույն տեղում, էջ 31-32:
2 Նույն տեղում, էջ 144:

3 Նույն տեղում, էջ 104:

նրա առաջ չեմ կարող բացել ճշմարտությունը: Ով ինքն անձամբ չի փնտրում ճշմարտությունը, ես չեմ կարող ուսուցանել նրան: Ասենք, եթե ես մեկին ցույց եմ տալիս մի անկյուն, իսկ նա դրա հիման վրա չի կարողանում դատել նաև մյուս անկյունների մասին, այդ դեպքում ես այդ բանը նրա համար այլևս չեմ կրկնում»:¹ Գիտելիքն ու առաջընթացը, ինչպես նաև մարդու բարոյական պատասխանատվությունը նա պատկերավոր ձևով բնութագրում է այսպես. «Սովորելը նման է հողը մի տեղ կուտակելուն: Երբ բլուրն արդեն պատրաստ է, բացի մի զամբյուղ հողից, զարմանքով տեսնում ես, որ պակասողը հենց այն տեղի հողն է, որտեղ դու՝ մեղավորդ, կանգնած ես: Եվ, որպեսզի այդ մի զամբյուղ հողը տեղ հասցնես, քայլ ես անում մի կողմ: Իսկ դա հենց առաջընթաց է: 2՝ է որ դու ինքդ քեզ ես առաջ տանում»:² Նա պահանջում էր միշտ և միայն առաջ գնալ և երբեք չբավարարվել ձեռք բերածով:

Դեռևս մ. թ. ա. 6-րդ դարում անվանի փիլիսոփան իր նշանավոր «Զրույցներ»-ի 15-րդ գլխի 39-րդ կետում առաջադրել է կրթության մատչելիության գաղափարը. «Կրթությունը պետք է մատչելի լինի բոլորին: Կրթության համար դասային տարբերություններ չպետք է ընել»:³ Նա օտար և կեղծ ուսմունքներով տարվելը համարում էր վնասակար և ժամանակի անտեղի վատնում, իսկ գիտելիքներ ձեռք բերելու իրական ուղին համարվում էր՝ «Քեզ խելոք համարիր նրանով, ինչ որ գիտես: Եվ ընդհակառակը՝ ինչ չգիտես խոստովանիր: Ահա սա է գիտելիքներ ձեռք բերելու ճշմարիտ բանալին»:⁴ Նա կարևորում էր հին ու նոր գիտելիքների տրամաբանական կապի սկզբունքը: Նրա համոզմունքով, ով պահպանում է հինը և դրա հետ մեկտեղ յուրացնում

է նոր գիտելիքներ և իմաստություններ, կարող է դառնալ «մարդկանց ուսուցիչ և նրանց համար լինել դրական օրինակ»: Հետաքրքիր է նաև ձևի և բովանդակության միասնության նրա դիտարկումը. «Ձևը իմաստ է, իսկ իմաստը՝ ձև: Որպես օրինակ վերցնենք վագրի և հովազի մորթին մի կողմից և շան ու ոչխարի մորթին մյուս կողմից: Տարբերությունը արտաքին տեսքի իմաստի մեջ է: Եթե մորթիներից հեռացնենք մազերը, ապա այլևս ոչ մի տարբերություն չի մնա»:⁵ Կոնֆուցիոսը Սոկրատեսից մեկ դար առաջ ազդարարեց, որ գիտելիքը հզոր ուժ է և հասարակության սոցիալական բարեկարգման կարևոր գործոն, հեռևապես պահանջում էր այն խելամտորեն ծառայեցնել մարդկությանը, հանդես բերել խոհեմություն, իսկ ժողովրդի ոգին բարձրացնելու համար ուշադրություն դարձնել բարոյականությանը և կարգապահությանը: Հետևապես՝ գիտության ծավալման աշխատանքը ծանր է, ճանապարհը՝ երկար, նմանապես ծանր է նաև նվիրվել աշխարհում մարդասիրության տարածման դժվարին գործին:

Կրթության, գիտության և ուսուցման հարցերը պատշաճ մակարդակով են դիտարկվել անվանի փիլիսոփայի հայացքներում: Նա փորձել է բացորոշել կրթված մարդու նկարագիրը, կանխորոշել նրա կրթվածության սահմաններն ու աստիճանը: Կոնֆուցիոսի կարգախոսն էր. «մշտապես վարժվիր սովորածիդ մեջ», որի մեջ հավասարաչափ ներառվում էին ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր վարժանքները: Կրթված նա համարում էր այն մարդուն, ով իր վարքի մեջ արժանապատվություն էր դրսևորում, մեծ ընդունակություններ ունենալով հանդերձ փորձում էր սովորել նաև մյուսներից, մշտապես պահպանում էր չափը և լեցուն լինելով գիտելիքներով, նա իրեն սովորական մարդու պես էր պահում և որ, ամենակարևորն է, այլ երկրներ

1 Չինաստանի հինգ կանոնիկ գրքերից մեկն է, էջ 51:
2 Նույն տեղում, էջ 68:
3 Նույն տեղում, էջ 128:
4 Նույն տեղում, էջ 19:

5 Նույն տեղում, էջ 91:

գործուղվելիս իր երկրին և ժողովրդին պատիվ էր բերում. «...նաև նա, ով միշտ իր խոսքի տերն է, և միշտ ավարտին է հասցնում այն, ինչ սկսում է...նաև նա, ով իր ընտանիքում և հարազատների շրջանում հայտնի է ուշադիր վարքով, իսկ շրջապատի նկատմամբ քաղաքավարի է և հարգալից»:¹ Այսօրինակ մարդու մասին կարելի է ասել, որ նա մշտապես ձգտում է հասնել կատարելության, քանի որ գործում է այնպես, ինչպես մտածում է և խոսում է այնպես ինչպես գործել է: Նա համոզված էր, որ եթե մարդն իրեն չպահի լուրջ և արժանապատիվ, եթե անգամ կրթված էլ լինի, ապա հարգանք չի վայելի, իսկ դա նշանակում է, որ նրա կրթությունը հիմնավոր չէ: Վերոնշյալ չափանիշները և իր մշակած պահանջներն ամբողջական համակարգի բերելով, անվանի փիլիսոփան առաջարկում է կրթված մարդու հետաքրքիր մոդել. «Ով մեծապես գնահատում է բնավորությունը, խիզախությունը և իմաստությունը, բայց ոչ ձևականությունը, ով պատրաստակամ է ծնողների համար և անձնվիրաբար ծառայում է իր երկրին ու ժողովրդին, ով հարգանքով է վերաբերվում ընկերներին, եթե անգամ ինձ առարկեն, ես կասեի, որ այդ մարդը կրթված է»:² Կարևորելով կրթության համամարդկային արժեքն ու կշիռը և ընդհանուր առմամբ կիրթ մարդու տեղն ու դերը հասարակության բարեկարգման գործում, Կոնֆուցիոսը միանգամայն իրավացիորեն կանխատեսում էր, որ եթե բարբարոս ցեղերի մեջ անգամ ընդամենը լինի մեկ կիրթ մարդ, ապա նրանք անպայմանորեն ենթակա կլինեն կրթության: Նա խորապես համոզված էր, որ կատարյալ մարդը ճիշտ ճանապարհ դուրս գալու համար կարիք ունի ուսման: Ուրեմն, ով այսօր գիտի, թե վաղն ինչ է սովորելու և չնոռանալու համար շարունակ կրկնում է այն, ինչ արդեն գիտի, ըստ մեծ փիլիսոփայի, նրա մասին կարելի է ասել, որ նա

1 Նույն տեղում, էջ 103:
2 Նույն տեղում, էջ 12:

սիրում է ուսումը: Ուսումնասեր մարդկանց նա ոգեշնչում էր սովորել շատ, սակայն լինել նաև նպատակալաց, կարողանալ իրերն ու երևույթները դիտարկել իրենց պատճառահետևանքային կապի մեջ, լրջորեն մտածել ինչպես դրանց տրամաբանական պատասխանը գտնելու, այնպես էլ հարակից երևույթների մասին:

Սա գիտելիքների ձեռք բերման Կոնֆուցիոսի առաջադրած ուղին է:

Նրա կարծիքով այն հասարակությունը որն ունի մտավոր և հոգևոր հզոր ներուժ, այդ հասարակությունն ունի նաև առաջընթացի և զարգացման անսահմանափակ հնարավորություններ: Իբրև ելակետ ընդունելով այդ տեսակետը, նա փորձում է սահմանել նաև հասարակության մեջ մարդկանց որոշակի կարգայնություն, ըստ որի, նրանք ովքեր ունեն բնատուր ընդունակություններ, հետևապես՝ նաև գիտելիքներ, հասարակության մեջ ամենաբարձր կարգ ունեցողներն են, հաջորդ կարգում նրանք են, ովքեր թեև չունեն բնատուր ընդունակություններ, սակայն գիտելիքներ են ձեռք բերում սովորելով: Այնուհետև՝ «... գալիս են այն մարդիկ, ովքեր թեև դժվարություններ ունեն, սակայն սովորում են: Իսկ նրանք, ովքեր դժվարություններ ունեն և այդ պատճառով չեն սովորում, ամենացածր աստիճանում են»:³ Մարդու կյանքում կարևորելով կրթության դերն ու նշանակությունը, Կոնֆուցիոսը նրան վերագրում էր որոշակի առանձնահատուկ սոցիալական հատկանիշներ, հետևապես՝ նաև իրական և կիրառելի հնարավորություններ: Այսպես, օրինակ, նա կարծում էր, որ ցանկանալ բարի լինել, սակայն չունենալ կրթություն՝ դա տանում է դեպի սահմանափակություն, ցանկանալ իմաստուն լինել, սակայն կրթություն չունենալ՝ նշանակում է լինել առանց նպատակի և կողմնորոշման, անկեղծ լինել, սակայն չունենալ կրթություն՝

3 Չինաստանի հինգ կանոնիկ գրքերից մեկն է, էջ 133-134:

նշանակում է գլխին փորձանք բերել, սիրել արիությունը, սակայն կրթություն չունենալ՝ դրանով հնարավոր է պատճառ դառնալ անկարգությունների և խռովությունների, կամ ցանկանալ միշտ պարզ ու շիտակ լինել, սակայն առանց կրթության՝ դա էլ տանում է կոպտության և վերջապես ցանկանալ հաստատական լինել, սակայն կրթություն չունենալ՝ դա էլ տանում է մոլեգնության: Մրանք անվանի փիլիսոփայի կողմից առաջադրված այն կարևոր առաքինություններ են, որոնք կրթության բացակայության դեպքում կարող են դառնալ նաև անցանկալի մոլություններ:

Կոնֆուցիոսն առանձնահատուկ մոտեցում ուներ երջանկության, արդար և շիտակ ձանապարհով հարստության և բարձր դիրքի հասնելու, բարեգործության, գթասրտության, հին ու նոր արժեքների, երգերի, ծեսերի, սովորությունների և ավանդույթների վերաբերյալ: «Մի կտոր հաց՝ ուտելու համար, -ասում է նա,- մի պուտ ջուր՝ խմելու և որպես բարձ՝ քո սեփական թևը՝ գլխատակիդ դրված. ահա դրանցով էլ կարող է մարդ բավարարվել և երջանիկ զգալ իրեն: Դրան հակառակ շատ բարիքներ ու շնորհներ, որ ձեռք են բերվում անարդար ձանապարհով, ինձ վրա սուկ ամպի տպավորություն են թողնում, որ անցնում են երկնքով»:¹ Կոնֆուցիոսը միջնորդ օղակ էր հնի և նորի միջև, նա սիրում էր հինը և խորապես ուսումնասիրում էր այն. «Ես իմաստուն չեմ ծնվել, -ասում էր նա,-բայց ես սիրում եմ անցյալը և եռանդագին ուսումնասիրում եմ այն»: Անդրադառնալով սոցիալական միջավայրին՝ որպես մարդու սոցիալ-մշակութային կարևոր գործոնի, Կոնֆուցիոսը իրական և օրինակելի էր համարում այն միջավայրը, որն օգնում է մարդու մեջ բարոյական և գեղագիտական բարձրագույն արժեքների ձևավորմանը. «Կյանքը, -ասում է նա,-գեղեցիկ է այն գյուղում, որտեղ իշ-

խում է սերը: Եթե մենք գտնենք նման բնակավայր, որտեղ մարդիկ բարի են իրար նկատմամբ և բնակություն չհատատենք, էլ որտե՞ղ կարող ենք սովորել իմաստություն»:² Հարցադրումը տեղին է և միանգամայն իրավացի:

Կոնֆուցիոսն անդրադարձել է նաև սոցիալական փորձի փոխանցման հիմնահարցին: Մարդն ընդունակ է հետևելու մեծ գործերի և բարձր գաղափարների, իսկ բարին և առաքինությունը տանող մատչելի ուղին նախնիքների փորձի ժառանգումն է, հետևապես՝ «Ով չի հետևում նախորդներին, նպատակին չի հասնում»:³ Զարգացնելով այդ գաղափարը նա հանգում է հետևյալ մտախոհության. «Օրեր ու գիշերներ, առանց ուտելու և քնելու, ես մտածել եմ ձիշտ ապրելու մասին: Ես փորձել եմ ինքս հասնել այդ ճշմարտությանը: Սակայն դրա կարիքը չկար: Անհրաժեշտ էր սովորել նախորդներից»:⁴

Կոնֆուցիոսի գրույցների նպատակաբանությունը մարդու բարոյահոգեբանական կատարելագործումն է, նրա մտավոր և ֆիզիկական կարողությունների բացահայտումը, իր անձի նշանակալիության և կարևորության գիտակցումը, սեփական ուժերի նկատմամբ վստահության, արժանապատվության, հարգանքի, ինքնահարգանքի և բարոյական այլ հատկանիշների ձևավորումը, հարգանք, որի իրավունքն ունի յուրաքանչյուր մարդ՝ անկախ հանրության մեջ ունեցած նրա սոցիալական դերից ու դիրքից: Զրույցների մեծ մասը բովանդակում են միջանձնային և ներանձնային փոխհարաբերությունների ինքնատիպ սկզբունքներ ու գաղափարներ, որոնք այսօր էլ հրատապ են և արդիական: Հին Չինաստանում երեք թիվն ուներ արտասովոր և հրաշագործ նշանակություն: Այսպես, երեքն էին՝ երկինքը, հողը և մարդը: Ելնելով այդ ավան-

2 Նույն տեղում, էջ 29:
3 Նույն տեղում, էջ 83:
4 Նույն տեղում, էջ 126:

1 Նույն տեղում, էջ 53:

դույթից՝ Կոնֆուցիոսը այն փոխադրեց մարդկային փոխհարաբերությունների դաշտ, մատնացույց անելով, որ ինչպես լավ բարեկամները, այնպես էլ վատերը՝ նույնպես երեք տեսակ են լինում: Այսպես, լավ են անկեղծ, հավատարիմ և փորձված բարեկամները, իսկ վատ են նրանք, ովքեր քծող են, զազրախոս և բանասարկու: Նույն ձևով նա հատկանշում էր նաև ուրախության երեք օգտակար և վնասակար ձևերը. այսպես, օգտակար է ուրախանալ երաժշտությամբ և ծիսական արարողություններով, մարդկանց արժանիքների մասին խոսելով, լավ բարեկամներ և հավատարիմ ընկերներ ունենալով, հակառակ դրան բանասարկությամբ, ցանկասիրությամբ, դատար-

կախություններ, ցոփ ու շվայտ կյանքով ուրախանալը՝ վնասակար ուրախություն է:

Մարդկային գործնական հարաբերություններում նա պահանջում էր կիրառել հոգեբանական այնպիսի հնարքներ, որպեսզի մարդը դառնա հետաքրքիր գրուցակից, վայելի մարդկանց համակրանքը, լինի լավ ունկնդիր, միաժամանակ պարտավորեցնում էր խոսքի մեջ լինել կոռեկտ և հետամուտ լինել հետևյալ կանոններին՝ խոսել, երբ արգելված է խոսելը՝ անհամեստություն է, չխոսել, երբ պետք է խոսել՝ խորամանկություն է, խոսել ուշադրություն չդարձնելով գրուցակցի դեմքի արտահայտությանը՝ կոռություն է:

КОНФУЦИЙ В 21 ВЕКЕ

ШОГИК ВОСКАНИЯ

Профессор общеуниверситетской кафедры специального образования и прикладной педагогики АПГУ им. Хачатуря Абовяна, доктор педагогических наук

Конфуций (551–479 гг. до н.э.) считается как символом объединения и идеологической мощи древнего Китая, так и основоположником политического и религиозного учения. Он внес большой вклад в развитие духовной жизни китайского народа и его культуры. Конфуций, как и многие мыслители античного периода, не оставил письменного наследия, за исключением “бесед”, которые после его смерти были обработаны и систематизированы учениками и последователями Конфуция, а впоследствии опубликованы под названием “Беседы” (Лун-юй) как ценный учебник по распространению конфуцианства. Этот труд является также одним из немногих документов, относящимся к истории одного из крупнейших культурных центров древнего Востока – к социальному, экономическому и общественно-политическому состоянию Китая.

CONFUCIUS IN THE 21ST CENTURY

SHOGHIK VOSKANYAN

Doctor of Pedagogy, Professor of the Chair of Professional Education and Applied Pedagogy, ASPU

The article is devoted to Confucius who is considered to be the symbol of unity and ideological strength, as well as the founder of moral and religious teachings, who was one of China's progressive and stylish currents. He has made a great contribution to the spiritual and cultural life of Chinese people. Like all the ancient philosophers Confucius has also left no written works, except his tales which aer about social, political and economical life of Chinese people.

ՕՐԵՆՍԳԻՐ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՀՈՒՐԶ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: Այս սահմանումն ընդգրկում է ժամանակակից զարգացած պետությունները բնութագրող բոլոր տարրերը: Դրանք ապահովելու համար պետությունները սահմանում են մի շարք սկզբունքներ, որոնք իրենց երաշխավորումն են ստանում Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված բազմաթիվ նորմերում: Այդ սկզբունքներից է օրինականության սկզբունքը, որը երաշխավորում է իրավական պետության գաղափարը: Իրավական պետության պայմաններում տիրում է ժողովրդի կամքը, շահերն արտահայտող օրենքի գերկայությունը, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք գործում են Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում, բոլորը հավասար են օրենքի առաջ և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով: Օրինականության սկզբունքի իրացման և կենսագործման պայմաններում կարևոր տեղ է զբաղեցնում ժողովրդավարության սկզբունքը, որի պայմաններում իշխանության միակ աղբյուրը և տեղը ժողովուրդն է:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ պետություն, ժողովրդավարություն, ազգային ժողով, օրենսդրական գործառույթ: Ժողովրդավարությունը՝ որպես պե-

տության հատկանիշ, բնութագրում է ոչ միայն նրա էությունը, այլև այն եղանակների, մեթոդների և ձևերի ամբողջությունը, որոնց միջոցով պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրականացնում են Սահմանադրությամբ և օրենքով վերապահված լիազորությունները: Այն արտացոլում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորման և պաշտպանվածության աստիճանը: Փաստորեն, կարևորվում է ժողովրդավարության գլխավոր սկզբունքը, որը ոչ միայն ելակետային նշանակություն ունի, այլև մյուս բոլոր սահմանադրական նորմերը կոչված են իրականացնելու այս սկզբունքը: Սկզբունքորեն ժողովրդավարական է համարվում այն պետությունը, որի կառուցվածքն ու գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, մարդու և քաղաքացու հանրաձայնաչ իրավունքներին ու ազատություններին: Այն հանդիսանում է մարդու՝ երաշխավորված ազատության հիման վրակառուցված քաղաքացիական հասարակության կարևորագույն տարր:

Պետությունը ժողովրդավարական հոչակելը դեռևս բավարար չէ այդպիսի պետություն ունենալու համար: Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե ում է պատկանում պետական իշխանությունը, ով է հանդիսանում այդ իշխանության կրողն ու աղբյուրը, և ինչպիսի ձևերով ու եղանակներով է իրականացվում այդ իշխանությունը: Ժողովրդավարական պետություններում իշխանության մի-

ակ աղբյուրը, այն կրողը ժողովուրդն է: Այդ է հոչակում նաև ՀՀ Սահմանադրությունը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ինչպես նշվեց, կարևոր է նաև, թե ինչպես, ինչ ձևերով ու եղանակներով է ժողովուրդն իրականացնում իր իշխանությունը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Որպես այդպիսին՝ Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետությունում համապետական և համաժողովրդական ներկայացուցչական մարմին է, որի գլխավոր գործառույթն իշխանությունների բաժանման համակարգում օրենսդրական իշխանության իրականացումն է:

ՀՀ առաջին օրենսդիր մարմինն ստեղծվել է Հայաստանի առաջին հանրապետության հոչակումից (1918 թվականի մայիսի 28) հետո՝ 1918 թվականի հունիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների միջոցով: Սկզբում կոչվել է Հայաստանի խորհուրդ, ապա՝ պառլամենտ կամ խորհրդարան: Ունեցել է 80 պատգամավոր, 72-ը՝ ՀՀԴ կուսակցությունից: 1918 թվականի օգոստոսի 1-ին Երևանում գումարվել է անդրանիկ նստաշրջանը. ընտրվել են խորհրդարանի նախագահը (Ավետիք Սահակյան), 2 փոխնախագահները, հաստատվել է կառավարության կազմը:

Խորհրդային տարիներին (1920-1991թթ.) գործել է ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, որն ընդամենը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տեղական մարմինն էր՝ առանց ինքնուրույն գործելու իրավունքի:

ՀՀ ներկայիս օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի (ԱԺ) ընտրությունները

տեղի են ունենում 5 տարին մեկ (2007 թվականից սկսած): Հերթական ընտրություններն անցկացվում են ԱԺ-ի լիազորությունների ավարտին նախորդող 60 օրվա ընթացքում: Ըստ ՀՀ Սահմանադրության՝ ԱԺ-ի պատգամավոր կարող է դառնալ 25 տարին լրացրած, վերջին 5 տարում ՀՀ քաղաքացիություն և ընտրական իրավունք ունեցող, ՀՀ-ում վերջին 5 տարում բնակվող յուրաքանչյուր ոք: Պատգամավորության թեկնածուները կարող են առաջադրվել մեծամասնական (առաջադրվում են անհատ թեկնածուներ) և համամասնական (մասնակցում են կուսակցությունները՝ ըստ իրենց առաջադրած ցուցակների) ընտրակարգով: Վերջիններս ԱԺ-ում իրենց ներկայացուցիչն ունենալու համար ընտրություններում պետք է ստանան ընտրողների ձայների առնվազն 5 %-ը: 2007 թվականից ԱԺ-ն ընտրվում է 131 պատգամավորից՝ 90 համամասնական և 41 մեծամասնական ընտրակարգով: ԱԺ-ն իր լիազորությունների ամբողջ ժամկետով ընտրում է ԱԺ-ի նախագահ և 2 փոխնախագահներ, ստեղծում մշտական հանձնաժողովներ՝ օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման ու դրանց վերաբերյալ ԱԺ-ին եզրակացություններ տալու համար:

Ազգային ժողովի գործունեությունն իրականացվում է նստաշրջանների, նիստերի, մշտական և ժամանակավոր հանձնաժողովների, ինչպես նաև անհատ պատգամավորների գործունեության միջոցով: Նստաշրջանն Ազգային ժողովի աշխատանքի հիմնական կազմակերպական-իրավական ձևն է: Այն որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում պառլամենտը կարող է անցկացնել նիստեր և ընդունել օրենքներ, որոշումներ, հայտարարություններ: Ազգային ժողովն ամբողջ կազմով գործում է միայն նստաշրջաններում, որն իրենից ներկայացնում է ընդհա-

նուր օրակարգով նիստերի ընթացակարգ:

Նստաշրջաններում Ազգային ժողովը կոլեկտիվության և հապարակայնության պայմաններում քննարկում և լուծում է իր իրավասությանը վերապահված կարևորագույն հարցեր: Աշխատանքի նստաշրջանային կարգն ապահովում է պատգամավորների ընդհանուր կարծիքի դրսևորում, հետևաբար նաև՝ հարցերի հիմնավոր և ձշգրիտ, կոլեգիալության վրա հիմնված լուծում: Միայն նստաշրջանում է Ազգային ժողովն իրականացնում իր օրենսդրական գործառնությունը, ընտրում և նշանակում է Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնատար անձանց և այլն: Նստաշրջանների կանոնավոր հրավիրումն ապահովում է ներկայացուցչական օրենսդիր մարմնի նորմավորված գործունեությունը:

Սովորաբար պառլամենտը՝ որպես ներկայացուցչական մարմին, ինքն է կանոնակարգում իր գործունեությունը, սակայն խնդիրն ունի պատմական ակունքներ: Ժամանակին, երբ պառլամենտն ընդհանրում էր միապետության դեմ (դուալիստական միապետության շրջանում), գործադիր իշխանությունը պայքարում էր, որպեսզի պառլամենտի գործունեության ժամանակը սահմանափակվի, որպեսզի գոնե այդ միջոցով նա զերծ մնա պառլամենտական վերահսկողությունից և ձեռք բերի օրենսդրական գործունեություն իրականացնելու որոշակի լիազորություններ: Ըստ էության, դա միապետական իշխանության ձգտումն էր, որի արդյունքում պառլամենտն աշխատում էր «նստաշրջանային» կարգով, իսկ միջանկյալ փուլում գործադիր իշխանությունն իրավունք էր վերապահվում ընդունելու ժամանակավոր օրենսդրական ակտեր (դեկրետներ, օրդոնանսներ):

ներ):

Սակայն, ժամանակակից պառլամենտներին հաջողվեց հասնել աշխատանքի երկարատև գործընթացի հաստատման՝ սահմանելով կարճատև պառլամենտական արձակուրդներ: Մի շարք երկրներում կիրառությունից հանվեց նաև «նստաշրջան» տերմինը, քանի որ պառլամենտն աշխատում է անընդհատ և ի գործ է որոշել իր աշխատանքի կազմակերպման (ներառյալ արձակուրդների հարցերը):

Սոցիալիստական երկրներում պառլամենտի աշխատանքի տևողությունը խիստ սահմանափակ է. նստաշրջանները տարվա մեջ գումարվում են մեկ-երկու անգամ՝ մի քանի օր տևողությամբ: Չինաստանում, օրինակ, պառլամենտի հերթական նստաշրջանը սովորաբար տևում է տարեկան 2-3 շաբաթ:

Նախկին խորհրդային պետությունները հրաժարվեցին տարեկան մեկ-երկու անգամ հրավիրվող պառլամենտական նստաշրջանի ինստիտուտից՝ նախապատվությունը տալով պառլամենտական անընդհատ աշխատանքի ինստիտուտին (օրինակ ՌԴ Սահմանադրության 99-րդ հոդվածի համաձայն՝ Դաշնային ժողովը մշտական գործող մարմին է)²:

Նախկինում նստաշրջաններ գումարելու պառլամենտի իրավունքը միանշանակ պատկանում էր պետության ղեկավարին: Ներկայումս այդ սովորույթի գործողությունը զգալիորեն նվազել է, և պառլամենտները նստաշրջանները գումարում են մեծամասամբ իրենց հայեցողությամբ: Նկատելի է նաև կառավարության և պատգամավորական խմբերի ու խմբակցությունների կողմից նստաշրջաններ գումարելու հնա-

1 Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран, Отв. ред. Б. А. Страшун, М.: Изд. Бек, 1996, стр. 479:

2 Վլեդի մալրաճան տ»-ն Գրանկո Ի. Վ., Парламент России, М.: Изд-во АО Консалтбанкпир, 1999, стр. 127; Собрание законодательства Российской Федерации, М.: Изд-во Прогрес, 1995/50, стр. 469:

րավորության աճը: Այս դեպքում պետք է տարբերակել այն սուբյեկտներին, որոնց նախաձեռնությամբ գումարվում է նստաշրջանը՝ այն սուբյեկտներից, որոնք իրենք են գումարում նստաշրջանները: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է, որ նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երկրորդ երկուշաբթի օրը: Հոդվածի բովանդակությունից ենթադրվում է, որ Ազգային ժողովի նստաշրջան գումարելու սուբյեկտ է համարվում ինքը՝ Ազգային ժողովը: Իսկ, օրինակ, Ճապոնիայում պառլամենտական նստաշրջաններ գումարելու իրավունքը վերապահված է Կայսերը՝ Կաբինետի խորհրդով և համաձայնությամբ: Այստեղ Կայսրը հանդիսանում է որպես նստաշրջան գումարող սուբյեկտ¹:

Նստաշրջանի գումարումների թիվը և ստարբեր է բազմաթիվ երկրներում: Օրինակ՝ Ֆիլիպիններում անցկացվում է տարեկան մեկ նստաշրջան, և Սահմանադրության 15-րդ բաժնի 7-րդ հոդվածի համաձայն՝ Կոնգրեսը գումարվում է տարին մեկ անգամ՝ հուլիսի չորրորդ երկուշաբթի օրը, և աշխատում է իր կողմից սահմանված ժամկետով, բայց ոչ պակաս, քան 30 օր ընդմիջումով²: Սակայն ոչ բոլոր երկրներում է, որ պառլամենտին տրվում է իր հայեցողությամբ նստաշրջաններ հրավիրելու իրավունք: Օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված է, որ պառլամենտի նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ 120 օր տևողու-

1 Տե՛ս Чиркин В. Е. Конституционное право зарубежных стран, Учебник, М.: Изд-во Юристь, 1999, стр. 487; Сравнительное конституционное право, М.: Изд-во Прогресс, 1998, стр. 126:

2 Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран, Отв. ред. Б. А. Страшун, М.: Изд. Бек, 1996, չз 480:

թյամբ³:

ՀՀ օրենսդիր մարմնի իրավական կարգավիճակը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ, որտեղ ամրագրված են նրա իրավասությունները, փոխհարաբերությունները ՀՀ Նախագահի, Կառավարության և մի շարք այլ պետական հաստատությունների հետ: Սահմանադրությամբ նախատեսված են ԱԺ-ի կազմավորման և գործունեության կարգի հիմունքները, պատգամավորների իրավունքներն ու պարտավորությունները, գործունեության երաշխիքները, լիազորությունների դադարեցման հիմքերը և այլն: Սահմանադրությամբ նաև նախատեսված են Ազգային ժողովի նստաշրջանների գումարման հստակ ժամկետներ: ԱԺ-ի գործունեության մեջ իր նշանակությամբ և ծավալով առաջնայինը օրենսդրական գործառնություն է: ԱԺ-ի ընդունած օրենքներն օժտված են գերակայությամբ: ՀՀ Նախագահի, Կառավարության և պետական մարմինների ընդունած ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են ի կատարումն ՀՀ օրենքների և պետք է համապատասխանեն դրանց:

Ազգային ժողովի գործունեության իրականացման արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է նրա աշխատակազմի բանիմաց և ակտիվ աշխատանքով: «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի աշխատակազմը պետական կառավարչական հիմնարկ է, որն իրականացնում է անկախ մասնագիտական գործունեություն՝ Ազգային ժողովի լիազորությունների և գործառնությունների իրականացման ապահովման ուղղությամբ⁴:

3 Տե՛ս Конституции зарубежных стран, Под ред. Страшуна Б. А., М.: Изд-во Бек, 1996, стр. 114:

4 Ընդունվել է 04.12.2002թ., ուժի մեջ է մտել 26.12.2002թ.:

К ВОПРОСУ ОБ ОРГАНИЗАЦИИ И ДЕЯТЕЛЬНОСТИ
ЗАКОНОДАТЕЛЬНОГО ОРГАНА

БАГРАТ БАГРАТЯН

*Проректор по международному сотрудничеству и мировым связям
Ереванского экономико-юридического университета*

Согласно первой статье Конституции Республики Армения, Республика Армения является самоуправляемым, демократичным, социальным, правовым государством. Это определение охватывает все элементы, характеризующие современное развитое государство. Для обеспечения перечисленного государство устанавливает ряд принципов, которые гарантированы Конституцией и многочисленными нормами, закрепленными законами. Одним из таких принципов является принцип законности, гарантирующий идею правового государства. В условиях правового государства господствует воля народа, приоритет законов, отражающих интересы, государственные органы и должностные лица действуют согласно Конституции в рамках законов и предоставленных им полномочий, все равны перед законом и без дискриминации равно защищены законом. В условиях реализации и претворения в жизнь принципа законности важное место занимает принцип демократии, в условиях которой единственным источником и местом власти является народ.

ON THE ISSUE OF LEGISLATIVE BODY FORMATION AND ITS ACTIVITY

BAGRAT BAGRATYAN

*Vice Rector of International Cooperation and Public Relations,
Yerevan Economic and Juridical University*

According to Republic of Armenia Constitution 1st article RA is a sovereign, democratic, social and legal state. This definition comprises all the elements characterizing modern developed countries. To ensure all those features the states define a range of principles which are guaranteed by the Constitution and in many law norms. Principle of legality is among those norms, which acts for legal state idea. In the conditions of legal state the nation's will powers and state officials act according to Constitution and law within the premises of their authority. All the people are equal towards the law and are equally protected by the law.

ԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՅՈՒՅՑ

НАУЧНЫЙ КАЛЕНДАРЬ

SCIENTIFIC CALENDAR

Higher Education conferences worldwide

November 2015

4th

Create, Implement & Assess Climate Surveys On Safety & Sexual Assault: How To Analyze Data To Take Action online, United States of America

4th

Developing & Providing Integrated Student Services: Creating The One-Stop Shop For Students online, United States of America

5th

Supporting Women Veterans On Campus: How To Create & Implement A Program To Help Them Succeed online, United States of America

5th

Faculty & Staff Unions: Understanding The Contract, Building Relationships & Resolving Issues online, United States of America

6th

Fundamentals For Impacting Student Success, Retention & Completion online, United States of America

9th

Chartered Association of Business Schools Annual Conference 2015 Manchester, United Kingdom

10th

The 2nd MENA Higher Education Leadership Forum Abu Dhabi, United Arab Emirates

10th

National Aboriginal and Torres Strait Islander Education Conference 2015 Melbourne, Australia

10th

Telecommuting In Higher Education: How To Improve Services & Solve Space, Staffing & Financial Issues (3-Part Workshop) online, United States of America

10th

Leveraging Data & Analytics To Improve Your One-Stop Shop online, United States of America

10th

2015 International Conference on Education, Psychology, and Learning - Fall Session (ICEPL 2015-Fall) Nagoya, Japan

11th

Developing and Managing Competency-Based Education New Orleans, United States of America

12th

ICT for Language Learning 8th Edition Florence, Italy

12th

2015 International Conference on Knowledge Engineering and Applications (ICKEA 2015) Dubai, United Arab Emirates

12th

How To Increase Retention, Satisfaction & Performance In The Online Classroom online, United States of America

12th

Understanding The Battle Mind: Creating A One-Stop Support Center For Veterans On Campus online, United States of America

13th
Behavioral Intervention Teams and Title IX: Training, Reporting and Compliance online, United States of America

13th
International Conference on 21st Century Education 2015 Dubai, United Arab Emirates

13th
2015 Fall Global Conference on Education Los Angeles, United States of America

14th
2015 2nd International Conference on Distance Education and Learning - ICDEL 2015 Dubai, United Arab Emirates

15th
6th International Conference on Teaching, Education and Learning (ICTEL), 15-16, November, 2015, Singapore Singapore, Singapore

16th
Academic Probation: Leveraging Technology To Develop Strategic Interventions For At-Risk Students ONLINE, United States of America

16th
8th annual International Conference of Education, Research and Innovation (ICERI2015) Seville, Spain

17th
Beyond Technology Training: Preparing Faculty To Thrive In The Online Classroom online, United States of America

18th
Improving Student Success: Academic Advising & The Completion Agenda online, United States of America

18th
Online Orientation: Using Data To Drive Digital Decision-Making online, United States of America

19th
First Year Student Success: Integrating Advising, Teaching, & Learning online, United States of America

19th
OLC Collaborate Chicago, United States of America

19th
Education, Business and Social Sciences 2015 International Conference Washington DC, United States of America

19th
Moving From Probation To Graduation: 10 Strategies For Success online, United States of America

21st
International Conference On Sustainable Development (ICSD) 2015. Chittagong, Bangladesh

25th
11th QS-APPLE Melbourne, Australia

25th
International Conference on Social Science, Business, Literature and Education Rio de Janeiro, Brazil

26th
3rd Asian Conference on Multidisciplinary Research in Higher Education (ACMRHE 2015) Manila, Philippines

27th
Integrated South East Asian Research Conference on Higher Education Puerto Princesa City, Philippines

27th
2nd International Conference on Language, Innovation, Culture and Education (ICLICE) 2015 Singapore, Singapore

December 2015

1st
The 2015 International Conference Sustainable Development Education & Teaching in Paris Paris, France

1st
Motivating Faculty To Take Charge Of Their Professional Growth online, United States of America

1st
2nd QS Summer School Summit Kuala Lumpur, Malaysia

1st
Christmas Multidisciplinary Conference Freiburg, Germany

2nd
Legislative Advocacy For Community Colleges: Fostering Awareness, Advancement & Action online, United States of America

2nd
Addressing The Unique Needs Of Undocumented Students: How Recent Policy Changes Affect College Access online, United States of America

3rd
The CRA's Fifteenth Annual Residential Seminar - PDP, HEAR, Open Badges, Eportfolio, Employability Sheffield, United Kingdom

3rd
The Creativity Workshop in Dubai - December 3 - 5, 2015 Dubai, United Arab Emirates

3rd
FYE Course Assessment: Transforming Your First-Year Students' Behaviors & Attitudes online, United States of America

3rd
One Stop Shop For Student Services: Planning, Design & Construction online, United States of America

7th
The 2015 International Advance Innovation Education & Teaching Research Conference in London London, United Kingdom

7th
International Conference and Workshop on New Modes in Teaching and Management Technology in Higher Education Toronto, Canada

7th
Career Services: Measuring and Communicating Student Outcomes Phoenix, United States of America

9th
Education, Leadership, Humanities, and Art 2015 International Conference Washington DC, United States of America

9th
Converging Concepts in Global Higher Education Research: Local, national and international perspectives Newport, United Kingdom

9th
Measuring Academic Program Cost and Demand for Improved Resource Allocation Orlando, United States of America

12th
3rd International Conference on Language, Education and Innovation (ICLEI) 2015 Bali, Indonesia

14th
2015 3rd International Conference on Behaviours, Education and Psychology (ICBEP 2015) New York, United States of America

19th
9th International Conference on Teaching, Education and Learning (ICTEL), 19-20 December, Thailand Bangkok, Thailand

20th
The Second Asian Symposium on Education, Equity and Social Justice - EQUIS 2015 Hiroshima, Japan

21st
International Conference on Innovation in Arts, Social Science, and Education New York, United States of America

28th
International Conference on Social Science, Literature, Business and Education Dubai, United Arab Emirates
29th
8th International Conference on Teaching, Education and Learning (ICTEL), 29-30, December 2015, Kuala Lumpur Kuala Lumpur, Malaysia

January 2016

1st
Asian Education, Training and Research Conference Dhaka, Bangladesh
2nd
International Conference on Humanities, Literature and Education Bangkok, Thailand
3rd
2016 International Business Conference in Orlando, FL Orlando, United States of America
3rd
2016 International Education Conference in Orlando, FL Orlando, United States of America
4th
Bangkok 2nd International Conference on “ Business, Economics, Social Science & Humanities- BESSH-2016” January 4-5, 2016 Bangkok, Thailand Bangkok,Thailand
4th
2016 2nd International Conference on Knowledge Engineering (ICKE 2016) Los Angeles, United States of America
4th
CAPSTONE BUSINESS SIMULATION Workshop - 4th to 6th Jan '16 HYDERABAD, India
4th
2016 4th International Conference on Information and Education Technology (ICIET 2016) Los Angeles, United States of America
9th
2016 7th International Conference on E-Education, E-Business, E-Management and E-Learning- IC4E2016 Penang, Malaysia
12th
Asian American Conference for Academic Disciplines (Singapore 2016) Singapore, Singapore
12th
International Conference on Arts, Social Science, Business and Education Toronto, Canada
13th
2016 Taiwan International Conference on Education and Psychology (ICEP 2016) Taipei, Taiwan
18th
International Conference on Arts, Social Science, Business and Education Orlando, United States of America
18th
Asian American Conference for Academic Disciplines (Chiang Mai, Thailand 2016) Chiang Mai, Thailand
21st
Enhancing Student Mental Wellbeing in Higher Education London, United Kingdom
29th
2016 Winter Global Business Research Symposium Los Angeles, United States of America
30th
Fourth International Conference on Language, Literature, Culture and Education 2016 Kuala Lumpur, Malaysia

February 2016

2nd
International Conference on E-Governance, Law and Education (EGLE-16) Feb. 2-3, 2016 Bali

(Indonesia) Bali, Indonesia
3rd
2016 3rd International Conference on Education and Psychological Sciences - ICEPS Florence, Italy
5th
2016 Winter Global Education Conference Los Angeles, United States of America
5th
Strategic Business Management & Economic Research Conference Washington DC, United States of America
8th
CALL FOR PAPERS: INTCESS-2016 - 3rd International Conference On Education And Social Sciences Istanbul, Turkey
9th
IISES 21st International Academic Conference , Miami Miami, United States of America
10th
International Conference on Social Science, Literature and Education Boston, United States of America
11th
IUNC North America 2016 - The 2nd Annual International Universities Networking Conference + Edu Agency Workshop Miami, United States of America
11th
1st International Conference on Educational Theory and Research – ICETR 2016: Transitions in Higher Education Izmir, Turkey
11th
International Conference on Recents Trends and Challenges in Computational Models Tindivanam, India
12th
2016 Winter Global Technology Management Symposium Los Angeles, United States of America
17th
The 2016 European Sustainable Development on Education Research Conference in London London, United Kingdom
22nd
Sex and the Academy Ghent, Belgium
23rd
10th International Conference on Teaching, Education and Learning (ICTEL), Dubai, 23-24 February, 2016 Dubai, United Arab Emirates
24th
Safe Campus - The National Campus Safety Summit Las Vegas, United States of America
24th
International Conference on Education, Language and Psychology (ELAP), 24-25 February 2016, Dubai Dubai, United Arab Emirates
26th
International Conference on Social Science, Literature and Education Singapore, Singapore
26th
2016 5th International Conference on Education and Management Innovation - ICEMI Taichung, Taiwan
26th
2016 Winter Global Online/Distance Education Symposium Los Angeles, United States of America

ՍԱՆԿՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՍԱԿԵՆԴԻՐՆԵՐ

Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես

ПРОБЛЕМЫ ПЕДАГОГИКИ И ПСИХОЛОГИИ

Научное периодическое издание межвузовского консорциума

MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGY

Scientific Periodical of INTERCOLLEGIATE CONSORTIUM

3

Համարի թողարկման պատրասխանարու և

գլխավոր խմբագիր՝

ՆԱԻՐԱ ՀԱԿՈՒԲՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՅԱՆԻ

Մրբագրիչ՝

ԿԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հանձնված է տպագրության՝ 09.10.2015 թ.
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70 × 100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 12,5 տպ. մանուկ
Տպաքանակը՝ 150

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճեն՝ (+37410) 23 25 95
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am